Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Ա. ՆԱՁԱՐՅԱՆ, Ռ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՀԱՄԱՀԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀՐԶԱՆ

9

ՄԱՍ 2

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Ա. ՆԱՋԱՐՅԱՆ, Ռ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՀԱՄԱՀԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
•
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀՐՁԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մաս 2

Վերահրատարակություն

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2019

Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ՀՏԴ 373.5:93/94(075.3)
ԳՄԴ 63.3g72
Ս 887

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
Ալբերտ Ստեփանյան. պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր
(ներածություն, §§ 13–14, 26, 27)
Արամ Նազարյան. պատմագիտության թեկնածու
(§§ 15–20, 22, 23, I–III բաժինների ամփոփումներ)
Ռուբեն Սաֆրաստյան. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
(§§ 21, 24, 25)

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԵՂԻՆԱԿ՝
Արմինե Սարգսյան. պատմաբան, մանկավարժ
(մեթոդական ապարատ,
ամփոփիչ ժամանակագրություն, բառարան)

Ստեփանյան Ա.
Ս 887 **ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ**: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 9-րդ դասարանի համար/ Ա. Ստեփանյան, Ա. Նազարյան, Ռ. Սաֆրաստյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2019.
Մաս 2.— 96 էջ:

ՀՏԴ 373.5:93/94(075.3)
ԳՄԴ 63.3 g72

ISBN 978-9939-68-714-8

© «Զանգակ-97» ՍՊԸ, 2019
© Հեղինակներ, 2019
© ԴՏՀՏԾՀ, 2019

Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

ԴԱՍԱԳՐՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆԿԱՐՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Շապիկի առաջին էջին՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստերի դահլիճը: Երկիր մոլորակը՝ համայն մարդկության բնօրրանը, տիեզերքից
Շապիկի չորրորդ էջին՝ Եվգենի Վուչետիչի «Վերակոփենք սրերը արորների» քանդակը Նյու Յորքում ՄԱԿ-ի շենքի դիմաց

էջ 79՝ Patrick Gruban, էջ 80(1)՝ coldwar.ru, էջ 80(2)՝ sbj-bg.eu, էջ 82(1)՝ Unknown, էջ 82(2)՝ Cantus, էջ 83՝ Unknown (Bundesarchiv), էջ 86՝ Unknown, էջ 87՝ Office of War Information, էջ 88(1)՝ Marion S. Trikosko, էջ 88(2)՝ Amux, էջ 88(3)՝ Davide Mauro, էջ 90՝ computerra.ru, էջ 91՝ Junge, Heinz, էջ 92՝ luxfon.com, էջ 93՝ vokrugsveta.ru, էջ 95՝ Vladimir Vyatkin, էջ 96՝ A. Solomonov, էջ 97(1)՝ azatutyun.am, էջ 97(2)՝ svoboda.org, էջ 98՝ Yuriy Ivanov, էջ 102՝ panoramio.com, էջ 103՝ coldwar.ru, էջ 104՝ SSGT F. LEE CORKRAN, էջ 105՝ europalibera.org, էջ 108(1)՝ Alberto Korda, էջ 108(2)՝ m.slovari.yandex.ru, էջ 110՝ tribunodelpopolo.com, էջ 112(1)՝ zaman.com.tr, էջ 112(2)՝ taz.de, էջ 113՝ stopfundamentalism.com, էջ 114(1)՝ حسن شاه, էջ 114(2)՝ مولى جهان, էջ 116՝ Khaled Elfiqi, էջ 118՝ wallvever.com, էջ 119՝ Zhang Zhenshi, էջ 120(1)՝ unknown, էջ 120(2)՝ city-stories.ru, էջ 121՝ hd-wallpapers9.com, էջ 123(1)՝ Wilfried Huss, էջ 123(2)՝ Steve Cadman, էջ 125՝ cscehistory.wordpress.com, էջ 126(1)՝ zabinok.livejournal.com, էջ 126(2)՝ Marks, էջ 127՝ Unknown, էջ 131՝ NASA, էջ 133՝ Zscout370, էջ 135(1)՝ UpstateNYer, էջ 135(2)՝ Pete Souza, էջ 136(1)՝ Jean-Marc Ayrault, էջ 136(2)՝ Unknown, էջ 136(3)՝ RudolfSimon, էջ 139՝ Russian Presidential Press and Information Office, էջ 140(1)՝ Hanna Zelenko, էջ 140(2)՝ Denelson83, էջ 141՝ focus.ua, էջ 142(1)՝ podrobnosti.ua, էջ 142(2)՝ smigid.ru, էջ 144(1)՝ marietta amarcord, էջ 144(2)՝ unknown, էջ 145՝ Jason Epperson, էջ 146՝ Peter Morgan, էջ 147՝ bigpicture.ru, էջ 149՝ Paste Berlusconi, էջ 150՝ dom007.com, էջ 151՝ Sarah Wright, էջ 152՝ envacapstone.wiki.usfca.edu, էջ 154(1)՝ National Cancer Institute, էջ 154(2)՝ Dirl, էջ 155(1)՝ cocteil.blogspot.com, էջ 155(2)՝ beginnerschool.ru, էջ 156(1)՝ forskning.no, էջ 156(2)՝ NASA, էջ 156(3)՝ macdigger.ru, էջ 156(4)՝ rebelpilot, էջ 157(1)՝ Uldis Bojars, էջ 157(2)՝ blaqswans.org, էջ 158՝ Vgabdulin, էջ 159՝ m.slaq.am, էջ 160(1)՝ music.edusite.ru, էջ 160(2)՝ Hiller Herman, էջ 161(1)՝ Von Urban, էջ 161(2)՝ Arshile Gorky, էջ 162(1)՝ cocteil.blogspot.com, էջ 162(2)՝ itenerant.diary.ru

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Ձևավորումը և շապիկը՝ Գրիգորի Հարությունյանի
Սրբագրիչ՝ Լուսինե Դավթյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 6 տպ. մամուլ
Տառատեսակը՝ «GHEA AspetScool»: Պայմանագիր՝ 03/Հ-19: Տպաքանակը՝ 26 175

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՇԽԱՐՀԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

13 ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀԱՐԻ ԹՐՈՒՄԱՆ
(1884–1972)

ԱՄՆ-ի 33-րդ նախագահը (1945–1953), սառը պատերազմի նախաձեռնողներից

Երկրևեռ աշխարհի ձևավորումը

Երկրորդ աշխարհամարտից հետո, հակառակ դաշնակիցների հավաստիացումներին, աշխարհը չմիավորվեց ժողովրդավարական արժեքների շուրջ: ԽՍՀՄ-ը 1944–1945 թթ. ռազմակալել էր Արևելյան Եվրոպայի երկրները՝ Ռումինիա, Բուլղարիա, Լեհաստան, Հունգարիա, Չեխոսլովակիա, Արևելյան Գերմանիա: Նրա ազդեցության տակ հայտնվեց նաև Հարավսլավիան: Մոսկվայի ճնշման ներքո դրանցում 1945–1949 թթ. ստեղծվեցին համայնավարական վարչակարգեր: ***Այսպես կազմավորվեց «սոցիալիստական ճամբարը»***:

- *Հատկապես վիճահարույց էր Գերմանիայի հիմնախնդիրը: Դաշնակիցների ռազմակալած չորս գոտիները պետք է միավորվեին և կազմեին նոր՝ ժողովրդավարական Գերմանիա: Սակայն այդ ծրագիրը չիրագործվեց: Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը և Ֆրանսիան իրենց գոտիները միավորեցին և ստեղծեցին Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը (Արևմտյան Գերմանիա): ԽՍՀՄ-ն էլ իր գոտու հիման վրա ձևավորեց Գերմանիայի ժողովրդավարական Հանրապետությունը (Արևելյան Գերմանիա): Բաժանվեց նաև Բեռլինը: Հետագայում (1961 թ.) կառուցվեց Բեռլինի սահմանաբաժան պատը՝ սառը պատերազմի խորհրդանիշը:*

Ու. Չերչիլը ԱՄՆ Ֆուլտոն քաղաքում 1946 թ. մարտի 5-ին՝ հայտնի ելույթի ժամանակ

Արևմտյան քաղաքական գործիչները սկսեցին խոսել Եվրոպային սպառնացող խորհրդային վտանգի մասին: Առաջինը ***Ու. Չերչիլն էր: 1946 թ.*** իր ճառերից մեկում նա մեղադրեց ԽՍՀՄ-ին *«Եվրոպայի կենտրոնում երկաթե վարագույր քաշելու և Արևելյան Եվրոպան մնացյալ աշխարհից կտրելու մեջ»*: Նա առաջ քաշեց ***«բոլոր միջոցներով խորհրդային տերության զսպման» գաղափարը***: ***Նրան շարունակեց ԱՄՆ-ի նախագահ Հարի Թրու-***

5 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

մանը՝ օգնություն խոստանալով այն երկրներին, որոնց սպառնում էր «խորհրդային վտանգը»:

Ձևավորվեց երկու բևեռ: Մեկը ներկայացնում էին արևմտյան ժողովրդավարական երկրները, մյուսը՝ արևելյան համայնավարական երկրները: ***Նրանք համախմբված էին երկու գերտերության շուրջ՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի***: Ընթանում էր սուր պայքար, որն անվանեցին ***սառը պատերազմ***: Այն ***տևել է*** մի ամբողջ ժամանակաշրջան՝ ***45 տարի***:

Գերտերությունների միջև տեղի չէին ունենում ուղղակի ռազմական բախումներ: Ընթանում էր տևական, անզիջում և հյուծիչ մրցակցություն բոլոր ասպարեզներում՝ տնտեսական, ռազմական, դիվանագիտական, գաղափարախոսական: Երբեմն կողմերը հայտնվում էին Երրորդ աշխարհամարտի եզրին: Սակայն նրանց զսպում էր միջուկային զենքի առկայությունը՝ ունակ ոչնչացնելու ողջ մարդկությունը: ***Ժամանակակիցներն այս վիճակը բնութագրում էին այսպես՝ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն»***:

Մարշալի պլանը և ՏՓԽ-ն

Երկրորդ աշխարհամարտից հետո Եվրոպան կրկին տնտեսական փլուզման վիճակում էր: Ավերվել էին հազարավոր քաղաքներ և արդյունաբերական կենտրոններ, քայքայվել էր գյուղատնտեսությունը, տարածված էր սովը: Այդ պայմաններում համայնավարները կարող էին անցնել իշխանության. անհանգստացնող էր դրությունը հատկապես Իտալիայում և Ֆրանսիայում:

ԱՄՆ-ի պետքարտուղար Ջորջ Մարշալը մշակեց Արևմտյան Եվրոպայի երկրներին ֆինանսական օգնություն հատկացնելու ***ծրագիր***: ***1947 թ. ընդունված այդ ծրագրով, որ հայտնի է Մարշալի պլան անունով, երեք տարվա ընթացքում Եվրոպայի 16 երկրներ 12,4 միլիարդ դոլարի օգնություն ստացան***:

Արդյունքները զոհացուցիչ էին: Արդեն ***1952 թվականին Արևմտյան Եվրոպան գերազանցեց նախապատերազմյան մակարդակը շուրջ 1,3 անգամ***: Ասվածին հավելենք, որ Մարշալի պլանը հույժ օգտակար էր նաև ԱՄՆ-ի համար:

Հատված Չերչիլի 1946 թ. մարտի 5-ի ճառից

Երկաթե վարագույր է իջել մայրցամաքի [Եվրոպայի] վրա: Այդ գծից այն կողմ պահվում են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հնագույն պետությունների բոլոր գանձերը: Վարշավան, Բեռլինը, Պրահան, Վիեննան, Բուդապեշտը, Բելգրադը, Բուխարեստը, Սոֆիան խորհրդային գոտում են... Գնալով համայնավարները մեծացող վտանգ են ներկայացնում քրիստոնեական աշխարհի համար...
Եթե Ազգերի համագործակցության անգլիախոս բնակչությանը ավելացնենք ԱՄՆ-ը և հաշվի առնենք, թե ինչ կնշանակի նման համագործակցությունը ծովում, օդում, գիտության և արդյունաբերության բնագավառում, ապա գոյություն չի ունենա ուժերի ոչ մի երերուն և վտանգավոր հարաբերակցություն:

6 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

ՋՈՐՋ ՄԱՐՇԱԼ
(1880–1959)

ԱՄՆ–ի ռազմական և քաղաքական գործիչ: Նախագահ Ֆ. Ռուզվելտի ռազմական խորհրդականն էր, իսկ 1947–1950 թթ.՝ ԱՄՆ–ի պետքարտուղարը: Մշակել է Եվրոպայի վերականգնման ծրագիրը: Այն հայտնի է որպես Մարշալի պլան:
Նպատակն էր օգնել եվրոպական երկրներին՝ վերականգնելու բայքայված տնտեսությունը և նրանց հետ պահելու հասարակական ցնցումներից: Հավատացած էր, որ միայն այդ ճանապարհով կարելի է կանգնեցնել ԽՍՀՄ–ի ծավալումը:
Արժանացել է խաղաղության Նոբելյան մրցանակի:

Ի պատասխան Մարշալի պլանի՝ ***ԽՍՀՄ–ը 1949 թ. ստեղծեց Տնտեսական փոխօգնության խորհուրդ (ՏՓԽ)***: Այն ընդգրկում էր Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները: Նպատակն էր միավորել նրանց տնտեսությունները և ապահովել արագ զարգացում: Խորհրդի կազմում հետագայում ընդգրկվեցին նաև ոչ եվրոպական մի շարք երկրներ: Կառույցն ամբողջությամբ Մոսկվայի վերահսկողության ներքո էր:

ՆԱՏՕ–ն և Վարշավյան դաշինքը

Երկու հակադիր բևեռների պայքարը հատկապես անգիջում էր ռազմական ասպարեզում: Նրանք ստեղծեցին իրենց ***ռազմական խմբավորումները***:

Առաջին քայլն արեց Արևմուտքը: Նա զգում էր խորհրդային վտանգից պաշտպանվելու անհրաժեշտությունը: ԱՄՆ–ի նախաձեռնությամբ ***1949 թ. հիմնվեց Հյուսիսատլանտյան դաշինքը՝ ՆԱՏՕ–ն*** (անգլերեն՝ North Atlantic Treaty Organization): Բացի ԱՄՆ–ից՝ դրա մեջ մտան Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Կանադան, Բելգիան, Նիդերլանդները, Դանիան, Իսլանդիան, Լյուքսեմբուրգը, Նորվեգիան, Պորտուգալիան, հետագայում նաև Հունաստանը, Թուրքիան, Արևմտյան Գերմանիան և Իսպանիան:

Դրան ի պատասխան՝ ***սոցիալիստական բևեռը 1955 թ. հիմնեց Վարշավյան դաշինքը***: Նախաձեռնողը

ՆԱՏՕ–ի երկրների նիստը

7 von 99 12.02.2021, 11:37

Վարշավյան դաշինքի երկրների նիստը

ԽՍՀՄ-ն էր: Դաշինքի մեջ, բացի ԽՍՀՄ-ից, մտնում էին Բուլղարիան, Չեխոսլովակիան, Հունգարիան, Լեհաստանը, Ռումինիան և Արևելյան Գերմանիան:

Երկու գերտերությունները ստեղծում և փորձարկում էին սովորական և միջուկային զենքի նորանոր տեսակներ՝ տանկեր, հրթիռներ, ատոմային սուզանավեր, գերձայնային ինքնաթիռներ: Ռազմական (հետախուզա-

ՆԱՏՕ-ի և Վարշավյան դաշինքի երկրները

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

կան) նպատակներով սկսեցին օգտագործել նաև տիեզերանավերը: Այնքան մեծ էր դրանց ավերիչ ուժը, որ կողմերը հրաժարվեցին մեծ պատերազմ սանձազերծել: Դա չէր նշանակում, թե նրանք հրաժարվել էին համաշխարհային տիրապետության ձգտումներից: Միմյանց զսպելու համար կողմերը դիմում էին «տեղական նշանակության» պատերազմների Հեռավոր Արևելքում, Մերձավոր Արևելքում, Աֆրիկայում և այլուր՝ ձգտելով հյուծելու միմյանց:

Ասվածին հավելենք, որ ՆԱՏՕ–ն գործում է առ այսօր, իսկ Վարշավյան դաշինքը 1991 թ. լուծարվել է:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ Արևելյան Եվրոպայի երկրները հայտնվեցին Խորհրդային Միության ազդեցության ոլորտում:
2. Ինչպե՞ս են ձևավորվել գերմանական երկու պետությունները:
3. Ի՞նչ է սառը պատերազմը: Ե՞րբ է այն սկսվել: Ո՞ւմ ելույթը նշանավորեց դրա սկիզբը: Ո՞ր ասպարեզներում այն դրսևորվեց:
4. Որո՞նք էին աշխարհի երկու բևեռները: Ովքե՞ր էին գլխավորում դրանք:
5. Ի՞նչ է Մարշալի պլանը: Ներկայացրե՛ք դրա արդյունքները:
6. Ե՞րբ է ստեղծվել ՏՓԽ–ն և ի՞նչ նպատակով:
7. Ե՞րբ են ստեղծվել ՆԱՏՕ–ն ու Վարշավյան դաշինքը: Ո՞ր երկրներն էին ընդգրկված դրանց կազմում:

Գործնական աշխատանք

Ինքնուրույն կազմե՛ք և ներկայացրե՛ք ՆԱՏՕ–ն և Վարշավյան դաշինքը գծապատկերով:

Նոր հասկացություններ, անուններ, տերմիններ

Սառը պատերազմ, «խորհրդային վտանգ», «բոլոր միջոցներով խորհրդային տերության զսպում», «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն», երկբևեռ աշխարհ, սոցիալիստական ճամբար, «երկաթե վարագույր», Հարի Թրուման, Մարշալի պլան, ՏՓԽ, ՆԱՏՕ, Վարշավյան դաշինք

9 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

14 ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Զարգացման առանձնահատկությունները

Երկրորդ աշխարհամարտից հետո մարդկությունն աստիճանաբար անցում կատարեց դեպի հետարդյունաբերական հասարակություն: Մարդկության տնտեսական և սոցիալ–մշակութային զարգացման գլխավոր շարժիչ ուժ էին դառնում նոր գիտական գաղափարները և տեխնոլոգիաները: Դրանք էապես վերափոխում էին ինչպես արտադրության, այնպես էլ առտնին կյանքի հիմնական բաղադրիչները:

Ի հայտ եկան էներգիայի նոր աղբյուրներ, սինթեզվեցին նոր նյութեր: Ստեղծվեցին տրանսպորտի նոր միջոցներ: Միջազգային համագործակցությունը տնտեսության տարբեր ասպարեզներում ստացավ համընդհանուր բնույթ:

Արևմուտքի զարգացած երկրներում այս տեղաշարժերն ուղեկցվում էին ժողովրդավարության հետագա խորացմամբ: ***Մարդու իրավունքների պաշտպանությունը ճանաչվեց որպես հիմնական խնդիր:*** Հարկավ, այս ամենը կատարվում էր պահպանողական ուժերի դիմադրության պայմաններում: Սակայն առաջընթացն այլընտրանք չուներ:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Հետպատերազմյան տարիներին ***ԱՄՆ–ը դարձավ Արևմուտքի առաջատար տերությունը:*** Երկրում ձեռնարկվեցին տնտեսության վերակառուցման վճռական քայլեր: Այս ճանապարհին կային մի շարք դժվարություններ: Դրանցից առաջնայինը պետության դերի նվազեցումն էր և ազատ շուկայական տնտեսության վերականգնումը:

Վերացվեց պետության վերահսկողությունը արտադրության և շուկայի նկատմամբ: Սահմանափակվեցին

10 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

ՌՈՆԱԼԴ ՌԵՅԳԱՆ
(1911–2007)

Ականավոր պետական գործիչ, Հանրապետական կուսակցության ղեկավարներից: ԱՄՆ–ի 40–րդ նախագահը (1981–1989): Եղել է կինոդերասան, մարզական մեկնաբան, արհմիութենական գործիչ: Ավելի ուշ զբաղվել է քաղաքականությամբ՝ ցուցաբերելով մեծ ընդունակություններ: Ընտրվել է Կալիֆոռնիայի նահանգապետ: Նախագահության ընթացքում իրագործել է բարեփոխումներ՝ իջեցրել է հարկերը, ընդլայնել սոցիալական ապահովագրությունը, զարգացրել կրթական համակարգը:
ԽՍՀՄ–ի նկատմամբ ունեցել է կոշտ կեցվածք՝ համարելով նրան «չարիքի կայսրություն»: Պարտադրել է նրան լարված մրցակցություն թե՛ ռազմական, թե՛ տնտեսական, թե՛ գաղափարախոսական ասպարեզներում:

պետական հարկերը: Տնտեսությունը սկսեց ազատ զարգանալ: ***1950–1980–ական թթ. երկրի համախառն արտադրանքն ավելացավ շուրջ հինգ անգամ***:

Կառավարությունը վարում էր հասարակ ամերիկացիների դրությունը բարելավելու քաղաքականություն: Ստեղծվեցին առողջապահության, կրթության, սոցիալական ապահովության համազգային հիմնադրամներ: Հասարակությունը կամաց–կամաց վերագտավ ապագայի նկատմամբ վստահությունը:

Սակայն առկա էին նաև լուրջ խնդիրներ: ***Կար գործազրկություն, որը տարածված էր հատկապես սևամորթների*** շրջանում: Շատ նահանգներում նրանք իրավունք չունեին սպիտակամորթների հետ աշխատելու նույն վայրում, հաճախելու նույն դպրոցը, նստելու նույն տրամվայը: Դա տեղիք տվեց սևամորթների շարժմանը, որը տևեց քսանհինգ տարի: Ի վերջո հաղթեց առողջ բանականությունը. ***ընդունվեցին օրենքներ, որոնք վերջ դրեցին ռասայական խտրականությանը***: Ամերիկյան ազգը վերագտավ իր միասնությունը:

Ինչպես նշել ենք, ԱՄՆ–ի և ԽՍՀՄ–ի մրցակցությունն ընթանում էր բոլոր ասպարեզներում, հատկապես՝ ռազմական: Սանձազերծվում էին «տեղական պատերազմներ»՝ Չինաստան, Կորեա, Վիետնամ: Սուր էին հակասությունները Կուբայի շուրջ: Դրանք այնքան բորբոքվեցին, որ ***1962 թ. աշխարհը հայտնվեց միջուկային պատերազմի եզրին***: Սակայն կողմերն ընկրկեցին:

ԱՄՆ–ի և ԽՍՀՄ–ի մրցակցությունն իր հանգուցալուծմանը մոտեցավ 1980–ական թթ.: Երկրի նախագահ Ռ. Ռեյգանը (1981–1989 թթ.) համախմբեց իր դաշնակիցներին և ԽՍՀՄ–ին պարտադրեց մրցակցության ավելի ծանր պայմաններ: ԽՍՀՄ–ը չդիմացավ և շուտով փլուզվեց:

Եվրոպայի առաջատար երկրները

Ֆրանսիա: Հետպատերազմյան տարիներին այս երկրի թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցան արմատական տեղաշարժեր: Դրանք կապված էին ***նախագահ Շառլ դը Գոլի (1958–1969 թթ.)*** անվան հետ: Նա փոխեց երկրի սահմանադրությունը՝ ընդլայնելով նախագահի լիազորությունները: Անցկաց-

11 von 99 12.02.2021, 11:37

րեց տնտեսական բարեփոխումներ: Շնորհիվ նորագույն տեխնոլոգիաների ներդրման՝ Ֆրանսիան առաջատար դարձավ էլեկտրոնիկայի, մեքենաշինության, ատոմային էներգետիկայի և այլ ասպարեզներում:

Ֆրանսիան սկսեց վարել ինքնուրույն արտաքին քաղաքականություն: Ճանաչեց Հյուսիսային Աֆրիկայի իր վերջին գաղութների (Ալժիր, Թունիս) անկախությունը: Բարելավեց հարաբերությունները ԽՍՀՄ-ի և Չինաստանի հետ: Ստեղծեց սեփական ատոմային զենքը և որոշ ժամանակով մեկուսացավ ՆԱՏՕ-ից:

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Արևմտյան Գերմանիա): Այս պետությունը 1955 թ. անդամակցեց ՆԱՏՕ-ի ռազմական դաշինքին: ***1973 թ. դարձավ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) անդամ***:

Ամերիկյան օգնությունը Արևմտյան Գերմանիային հնարավորություն տվեց վերականգնելու և զարգացնելու իր տնտեսությունը: Արդեն ***1970-ական թթ. տնտեսական ցուցանիշներով նա առաջինն էր Եվրոպայում***: Նա սկսեց բարելավել իր հարաբերությունները ԽՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ:

Երկրի խոշորագույն պետական գործիչներից էր ***Հելմուտ Քոլը***: Նրա վարչապետության տարիներին (1982-1989 թթ.) Արևմտյան Գերմանիան հեղինակություն էր ողջ աշխարհում: ***Գերմանիան 1990 թ. վերամիավորվեց***: Նրա առաջին վարչապետ դարձավ նույն Հ. Քոլը:

Մեծ Բրիտանիա: 1950-1980-ական թթ. այս երկրի համար փորձության տարիներ էին: Նա նույնպես վերակառուցեց իր քայքայված տնտեսությունը՝ օգտվելով ԱՄՆ-ի օգնությունից: Հետագայում ***սկսվեց բուռն զարգացումը տնտեսության ինչպես ավանդական, այնպես էլ նոր ուղղություններում***:

Քաղաքական կյանքում շարունակում էին գերիշխել ***պահպանողական և լեյբորիստական կուսակցությունները***: Բարելավվեցին ազգաբնակչության կենսապայմանները:

Սակայն Մեծ Բրիտանիան ուներ իր առանձնահատուկ խնդիրները՝ կապված գաղութային համակարգի փլուզման հետ: 1940-1960-ական թթ. անկախության

ՇԱՌԼ ԴԸ ԳՈԼ
(1890-1970)

Ֆրանսիայի մեծագույն քաղաքական և ռազմական գործիչներից: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ չհամաձայնեց Ֆրանսիայի անձնատվության հետ, հեռացավ Լոնդոն և կազմակերպեց «Ազատ Ֆրանսիա» դիմադրության շարժումը: Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը, ԽՍՀՄ-ը ճանաչեցին նրա՝ «վտարանդիական կառավարությունը»: Ֆրանսիայի ազատագրումից հետո՝ 1944-1946 թթ., ղեկավարել է ժամանակավոր կառավարությունը:
Երկու անգամ ընտրվել է նախագահ: Ընդունել է նոր սահմանադրություն, զարկ տվել տնտեսությանը, բարձրացրել երկրի միջազգային հեղինակությունը:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

ՄԱՐԳԱՐԵՏ ԹԵՏՉԵՐ (1925–2013)

Մեծ Բրիտանիայի առաջին կին վարչապետը, ստացել է «Երկաթյա լեդի» պատվանունը: Ավարտել է Օքսֆորդի համալսարանը, մասնագիտությամբ՝ քիմիկոս, ապա նաև՝ փաստաբան: Պահպանողական կուսակցության աչքի ընկնող առաջնորդներից էր: 1979 թ. դարձել է վարչապետ, ապա երկու անգամ վերընտրվել այդ պաշտոնում: Իրականացրել է տնտեսական և քաղաքական բարեփոխումներ, բարելավել երկրի ֆինանսական համակարգը, մասնավորեցրել պետական ձեռնարկություններ և այլն: Նրա օրոք վերականգնվեց երկրի միջազգային հեղինակությունը:

ուղին բռնեցին Ասիայի և Աֆրիկայի բրիտանական շատ գաղութներ: Ճիշտ է՝ նրանց մեծ մասին հաջողվեց միավորել Ազգերի բրիտանական համագործակցության մեջ, բայց դա պահանջեց մեծ ջանքեր:

Սառը պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիան որդեգրել էր շեշտված հակախորհրդային պահվածք: ***Նա «յուրահատուկ դաշնակցային հարաբերություններ» հաստատեց և այժմ էլ ունի ԱՄՆ–ի հետ***:

Երկրի նորագույն պատմության մեջ նոր էջ բացվեց ***Մարգարետ Թեթչերի*** վարչապետության տարիներին ***(1979–1990 թթ.)***: ***«Երկաթյա լեդիի»***, ինչպես անվանում էին նրան, ճկուն և հավասարակշիռ քաղաքականությունն ապահովեց երկրի հետագա զարգացումը:

Իտալիա: Երկրորդ աշխարհամարտի հետևանքով Իտալիան տարածքային կորուստներ ունեցավ հօգուտ Ֆրանսիայի, Հարավսլավիայի և Հունաստանի: ***1946 թ. անցկացված հանրաքվեով երկրում հռչակվեց հանրա-***

Իտալական «տնտեսական հրաշքի» խորհրդանիշերից երկուսը՝ «Ֆիատ–500» ավտոմոբիլն և նավթաքիմիական գործարանը

13 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

պետություն: Ընդհուպ մինչև 1990-ական թթ. սկիզբը Իտալիայի քաղաքական դաշտում իշխում էր Քրիստոնեադեմոկրատական կուսակցությունը:

Տնտեսության վերականգնման համար Իտալիան օգնության կարիք էր զգում: Մարշալի պլանի շրջանակներում Իտալիան տնտեսական և ֆինանսական խոշոր աջակցություն ստացավ: ***Արդյունքում՝ Իտալիան 1950-1960-ական թթ. «տնտեսական հրաշք» արձանագրեց***: Երկիրը սկսեց ակտիվ դերակատարում ունենալ Եվրոպայի միաանացման գործընթացներում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Արևմուտքի տնտեսական ու քաղաքական զարգացման առանձնահատկությունները:
2. Զարգացման ինչ ուղիով ընթացավ ԱՄՆ-ը հետպատերազմյան տարիներին: Ինչ խնդիրներ էին ծառացած հասարակության առջև:
3. Ինչ փոփոխություններ կատարվեցին Ֆրանսիայում Շառլ դը Գոլի նախագահության տարիներին:
4. Որոնք էին Արևմտյան Գերմանիայի տնտեսական զարգացման նախադրյալները: Ո՞վ էր Հ. Քոլը, ինչո՞վ է հայտնի:
5. Հետպատերազմյան տարիներին ինչ խոչընդոտներ էր ստիպված հաղթահարել Մեծ Բրիտանիան: Ո՞ր կուսակցություններն էին գերիշխում: Երբ է կառավարել Մ. Թեթչերը:
6. Ո՞ր թվականի հանրաքվեով է Իտալիան հռչակվել հանրապետություն: Ո՞ր քաղաքական ուժն էր գերիշխող Իտալիայում: Ինչի՞ շնորհիվ տեղի ունեցավ «տնտեսական հրաշքը» Իտալիայում:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Միջուկային պատերազմ, Ռոնալդ Ռեյգան, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Հելմուտ Քոլ, Ազգերի բրիտանական համագործակցություն, Մարգարետ Թեթչեր, «Երկաթյա լեդի», «տնտեսական հրաշք»

14 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

15 ԽՍՀՄ–Ը 1945–1985 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հետպատերազմյան առաջին տարիները

Հայրենական մեծ պատերազմում հաղթանակը ձեռք էր բերվել խորհրդային երկրի ժողովուրդների հերոսության շնորհիվ: Վիթխարի էին մարդկային և նյութական կորուստները: ***Զոհվել էր 27 միլիոն մարդ***: Ավերվել էր ***1710 քաղաք, 70 հազարից ավելի գյուղ և ավան***, մեծ քանակությամբ գործարաններ և ձեռնարկություններ:

Պատերազմից հետո ԽՍՀՄ–ն սկսեց անցումը խաղաղ կյանքի: ***1945 թ. վերջերից ծավալվեցին երկրի տնտեսության վերականգնման աշխատանքները***: Խաղաղ պայմաններին համապատասխան՝ վերակառուցվեց կառավարման համակարգը:

Ստալինը և նրա շրջապատը որոշեցին շարունակել նախապատերազմյան քաղաքականությունը՝ ***ավարտել սոցիալիզմի կառուցումը, ապա անցնել կոմունիստական հասարակության ստեղծմանը***:

Համեմատաբար կարճ ժամկետում ժողովրդի անդուլ աշխատանքով վերականգնվեց ԽՍՀՄ–ի տնտեսությունը, ապա սկսեց զարգանալ: ***1952 թ. ԽՍՀՄ–ի համախառն արտադրանքը 1,5 անգամ գերազանցում էր նախապատերազմյան մակարդակը***:

Ուշադրության կենտրոնում ռազմական արդյունաբերությունն էր: Նպատակն էր ***ստեղծել սեփական ատոմային զենք*** և վերացնել ԱՄՆ–ի մենաշնորհն այդ ասպարեզում: Խորհրդային գիտնականների և կոնստրուկտորների մեծագույն ջանքերի շնորհիվ ***1949 թ.*** այդ խնդիրը լուծվեց:

Սակայն բարվոք չէր վիճակը տնտեսության մյուս ճյուղերում: ***Պահպանվեց գյուղատնտեսության հետամնացությունը***: Նյութական խթանների բացակայության պատճառով ցածր էր գյուղացու աշխատանքի արտադրողականությունը: Բացի այդ՝ նա կենսաթոշակ և արձակուրդ չէր ստանում, չուներ անգամ անձնագիր և առանց

ԿԻՐԻԼ ՇՉՅՈԼԿԻՆ (ԿԻՐԱԿՈՍ ՄԵՏԱՔՍՅԱՆ) (1911–1968)

Հայազգի խորհրդային խոշոր գիտնական, որի բացառիկ հետազոտությունները մեծապես նպաստել են խորհրդային միջուկային զենքի ստեղծմանը:

15 von 99 12.02.2021, 11:37

իշխանությունների թույլտվության չէր կարող հեռանալ գյուղից:

Դժվարին պայմաններում էին ապրում նաև բանվորները՝ ցածր աշխատավարձ, բնակարանային անբավարար պայմաններ և այլն:

Մարդիկ ակնկալում էին, որ հաղթանակից հետո կբարելավվի կյանքը, խորհրդային հսկա երկրի բոլոր քաղաքացիները ***կունենան արժանավայել ապրելու, ազատորեն մտածելու և ստեղծագործելու հնարավորություն***: Սպասում էին, թե կթուլանա ստալինյան ամբողջատիրական վարչակարգը:

Մինչդեռ պատերազմի ավարտից հետո բռնաճնշումները վերսկսվեցին: Առաջին հարվածն ուղղվեց պատերազմում աչքի ընկած զորահրամանատարների դեմ, ապա հերթը հասավ պետական ու կուսակցական այն գործիչներին, ում հեղինակությունը և դիրքը վախ էր ներշնչում Ստալինին:

Հալածանքների ենթարկվեցին նաև գիտության և մշակույթի հազարավոր գործիչներ: Նրանց մեղադրում էին կոմունիստական կուսակցության գաղափարներից շեղվելու և օտարամոլության մեջ:

Իրականացվեց տարբեր ազգերի բռնի տեղահանություն և վերաբնակեցում Սիբիրում, Հեռավոր Արևելքում, Միջին Ասիայում:

«Ձնհալի շրջանը»

1953 թ. մարտի 5-ին մահացավ խորհրդային պետության և կոմունիստական կուսակցության առաջնորդ ***Ի. Ստալինը***: Ավարտվեց ԽՍՀՄ-ի պատմության մի ամբողջ դարաշրջան:

- *Մի քանի տարի անց Չերչիլը Ստալինի մասին խոսելիս նրան անվանեց արևելյան բռնապետ ու մեծ քաղաքական գործիչ, ով սկսեց ղեկավարել հետամնաց Ռուսաստանը, իսկ իրենից հետո թողեց ատոմային զենք ունեցող երկիր:*

Խորհրդային երկրում հաստատված ամբողջատիրությունը խոչընդոտում էր հասարակության զարգաց-

ՆԻԿԻՏԱ ԽՐՈՒՇՉՈՎ
(1894–1971)

Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության ճանաչված գործիչ: 1930-ական թվականներից գրաղեցրել է բարձր պաշտոններ: Եղել է Ուկրաինայի կոմկուսի առաջին քարտուղար: 1953 թ.՝ Ստալինի մահվանից հետո, հաղթել է իշխանության համար մղվող պայքարում: Հանդես է եկել ստալինյան բռնությունների սուր քննադատությամբ: Վերադարձրել է միլիոնավոր բռնադատվածների: Վերականգնել է զոհվածների բարի անունը: Փորձել է հաստատել ժողովրդավարություն և ազատականացնել տնտեսությունը: Սակայն կոմկուսի հետադիմական ուժերը 1964 թ. կազմակերպեցին դավադրություն և նրան հեռացրին իշխանությունից:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

ՅՈՒՐԻ ԳԱԳԱՐԻՆ
(1934–1968)

Աշխարհի առաջին տիեզերագնացը: Թռիչք է կատարել դեպի Տիեզերք 1961 թ. ապրիլի 12-ին «Վոստոկ» տիեզերանավով: Զոհվել է մարզական թռիչքի ժամանակ:

մանը: Իշխող վարչախմբի անդամները նույնպես հասկանում էին, որ եկել է նախկին քաղաքականությունը փոխելու ժամանակը: Նրանց միջև իշխանության համար սուր պայքար ծավալվեց: ***Հաղթեց Նիկիտա Խրուշչովը***, որը ստանձնեց կոմկուսի, իսկ ապա նաև երկրի կառավարության ղեկավարությունը: ***Սկսվեց ԽՍՀՄ պատմության նոր փուլ, որն անվանում են «ձնհալի շրջան»***:

Ձնհալը ծավալվեց հատկապես ***1956 թ.***՝ կոմունիստական կուսակցության ***XX համագումարից հետո***: Խրուշչովը հանդես եկավ զեկուցումով՝ քննադատության ենթարկելով ստալինյան բռնատիրությունը: Նա ամեն ինչ բարդեց միայն Ստալինի և մի քանի անձանց վրա, սակայն ինքը նույնպես մեղսակից էր այդ բռնատիրությանը: ***Այսպիսով՝ կատարվածին համակողմանի գնահատական չտրվեց***:

Չնայած դրան՝ ծավալվեց հասարակության ժողովրդավարացման գործընթացը: Վերջ դրվեցին բռնություններին: Միլիոնավոր բռնադատվածներ արդարացվեցին և վերադարձան տուն: Շատերն արդեն կենդանի չէին. վերականգնվեց միայն նրանց բարի անունը: Առաջ քաշվեցին նոր մարդիկ, ովքեր մտածում էին հասարակության վերափոխման մասին, աշխուժացավ ստեղծագործող մտավորականությունը:

Բարեփոխվեց նաև տնտեսական կյանքը: Նպատակ դրվեց բարձրացնելու բնակչության կենսամակարդակը: Ուշադրություն դարձվեց գյուղատնտեսության և թեթև

Ն. Խրուշչովի նշանավոր արտահայտություններից

Խորհրդային երկրի ղեկավար Ն. Խրուշչովը սիրում էր տեղի-անտեղի հպարտանալ ԽՍՀՄ-ի հաջողություններով, կամ էլ իր զրուցակցին վախեցնել միջուկային զենքով: ԱՄՆ-ում պաշտոնական այցի ժամանակ նա ծանոթանում է մի սենատորի հետ, որը նրան շատ է դուր գալիս: Ն. Խրուշչովը հետաքրքրվում է, թե որ քաղաքից է սենատորը: Լսելով պատասխանը՝ «Մինեապոլիս», նա քարտեզի վրա կարմիր մատիտով շրջագծում է այդ քաղաքը: Ի պատասխան սենատորի զարմացած հայացքին՝ բացատրում է. «Սա նրա համար է, որ ես կարողանում հիշել Ձեր քաղաքը, միակը, որը կանգուն կմնա Միացյալ Նահանգների վրա մեր միջուկային հարվածից հետո»:

17 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

արդյունաբերության վրա: Վերացվեց գյուղացիության կիսաճորտային վիճակը. նրանք ստացան անձնագիր և կենսաթոշակ:

Առաջընթաց արձանագրվեց խորհրդային գիտության և արդյունաբերության մեջ: ***ԽՍՀՄ–ում գործարկվեց աշխարհում առաջին ատոմային էլեկտրակայանը***: Տիեզերք արձակվեց ***առաջին արհեստական արբանյակը***: Եվ վերջապես՝ ***1961 թ. ապրիլի 12–ին Տիեզերք թռավ առաջին մարդը՝ Յուրի Գագարինը***:

Սակայն վարչահրամայական համակարգը նոր թափ առավ 1960–ական թթ. սկզբներից: Կրկին ամեն բան կատարվում էր վերևից եկող հրամաններով: Տնտեսական զարգացումը դանդաղեց, իսկ գյուղատնտեսության մեջ նորից սկսվեց անկում: Բանը հասավ նրան, որ սովից խուսափելու համար ԽՍՀՄ–ը հացահատիկ գնեց ԱՄՆ–ից:

Օգտվելով այս դրությունից՝ ***երկրի ղեկավարության հեղաղիմական ուժերը 1964 թ. Խրուշչովին հեռացրին իշխանությունից***: Այսպիսի ավարտ ունեցավ ամբողջատիրության հաղթահարման առաջին փորձը Խորհրդային Միությունում:

«Լճացման տարիները»

Խորհրդային երկրի նոր ղեկավար դարձավ ***Լեոնիդ Բրեժնևը***: Պահպանողականները շուտով հրաժարվեցին «ձնհալի շրջանի» ժողովրդավարական ձեռքբերումներից: Նրանք այլևս ***թույլ չէին տալիս հասարակարգի որևէ քննադատություն***: Ցանկացած դժգոհություն պիտակավորվում էր իբրև «բուրժուական այլախոհություն» և խստորեն պատժվում:

Այդուհանդերձ, պահպանողականները սկզբում փորձեցին կատարել տնտեսական բարեփոխումներ՝ սահմանափակել վերևից պարտադրվող պլանները, ընդլայնել ձեռնարկությունների ինքնուրույնությունը: Ինչպես միշտ, դրանք սկզբից որոշ աշխուժացում առաջացրին, սակայն հետագայում կասեցվեցին: Կրկին զգացվեց առաջին անհրաժեշտության ապրանքների խիստ պակաս՝ դատարկ խանութներ, հերթեր, դժգոհություն:

ԼԵՈՆԻԴ ԲՐԵԺՆԵՎ
(1906–1982)

Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության և խորհրդային պետական ղեկավար գործիչ: Գործունեությունը սկսել է 1930–ական թթ.: 1964 թ. մասնակցել է Նիկիտա Խրուշչովի պաշտոնանկությանը: Եղել է Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության ղեկավար: Իր կառավարման սկզբում փորձել է անցկացնել տնտեսական բարեփոխումներ, բայց անհաջող: Նրա օրոք երկրում ծաղկեց կաշառակերությունը, անկում ապրեցին կյանքի բոլոր բնագավառները՝ տնտեսություն, քաղաքական կյանք, մշակույթ: Տեղի էր ունենում առաջավոր մտավորականների հետապնդում: Արտաքին քաղաքականության մեջ շարունակվում էր մրցակցությունը ԱՄՆ–ի հետ:

18 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Երկրում հաստատվեց համատարած կաշառակերությունը:

Տնտեսությունը լճացում էր ապրում: Այն հանգեցրեց հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նախաճգնաժամային վիճակի: Ահա թե ինչու Բրեժնևի կառավարման և դրան հաջորդող մի քանի տարիները ստացան ***«լճացման տարիներ»*** անվանումը:

Փաստորեն, խորհրդային տնտեսության բարեփոխումը հերթական անգամ ձախողվեց: Գլխավոր պատճառն այն էր, որ չզուգակցվեց քաղաքական համակարգի բարեփոխմամբ: ***Մարդիկ կորցրին հավատը սոցիալիստական հասարակարգի և պայծառ ապագայի նկատմամբ***:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հետպատերազմյան շրջանում ինչպիսի՞ դժվարությունների առջև էր կանգնած խորհրդային երկիրը:
2. Զարգացման ի՞նչ անհամաչափություններ կային ԽՍՀՄ–ի տնտեսության մեջ այդ տարիներին:
3. Ո՞ւմ դեմ էր ուղղված ստալինյան քաղաքական բռնությունների նոր ալիքը:
4. Համաձա՞յն եք արդյոք Ստալինի մասին Չերչիլի ասած խոսքերին: Ի՞նչ կարծիք ունեք Ստալինի և նրա վարած քաղաքականության մասին. հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
5. Ինչո՞ւ են Խրուշչովի կառավարման տարիները կոչվում «ձնհալի շրջան»: Գնահատե՛ք նրա գործունեությունը:
6. 1950–1960–ական թթ. գիտության բնագավառում ի՞նչ ձեռքբերումներ արձանագրվեցին ԽՍՀՄ–ում:
7. Որո՞նք էին խորհրդային հասարակության լճացման պատճառները:

Գործնական աշխատանք

Համեմատե՛ք ստալինյան բռնապետության և բրեժնևյան «լճացման տարիները»՝ կատարելով «Տրամագիր» վարժությունը:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Ազգերի բռնի տեղահանություն, Նիկիտա Խրուշչով, «ձնհալի շրջան», ատոմային էլեկտրակայան, Երկիր մոլորակի արհեստական արբանյակ, Յուրի Գագարին, Լեոնիդ Բրեժնև, «բուրժուական այլախոհություն», «լճացման տարիներ»

19 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

16 ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԻՑ ԴԵՊԻ ՓԼՈՒՋՈՒՄ

Վերակառուցման քաղաքականությունը

Նախորդ դասից իմացանք, որ Խորհրդային Միությունը 1980-ական թթ. կեսերին կանգնած էր լուրջ հիմնախնդիրների առջև հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: ***Խորացող տնտեսական ճգնաժամը ստիպեց երկրի ղեկավարությանը քայլեր ձեռնարկել հասարակարգը փրկելու ուղղությամբ***:

1985 թ. մարտին կոմունիստական կուսակցության ղեկավար ընտրվեց ***Միխայիլ Գորբաչովը***: Նա սկսեց վերափոխումներ իրականացնել, որոնց ***նպատակն էր վերակառուցել խորհրդային հասարակությունը***:

Վերակառուցման նախաձեռնողները սկզբում փորձեցին տնտեսությունը դուրս բերել ճգնաժամից ներքին միջոցների հաշվին: Որոշվեց կատարելագործել տնտեսության կառավարումը՝ ազատություն տալով տնտեսվարողներին: Խորհրդային պետության բարեփոխիչները, սակայն, սկզբնական շրջանում չհամարձակվեցին հրաժարվել վարչահրամայական կառավարման սկզբունքներից: ***Ձևավորվեցին ազատ մրցակցություն և շուկայական հարաբերություններ***, փոխարենը՝ սկսեցին բարգավաճել ստվերային տնտեսությունը, կազմակերպված հանցագործությունը, կաշառակերությունը:

Գորբաչովն ու նրա համախոհները որոշեցին շտկել դրությունը քաղաքական բարեփոխումների միջոցով: ***Սկսվեց հասարակության ժողովրդավարացումը***: ***1989 թ.*** երկրում առաջին անգամ անցկացվեցին ***այլընտրանքային ընտրություններ: Ընտրվեցին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ***: Գորբաչովն ընտրվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ, իսկ մեկ տարի անց՝ ԽՍՀՄ նախագահ:

Փոխվեց վերաբերմունքը այլախոհների նկատմամբ. նրանցից շատերն ազատ արձակվեցին: ***Որոշակի ազա-***



ՄԻԽԱՅԻԼ ԳՈՐԲԱՉՈՎ (1931)

Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության և պետական ղեկավար գործիչ: Ավարտել է Մոսկվայի համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 1985 թ. ընտրվել է կոմունիստական կուսակցության ղեկավար, 1990 թ.՝ ԽՍՀՄ նախագահ: Ձեռնարկեց երկրի կյանքի բոլոր բնագավառների վերակառուցման ծրագիր, սակայն հաջողություն չունեցավ: Արտաքին քաղաքականության հարցերում զիջումներ արեց ԱՄՆ-ին և ՆԱՏՕ-ին: Զորքերը դուրս բերեց Աֆղանստանից և սոցիալիստական ճամբարի երկրներից: 1991 թ. դեկտեմբերի 21-ին՝ ԽՍՀՄ-ի պաշտոնական փլուզումից չորս օր անց հրաժարական է տվել: Արժանացել է խաղաղության Նոբելյան մրցանակի:

20 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Խորհրդային զորքերի դուրս-բերումը Աֆղանստանից. 1989 թ. փետրվար

պություն ստացան մամուլը, հեռուստատեսությունը, ռադիոն:

Փոխվեց նաև պետության արտաքին քաղաքականությունը: ***Խորհրդային զորքերը դուրս բերվեցին Աֆղանստանից և Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրներից***: Սառը պատերազմի դարաշրջանը մոտենում էր իր ավարտին: Սակայն այս դրական տեղաշարժերն էականորեն չազդեցին երկրի տնտեսական վիճակի վրա:

Ազգային հարցի սրումը

Վերակառուցումը շարժման մեջ դրեց հսկայածավալ Խորհրդային Միությունը: Նախորդ տարիներին զսպված կամ սառեցված շատ հակասություններ նորից ակնհայտորեն դրսևորվեցին: ***Հատկապես սրվեց ազգային հարցը***:

Վերակառուցման իսկական փորձաքարը եղավ ***1988 թ. սկսված Արցախյան շարժումը*** (այս մասին ավելի մանրամասն տես Հայոց պատմության դասագրքում): Միութենական իշխանություններն անզոր եղան ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա կարգավորելու Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունը: ***Ազգային հողի վրա բախումներ տեղի ունեցան նաև Միջին Ասիայում, Ղրիմում, Հյուսիսային Կովկասում, Մոլդավիայում, Վրաստանում*** և այլուր:

21 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Արցախյան շարժումը Հայաստանում. Երևան՝ Ազատության հրապարակ, 1988 թ.

1990 թ. միութենական բոլոր հանրապետություններն ընդունեցին ազգային ինքնիշխանության մասին հռչակագրեր: Դրան հետևեց նրանց անկախացման գործընթացը: Հայաստանում այն սկսվեց 1990 թ. օգոստոսի 23-ի Անկախության հռչակագրի ընդունմամբ:

Խորհրդային տերության փլուզումը, ԱՊՀ-ի ստեղծումը

Քաղաքական զարգացումները ցույց էին տալիս, որ խորհրդային տերությունը նախկին վիճակով պահպանել հնարավոր չէ: Հանրապետությունները անկախացման ուղի էին բռնել: ԽՍՀՄ ղեկավարությունը անկա-

Խորհրդային զրահատեխնիկան Թբիլիսիի փողոցներում. 1989 թ. ապրիլ

22 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Ուկրաինայի, Բելառուսի և Ռուսաստանի ղեկավարներ Լեոնիդ Կրավչուկը, Ստանիսլավ Շուշկևիչը և Բորիս Ելցինը Բելովեժյան զաղտնի հանդիպման ժամանակ. 1991 թ. դեկտեմբերի 8

րող էր պահել սեփական իշխանությունը: Այդ պատճառով նա զենքի դիմեց Վրաստանում, Լիտվայում, Լատվիայում, ինչպես նաև Արցախում:

Մ. Գորբաչովը որոշեց կանխել ԽՍՀՄ անկումը միութենական նոր պայմանագիր կնքելու միջոցով: Նախատեսվում էր ընդլայնել հանրապետությունների իրավունքները:

Խորհրդային նոր դաշնության մեջ, որն ըստ նախագծի կոչվելու էր «Ինքնիշխան պետությունների միություն», համաձայն էր մտնելու 15 հանրապետություններից միայն 9–ը: ***Որոշված էր 1991 թ. օգոստոսի 20–ին ստորագրել*** այդ դաշնության կազմավորման նոր պայմանագիր:

Դրա հետ համաձայն չէին ***ԽՍՀՄ պահպանողական ուժերը***: Նրանք նշված ժամկետից մեկ օր առաջ՝ ***օգոստոսի 19–ին, խռովություն բարձրացրին Մոսկվայում***: Սակայն ժողովրդավարական ուժերը ճնշեցին այն: Իշխանությունն անցավ Ռուսաստանի Դաշնության ղեկավարության ձեռքը՝ նախագահ ***Բորիս Ելցինի*** գլխավորությամբ:

Օգոստոսյան խռովությունից հետո Խորհրդային Միության կազմալուծման գործընթացն արագացավ: Անկախության հանրաքվեներ անցկացվեցին մի շարք հանրապետություններում, այդ թվում՝ Հայաստանում:

1991 թ. դեկտեմբերի 8–ին սլավոնական երեք հանրապետությունների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելա-

23 von 99 12.02.2021, 11:37

ռուսի ղեկավարները ***գաղտնի հանդիպում ունեցան***: Նրանք համաձայնության եկան ԽՍՀՄ–ը կազմալուծելու և Անկախ Պետությունների Համագործակցություն (ԱՊՀ) ստեղծելու հարցում: Կոչ արեցին մյուս հանրապետություններին ևս միանալու իրենց: ***Դրան հաջորդեց դեկտեմբերի 21–ին Ղազախստանի մայրաքաղաք Ալմա Աթայում 11 հանրապետությունների ղեկավարների հանդիպումը***: Այստեղ ստորագրվեց ԱՊՀ ստեղծման և ԽՍՀՄ լուծարման մասին համաձայնագիր: Այլևս գոյություն չունեցող երկրի նախագահ Մ. Գորբաչովը չորս օր անց վայր դրեց իր լիազորությունները:

ԽՍՀՄ–ի փլուզումը և ԱՊՀ–ի ստեղծումը

Այսպիսով՝ գրեթե 70 տարվա գոյությունից հետո Խորհրդային Միությունը փլուզվեց:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Հարցեր և առաջադրանքներ

1. Որոնք էին խորհրդային հասարակության վերակառուցման քաղաքականության նպատակները:
2. ԽՍՀՄ–ի վերափոխման ինչ քայլեր ձեռնարկեց Մ. Գորբաչովը: Ձեր կարծիքով ինչո՞ւ դրանք ցանկալի արդյունք չտվեցին:
3. Ինչ հետևանքների հանգեցրեց վերակառուցման քաղաքականությունը:
4. Ինչո՞ւ ԽՍՀՄ–ում սրվեց ազգային հարցը:
5. ԽՍՀՄ–ի փլուզումը կանխելու համար ինչ էր ծրագրել միութենական կենտրոնը:
6. Ե՞րբ է տեղի ունեցել պահպանողական ուժերի խռովությունը: Ինչո՞ւ այն ձախողվեց:
7. Ովքե՞ր էին ԱՊՀ–ի հիմնադրման նախաձեռնողները: Ե՞րբ է այն ստեղծվել:
8. Ե՞րբ և ինչ պայմաններում լուծարվեց Խորհրդային Միությունը:

Քննարկման հարց

Ձեր կարծիքով հնարավո՞ր էր արդյոք կանխել ԽՍՀՄ–ի փլուզումը:

Նոր հասկացություններ, անուններ

Միխայիլ Գորբաչով, վերակառուցում, ազգային հարցի սրում, Արցախյան շարժում, խորհրդային հանրապետությունների անկախացման գործընթաց, Բորիս Ելցին, օգոստոսյան խռովություն, ԽՍՀՄ–ի կազմալուծում, Անկախ Պետությունների Համագործակցություն (ԱՊՀ)

25 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

17 ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Սոցիալիզմի խորհրդային տարաձևի հաստատումը եվրոպական երկրներում

Դուք արդեն գիտեք, որ Խորհրդային Միությունը Երկրորդ աշխարհամարտի ավարտին ռազմակալել էր Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներ՝ Բուլղարիան, Ռումինիան, Հարավսլավիան, Ալբանիան, Հունգարիան, Լեհաստանը, Չեխոսլովակիան և Արևելյան Գերմանիան: ***ԽՍՀՄ-ի օժանդակությամբ այդ երկրներում 1945–1949 թթ. իշխանության գլուխ անցան համայնավարները***:

Նոր իշխանությունները ***ձեռնամուխ եղան սոցիալիստական հասարակարգի կառուցմանը՝ ըստ խորհրդային տարաձևի***: Հաստատվեց կոմունիստական կուսակցությունների միահեծան իշխանությունը, պետականացվեցին արդյունաբերությունը, բանկերը, հողը: Կոլեկտիվացվեց գյուղատնտեսությունը: Հաստատվեց կառավարման վարչահրամայական եղանակ:

Հետագայում սոցիալիզմի ճամբարը համալրեցին Չինական Ժողովրդական Հանրապետությունը, Հյուսի-

Սոցիալիստական համակարգի երկրները

26 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Տնտեսական փոխօգնության խորհրդի շենքը Մոսկվայում, որն այժմ Մոսկվայի քաղաքապետարանի նստավայրն է:

սային Կորեան, Կուբան, Վիետնամը և այլն: Այսպես աշխարհում ձևավորվեց սոցիալիստական համակարգը՝ ԽՍՀՄ–ի գլխավորությամբ:

Սակայն շուտով ***Հարավսլավիան և Չինաստանն*** ընթացան սոցիալիզմի կառուցման սեփական ուղիով: Նրանք ***չմտան սոցիալիստական համակարգի երկու կարևոր մարմինների՝ Վարշավայի դաշինքի և Տնտեսական փոխօգնության խորհրդի մեջ***: Իսկ Հարավսլավիան դարձավ «Չմիացած երկրների շարժման» հիմնադիրներից մեկը:

Սոցիալիստական համակարգի հակասությունները

Նոր հասարակարգի կառուցման հետ ժողովուրդը մեծ հույսեր էր կապել՝ կենսամակարդակի վերելք, իրական ժողովրդավարության հաստատում, մշակութային զարգացման հնարավորություն և այլն: Սակայն կապիտալիստական երկրների հետ համեմատությունը ամենևին էլ սոցիալիզմ կառուցողների օգտին չէր:

Արդեն 1950–ական թթ. կեսերից Եվրոպայի սոցիալիստական երկրներում աճեց բնակչության դժգոհությունը: Հատկապես լուրջ հակասություններ կային ***Հունգարիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Գերմանիայի Ժողովրդավարական Հանրապետությունում***:

Ստալինի անձի դատապարտումը և «ձնհալը» բարեփոխման հույսեր արթնացրին գրեթե բոլոր սոցիալիստական երկրներում:

Հատված Չեխոսլովակիայի մտավորականության՝ «Երկու հազար բառ՝ ուղղված բանվորներին, գյուղացիներին, ծառայողներին և գիտնականներին, մշակույթի աշխատողներին և բոլոր մարդկանց» ուղերձից

Ժողովրդի մեծամասնությունը հույսով ընդունեց սոցիալիզմի կառուցման ծրագիրը: Սակայն դրա ղեկավարումն ընկավ ոչ այն մարդկանց ձեռքը: Կործանարար չէր լինի պետական փորձի, գործնական գիտելիքների պակասը, եթե նրանք ունենային գոնե կենցաղային պարկեշտություն, եթե կարողանային լսել այլոց կարծիքը ...

Կոմունիստական կուսակցությունը, որը պատերազմից հետո վայելում էր մարդկանց վստահությունը, աստիճանաբար այն փոխեց տարբեր պաշտոնների հետ ... Ղեկավարության սխալ ուղեգիծը կուսակցությունը վերածեց տիրապետող կազմակերպության, որին ձգտում էին իշխանատենչ, եսասեր, հաշվենկատ, վախկոտ և անմաքուր մարդիկ:

«Լիտերարնի լիստի», 27.06.1968 թ.

27 von 99 12.02.2021, 11:37

Պրահայի փողոցները 1968 թ. օգոստոսին

Հունգարիայի ղեկավարությունը փորձեց իրականացնել ժողովրդավարական և տնտեսական բարեփոխումներ: Իսկ ***1956 թ. հայտարարեց Վարշավյան դաշինքից դուրս գալու մասին***: Խորհրդային Միությունը զորքեր մտցրեց Բուդապեշտ և ճնշեց սկսված ապստամբությունը:

Նույնը կատարվեց նաև ***Չեխոսլովակիայում 1968 թ.***: ԽՍՀՄ ղեկավարությունը դա որակեց որպես սպառնալիք սոցիալիստական համակարգին: Վարշավյան դաշինքի զորքերը մտան Պրահա և ճնշեցին չեխերի ու սլովակների ինքնուրույնության փորձը:

Պրահայի դեպքերից հետո ***ԽՍՀՄ-ը կոշտացրեց Արևելյան Եվրոպայի երկրների նկատմամբ իր վերահսկողությունը***:

Լճացման տարիներին բրեժնևյան վարչախումբը թույլ չտվեց կատարել հասարակության բարեփոխման փորձեր ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլև Հունգարիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում:

Լուրջ հակասություններ առաջացան նաև ԽՍՀՄ-ի ու Չինաստանի միջև. գործը նույնիսկ հասավ ռազմական բախման:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Բեռլինը երկու հատվածի բաժանող պատի քանդումը. 1989 թ. նոյեմբերի 9

Չնայած ներքին ու արտաքին հակասություններին՝ սոցիալիզմի համակարգն ուներ ոչ միայն ռազմաքաղաքական, այլև տնտեսական մեծ ներուժ:

«Թավշյա հեղափոխությունները»

1980-ական թթ. վերջին սրվեցին սոցիալիստական երկրների ներքին հակասությունները: ***Տնտեսական հեղափոխությունը դարձավ ամբողջատիրական հասարակության ճգնաժամի գլխավոր պատճառը***: Մեծ դեր խաղաց նաև ԽՍՀՄ-ում սկսված վերակառուցման ձախողումը:

Արևելաեվրոպական երկրներում 1989-1990 թթ. տեղի ունեցան հեղափոխություններ, որոնք, բացառությամբ Ռումինիայի, ընթացան անարյուն: Ահա թե ինչու այս դեպքերը ստացան ***«թավշյա հեղափոխություններ»*** անվանումը: Իշխող վարչակարգերը տապալելու նպատակով ընդդիմադիր ուժերը ծավալել էին ժողովրդավարական շարժումներ՝ հանրահավաքներ, ցույցեր, գործադուլներ: Արդյունքում՝ հեղինակազրկված կոմունիստներին փոխարինելու եկան քաղաքական նոր ուժեր և առաջնորդներ:

Առաջինը Լեհաստանում 1989 թ. տեղի ունեցան ժողովրդավարական ընտրություններ: Ձևավորվեց ոչ համայնավարական կառավարություն: Այնուհետև փոխվեց

29 von 99 12.02.2021, 11:37

«Սոլիդարնոստ» անկախ արհմիության առաջնորդ Լեխ Վալենսան (հետագայում՝ Լեհաստանի նախագահ) ելույթ է ունենում Գդանսկում. 1989 թ.

իշխանությունը նաև Հունգարիայում, Չեխոսլովակիայում, Բուլղարիայում:

Գերմանական Ժողովրդավարական Հանրապետությունում 1989 թ. ահագնացած ցույցերը հանգեցրին նրան, որ համայնավարները հեռացվեցին իշխանությունից: Նույն թվականի ***նոյեմբերի 9-ին քանդվեց Բեռլինի պատը***՝ սառը պատերազմի խորհրդանիշը: Սկսվեց ***Արևմտյան Գերմանիայի հետ Արևելյան Գերմանիայի միավորման գործընթացը***, որն ավարտվեց ***1990 թվականին***:

Ռումինիայում դեպքերն այլ զարգացում ունեցան: Սկսվեց համաժողովրդական ապստամբություն: Մայրաքաղաք ***Բուխարեստում տեղի ունեցան զինված ընդհարումներ***: Հեղափոխական ուժերը հաղթեցին, իսկ

Ռումինիան 1989 թ. հեղափոխական օրերին

Ոչ ոք չէր կարող պատկերացնել, որ 1989 թ. դեկտեմբերի 21-ը կլինի Նիկոլաե Չաուշեսկուի կառավարման վերջին օրը: Չէր կարող դա պատկերացնել նաև ինքը՝ բռնապետը՝ անվտանգության ծառայության օգնությամբ հազարավոր մարդկանց քշելով Բուխարեստի կենտրոնական հրապարակ, որպեսզի հանրահավաք անցկացնի՝ իր վերջին հանրահավաքը: Սակայն մարդիկ նրա պատվին բուռն ծափահարությունների և ողջույնների փոխարեն հրապարակը լցրին «Կորչի՛ Չաուշեսկուն» գոչացած բղավոցներով, սկսեցին տրորել նրա դիմանկարներով պաստառները: Հաջորդ օրը Ն. Չաուշեսկուին և նրա կնոջը ձերբակալեցին, իսկ չորս օր անց մահվան դատապարտեցին:

երկրի ղեկավարը՝ բռնապետ ***Նիկոլաե Չաուշեսկուն, մահապատժի ենթարկվեց***:

Արևելյան Եվրոպայի ***նախկին սոցիալիստական երկրներում վերականգնվեց բազմակուսակցական համակարգը, ընտրվեցին նոր իշխանության մարմիններ***: Իրականացվեցին քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային բարեփոխումներ:

1991 թ. պաշտոնապես լուծարվեցին Վարշավայի պայմանագրի կազմակերպությունը և Տնտեսական փոխօգնության խորհուրդը: Իսկ նույն տարվա վերջին, արդեն ասվել է, դադարեց գոյություն ունենալուց նաև ԽՍՀՄ–ը: Դրանով ավարտվեց սոցիալիստական համակարգի փլուզումը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս էր Արևելյան Եվրոպան հայտնվել ԽՍՀՄ ազդեցության ներքո:
2. Արևելաեվրոպական երկրներում կոմունիստները ե՞րբ եկան իշխանության: Հասարակության ի՞նչ տարաձև հաստատվեց այդ երկրներում:
3. Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք սոցիալիստական համակարգի երկրները:
4. Ի՞նչ հակասություններ առաջացան սոցիալիստական նորաստեղծ երկրներում: Ձեր կարծիքով որո՞նք էին դրանց պատճառները:
5. Ներկայացրե՛ք Խորհրդային Միության քաղաքականությունը սոցիալիստական երկրների հանդեպ:
6. Ե՞րբ են տեղի ունեցել «թավշյա հեղափոխությունները»: Ի՞նչ յուրահատուկ դրսևորումներ ունեցան դրանք տարբեր երկրներում:

Քննարկման հարց

Ինչո՞ւ սոցիալիզմի համակարգը փլուզվեց:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Սոցիալիստական համակարգ, Գերմանիայի Ժողովրդավարական Հանրապետություն, «թավշյա հեղափոխություններ», Նիկոլաե Չաուշեսկու

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

18 ԵՐՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԸ

Գաղութային համակարգը, ինչպես գիտեք, ձևավորվել էր Նոր դարերում: XIX դարի ընթացքում որոշ գաղութներ անկախություն նվաճեցին: Այդ գործընթացը շարունակվեց Նորագույն շրջանում. Առաջին աշխարհամարտից հետո նախկին մի շարք գաղութներ անկախացան կամ մանդատային երկրի կարգավիճակում էին:

Գաղութային համակարգի փլուզման պատճառները

Երկրորդ աշխարհամարտի ավարտին սկսվեց ու հեռագայում մեծ թափ ստացավ գաղութացված ժողովուրդների ու երկրների ազատագրական պայքարը: Դրա շնորհիվ ***փլուզվեց գաղութային համակարգը***: Իսկ որո՞նք էին ապագաղութացման գործընթացի ***հաջողության հիմնական պատճառները***.

- *Հզորացել էր գաղութային երկրների ազգային-ազատագրական պայքարը, ամրապնդվել էր գաղութային ժողովուրդների ազգային ինքնագիտակցությունը:*
- *Թուլացել էին գաղութային տերությունները Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան. նրանք այլևս չունեին տնտեսական ու ռազմաքաղաքական նախկին հզորությունը:*
- *Երկու գերտերությունները՝ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը, աջակցում էին գաղութների ազատագրական պայքարին, սակայն հետամուտ էին առաջին հերթին սեփական շահերին. ժողովրդավարության կամ սոցիալիզմի հաստատման քողի տակ նրանք ձգտում էին նվաճելու ազդեցության նոր շրջաններ:*
- *Մեծ դեր խաղաց նաև փոփոխված միջազգային իրադրությունը: Ազգերի ինքնորոշման իրավունքը միջազգայնորեն ընդունվեց և սկսեց կիրառվել: Այս պայմաններում գաղութային ու կախյալ երկրներն իրենց*

32 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

պայքարը համարում էին միանգամայն արդարացի և օրինական:

Գաղութների անկախացումը

Ապագաղութացման նոր փուլը սկսվել էր Երկրորդ աշխարհամարտի ժամանակ: Իսկ ***պատերազմից հետո առաջինը ոտքի ելան Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի կախյալ ու գաղութային երկրների ժողովուրդները***:

Մեծ Բրիտանիան 1947 թ. ստիպված էր ճանաչել ***Հնդկաստանի***, իսկ հետագայում նաև իր մյուս գաղութների անկախությունը: Ֆրանսիական գաղութներ ***Վիետնամը, Ալժիրը, Թունիսը*** զինված պայքարի շնորհիվ նույնպես ազատագրվեցին գաղութային լծից: Անկախություն ստացան նաև արաբական աշխարհի մյուս երկրները:

Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի ապագաղութացմանը հաջորդեց «Սև մայրցամաքի» մնացած մասի ժողովուրդների ազատագրական շարժման վերելքը: ***Միայն 1960 թ. անկախություն նվաճեց աֆրիկյան 17 պետություն***:

Ասիայում գաղութատիրության վերջին օջախը վերացավ XX դարի ավարտին, երբ Պորտուգալիան Չինաստանին վերադարձրեց Մակաո քաղաքը:

ԷՌՆԵՍՏՈ ՉԵ ԳԵՎԱՐԱ
(1928–1967)

Լատինաամերիկյան հեղափոխական: Ծնվել է Արգենտինայում, սովորել է բժշկություն: Մասնակցել է 1959 թ. Կուբայի հեղափոխությանը: Կուբայում հանրաճանաչությամբ զիջում էր միայն Ֆիդել Կաստրոյին: 1965 թ. մեկնել է Կոնգո, այնուհետև՝ Բոլիվիա՝ պարտիզանական շարժում կազմակերպելու նպատակով: Զոհվել է պատժիչների դեմ մարտում: Նրա անունը հայտնի է աշխարհի շատ երկրներում՝ որպես ազատության և հեղափոխության անձնազոհ մարտիկի խորհրդանիշ:

Խորհրդային զենքով զինված պարտիզանական ջոկատ Անգոլայում. Աֆրիկա, 1960-ական թթ.

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Աշխարհի բաժանումը՝ ըստ զարգացման աստիճանի

Այսպիսով՝ XX դարի երկրորդ կեսին փլուզվեց գաղութային համակարգը, և աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվեցին տասնյակ նոր պետություններ:

Նորանկախ երկրները զարգացման դժվարին ուղի անցան: Սակայն քաղաքական անկախության նվաճումը չհանգեցրեց տնտեսական անկախության: ***Նրանք դեռ կախվածություն ունեին նախկին գաղութարար երկրներից:*** Բնակչության կենսամակարդակը գրեթե չփոխվեց: Այս երկրներին բնորոշ էին հետամնաց տնտեսությունը, ազգային արդյունաբերության թերզարգացածությունը, ավանդական, նույնիսկ նահապետական ու ցեղային կառույցների առկայությունը:

Գաղութատեր երկրներն իրենց նախկին գաղութներում գտան շահագործման նոր ձևեր՝ կապիտալի ներդրում, էժան աշխատուժի շահագործում և այլն:

Երրորդ աշխարհի ձևավորումը

Մինչև գաղութային համակարգի փլուզումը մարդկության 2/3-ը մեկուսացված էր համաշխարհային զարգացման գործընթացից: Այժմ ներգրավվելով միջազգային հարաբերությունների ոլորտը՝ ***նորակազմ պետությունները սկսեցին որոշակի դերակատարություն ունենալ համաշխարհային քաղաքականության մեջ:*** Լատինական Ամերիկայի երկրների հետ համատեղ նրանք ձևավորեցին պետությունների մի նոր խումբ, որը ստացավ ***«Երրորդ աշխարհ»*** անունը: Նրանց անվանում են նաև զարգացող երկրներ:

34 von 99 12.02.2021, 11:37

«Չմիացած երկրների շարժման» մասնակից երկրների ներկայացուցիչները կազմակերպության 16-րդ վեհաժողովում, որը կայացել է Իրանի մայրաքաղաք Թեհրանում 2012 թ. օգոստոսի 26-31-ը: 2012 թ. դրությամբ կազմակերպությանը անդամակցում էր 120 երկիր, իսկ 15-ը՝ դիտորդի կարգավիճակով: Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է դիտորդի կարգավիճակով:

Նորանկախ երկրները որդեգրեցին զարգացման կապիտալիստական կամ սոցիալիստական ուղի: Կողմնորոշումը պայմանավորված էր նրանով, թե տվյալ պետությունը որ ճամբարից էր տնտեսական ու ռազմական օգնություն ստանում:

Ընտրելով այս կամ այն ուղին՝ զարգացող երկրների գերակշիռ մասը, սակայն, չմիացավ երկու հակադիր ճամբարներից որևէ մեկին: Հնդկաստանի վարչապետ ***Ջավահառլալ Ներուի ջանքերի շնորհիվ 1961 թ. ձևավորվեց «Չմիացած երկրների շարժում» կազմակերպությունը***: Սառը պատերազմի պայմաններում այս երկրները ձգտում էին պահպանելու իրենց ինքնուրույնությունը: Նման դիրքորոշման հիմքում ընկած էր չեզոքության սկզբունքը:

ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը սկզբում բացասական վերաբերմունք ցուցաբերեցին «չմիացած երկրների» հանդեպ, սակայն հետագայում փոխեցին իրենց դիրքորոշումը:

Այսպես՝ «Երրորդ աշխարհն» իր ուրույն տեղը զբաղեցրեց կապիտալիզմի ու սոցիալիզմի աշխարհների կողքին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկեք գաղութային համակարգի փլուզման հիմնական պատճառները:
2. Ներկայացրեք գաղութային երկրների անկախացման գործընթացը:
3. 1960 թ. երբեմն անվանում են «Աֆրիկայի տարի». ինչո՞ւ:
4. Թվարկեք և քարտեզի վրա ցույց տվեք Ասիայի և Աֆրիկայի նորանկախ մի քանի երկրներ:
5. Որո՞նք էին գաղութային համակարգի փլուզման տնտեսական հետևանքները:
6. Ինչո՞վ էր պայմանավորված նորանկախ պետությունների զարգացման ուղու ընտրությունը:
7. Բացատրեք «Երրորդ աշխարհ» հասկացությունը:
8. Ձեր կարծիքով չմիացած երկրներն ինչ դեր են խաղացել սառը պատերազմի դարաշրջանում:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Գաղութային համակարգի փլուզում, «Երրորդ աշխարհ», չմիանալու քաղաքականություն, Ջավահառլալ Ներու, «Չմիացած երկրների շարժում» կազմակերպություն

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

19 ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ

Մերձավոր և Միջին Արևելքի կիսանկախ երկրներում XX դարի առաջին կեսին տեղի էր ունենում հասարակության արդիականացման գործընթաց: Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո այդ գործընթացը մտավ նոր շրջափուլ: Արդիականացման ոլորտում ներգրավվեցին նաև արաբական երկրները:

Թուրքիա

Թուրքիայի հետպատերազմյան կյանքին բնորոշ էին ներքին ճգնաժամերն ու քաղաքական ուժերի վերադասավորումները: Ձևավորվել էին բազմաթիվ կուսակցություններ: Առաջատարը ***Ժողովրդավարական կուսակցությունն*** էր, որն էլ ***1950 թ. եկավ իշխանության***:

ԺԿ-ն կառավարեց տասը տարի, և այդ շրջանում կատարվեցին էական տեղաշարժեր: Սահմանափակվեց տնտեսության մեջ պետության դերը, ակտիվացավ ազատ ձեռներեցությունը: Դրան հետևեցին Մարշալի պլանի մեջ ընդգրկվելը և ամերիկյան մեծ ներդրումները: ***Թուրքիան ամբողջովին կողմնորոշվեց դեպի Արևմուտք, 1952 թ. անդամագրվեց ՆԱՏՕ-ին***:

1980 թ. զինվորական հեղաշրջումը Թուրքիայում՝ գեներալ Քենան Էվրենի գլխավորությամբ

37 von 99 12.02.2021, 11:37

Ժողովրդավարների ուժեղացումը համախմբեց հին վարչակարգի կողմնակիցներին: Թուրքիայում ավանդաբար ***մեծ է զինվորականության ազդեցությունը***, որն էլ ***1960 թ. իրականացրեց զինվորական հեղաշրջում***: Հրավիրվեց Սահմանադիր ժողով, և ընդունվեց նոր սահմանադրություն: Կրկին «հռչակվեցին» ժողովրդավարական ազատություններ: Ի հայտ եկան տարբեր ուղղությունների նոր քաղաքական կուսակցություններ: Սկսեցին բացահայտ գործել նաև ծայրահեղ իսլամական կազմակերպությունները:

Թուրքիայում ***1980 թ. տեղի ունեցավ հերթական զինվորական հեղաշրջումը***: Միայն երեք տարի անց երկիրը վերադարձավ քաղաքացիական կառավարման: Ընդունվեց երրորդ սահմանադրությունը: Ընտրություններում հաղթեց ***«Մայր հայրենիք» կուսակցությունը***, որի առաջնորդ ***Թուրգութ Օզալը դարձավ վարչապետ*** (իսկ 1989 թ.՝ երկրի նախագահ): Նա իրականացրեց տնտեսության ազատականացման և շուկայական հարաբերությունների զարգացման քաղաքականություն: Մեծ տեղ տրվեց օտարերկրյա կապիտալի ներդրմանը:

Չնայած տնտեսական առաջընթացին՝ ժողովրդավարությունը Թուրքիայում կայուն հիմքեր չունի: Ներքաղաքական վիճակը պարբերաբար խաթարվում է: 1980-ական թթ. սկսած դրա գլխավոր պատճառներից է նաև քրդական հիմնախնդիրը: Երկրի հարավարևելյան շրջաններում ռազմական բախումներ են տեղի ունենում թուրքական բանակի և քրդական ընդդիմադիր ուժերի միջև:

Արդի Թուրքիայի ***քաղաքական կյանքում առկա են մի շարք պարբերություն հակասություններ***: Թուրքական կառավարությունը նպատակ ունի երկիրը դարձնելու Եվրամիության անդամ: Սակայն ժողովրդավարական իրավունքների հաճախակի ոտնահարումները, ազգային փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող խտրականությունը և Հայոց ցեղասպանությունը չճանաչելու հանգամանքը արգելակում են Թուրքիայի մուտքը Եվրամիություն:



Քուրդ զինյալը լեռներում

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

ՄՈՀԱՄՄԱԴ ՄՈՍԱԴԵՂ
(1882–1967)



ԱՅԱԹՈԼԼԱՀ ՀՈՄԵՅՆԻ
(1900–1989)

Նշանավոր հոգևոր-քաղաքական գործիչ, հայտնի աստվածաբան:
1930-ական թթ. ի վեր պայքարում էր շահական վարչակարգի դեմ: Դեմ էր Իրանում արևմտյան արժեքների տարածմանը: Համոզված էր, որ երկիրն ունի զարգացման ուրույն ուղի: 1963 թ. աքսորվել է: 1978–1979 թթ. հեղափոխության ժամանակ վերադարձել է: Նոր սահմանադրությամբ ճանաչվել է Իրանի հոգևոր ու քաղաքական առաջնորդ: Մինչև կյանքի վերջը համարվում էր անառարկելի հեղինակություն:

Իրան

Հետպատերազմյան առաջին տարիներին Իրանի ***ներքին կյանքում ընթանում էր պայքար՝ միապետության սահմանափակման և խորհրդարանի (մեջլիս) դերի բարձրացման համար***: Երկրում աշխուժացան նաև ազգային փոքրամասնությունները:

Հայտնի քաղաքական գործիչ ***Մոհամմադ Մոսադեղի*** ջանքերով Իրանի խորհրդարանը ***1951 թ. ընդունեց նավթային արդյունաբերության ազգայնացման մասին օրենքը***: Դա առաջին հերթին ուղղված էր Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի դեմ: Շուտով Մոսադեղը դարձավ վարչապետ: ***Նրա հեղինակությունն այնքան աճեց, որ Ռեզա շահը ցրեց կառավարությունը***: Վերականգնվեցին Արևմուտքի երկրների դիրքերը Իրանում:

Սակայն Իրանին անհրաժեշտ էին բարեփոխումներ: Դա գիտակցում էր նաև շահը: ***Սկսվեց բարեփոխումների մի շրջան, որի նպատակն էր արդիականացնել երկիրը, ստեղծել արդյունաբերական հասարակություն***:

Պայմաններ ստեղծվեցին մասնավոր ձեռներեցության զարգացման համար: Վերակառուցվեց բանկային համակարգը: Հողային բարեփոխման շնորհիվ միլիոնավոր գյուղացիներ հող ստացան: Միաժամանակ արդիականացվեց կրթական համակարգը, ստեղծվեցին բազմաթիվ բուհական հաստատություններ:

Չնայած ակնառու ձեռքբերումներին՝ երկրում աճում էին հակաշահական տրամադրությունները: Շատերին դուր չէր գալիս շահի արևմտամետ քաղաքականությունը: ***Երկրում թափ առավ ընդդիմադիր շարժումը, որի գլուխ կանգնեց իսլամական հոգևորականությունը***:

1978 թ. Իրանում հեղափոխություն սկսվեց: Միապետությունը տապալվեց: Մեկ տարի տևած պայքարից հետո՝ ***1979 թ. ապրիլի 1-ին, հռչակվեց Իրանի Իսլամական Հանրապետությունը***, և ընդունվեց նոր սահմանադրություն:

Սակայն ***պետական իշխանությունից վեր գործում է 12 հոգևոր առաջնորդներից (այաթոլլահներ) կազմված խորհուրդը***: Այն ի զորու է չեղյալ հայտարարելու

39 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Մերձավոր և Միջին Արևելքի երկրները

խորհրդարանի ընդունած ցանկացած օրենք: ***Այսպես Իրանը վերածվեց կրոնապետության (թեոկրատիա)***:

Փակվեցին երկրում գործող օտարերկրյա բանկերն ու ընկերությունները, վերացվեցին ամերիկյան ռազմակայանները: Սրվեցին հարաբերությունները նաև ԽՍՀՄ-ի հետ: Նորահռչակ հանրապետությունը ***պատերազմ սկսեց Իրաքի դեմ***, որը տևեց ութ տարի ***(1980–1988 թթ.)***: Սակայն այդ բախումը կողմերին դրական ոչինչ չտվեց:

Այսպիսով՝ Սառը պատերազմի դարաշրջանի ավարտին Իրանում կատարվեց վերադարձ իսլամի ավանդույթներին:

Արաբական երկրների զարգացման միտումները

Արաբական աշխարհին ընդգրկում է մի մեծ տարածաշրջան՝ Մերձավոր Արևելքից Աֆրիկայի հյուսիսով մինչև Ատլանտյան օվկիանոս: Այժմ այն ***միավորում է 22 պետություն***:

Աշխարհի ամենաբարձր՝ «Բուրջ խալիֆա» երկնաքերը (828 մ) Դուբայում՝ որպես արաբական աշխարհի զարգացման խորհրդանիշ

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

«Արաբական գարուն». ընդվզող ժողովուրդը Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեի Թահրիր հրապարակում

Օսմանյան կայսրության անկումից հետո որոշ արաբական երկրներ ստացան անկախություն կամ մանդատային կարգավիճակ՝ ***Եգիպտոս, Իրաք, Սիրիա, Լիբանան*** և այլն:

Երկրորդ աշխարհամարտից հետո անկախություն նվաճեցին ***Ալժիրը, Թունիսը, Մարոկկոն, Լիբիան*** և այլ երկրներ: Նրանց ***մի մասը զարգանում էր արևմտյան ուղիով, մյուս մասը՝ սոցիալիզմի, երրորդ խումբը առաջնորդվում էր ավանդական արժեքներով***:

Արաբական երկրները հարուստ են նավթի պաշարներով: Ճիշտ է՝ նավթը տալիս է հարստություն և բարեկեցության հնարավորություն, սակայն մյուս կողմից սահմանափակում է նրանց ինքնիշխանությունը: Նրանց նկատմամբ իրենց ազդեցությունը հաստատելու կամ պահպանելու համար պայքարում են աշխարհի հզոր տերությունները: ***Վերջիններս փորձում են թույլ չտալ, որպեսզի արաբական աշխարհը միավորվի***:

XXI դարի սկզբներին արաբական աշխարհը ենթարկվեց լուրջ քաղաքական և ռազմական ցնցումների: Դրանցում զգալի դերակատարում ունեցան իսլամիստ արմատականները և արտաքին ուժերը:

2010 թ. դեկտեմբերին սկիզբ առան և 2011 թ. ընթացքում տեղի ունեցան հեղափոխություններ, զանգվածային ելույթներ կամ քաղաքացիական պատերազմներ Հյուսիսային Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում: ***Այս իրադարձությունները ստացել են «Արաբական գարուն»***

41 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

անվանումը: Դրա արդյունքում տապալվեցին երկարամյա շատ վարչակարգեր: Սակայն դեռևս կայունություն չի հաստատվել Լիբիայում, Իրաքում, Սիրիայում և արաբական այլ երկրներում:

Մերձավոր Արևելքում միջազգային իրադրության փորձաքարը շարունակում է մնալ ***Պաղեստինի հիմնախնդիրը***: ՄԱԿ-ի ***1947 թ. որոշմամբ Պաղեստինում պետք է ստեղծվեր երկու պետություն՝ հրեական և արաբական***: 1948 թ. ստեղծվեց Իսրայելի հրեական պետությունը, որը խոչընդոտում է արաբական պետության ձևավորմանը: Հակամարտությունը շարունակվում է նաև մեր օրերում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Փորձեք վերհանել հետպատերազմյան Թուրքիայի զարգացման առանձնահատկությունները:
2. Ո՞վ էր Թ. Օզալը և ինչ դեր է խաղացել արդի Թուրքիայի համար:
3. Ինչ ազդեցություն ունի քրդական հիմնախնդիրը Թուրքիայի կյանքում:
4. Ինչն էր բնորոշ Իրանի ներքաղաքական կյանքին հետպատերազմյան առաջին տարիներին:
5. Որո՞նք էին 1978–1979 թթ. իրանական հեղափոխության հիմնական արդյունքները:
6. Ինչպիսի՞ փոփոխությունների ենթարկվեց հետպատերազմյան արաբական աշխարհը:
7. Արաբական աշխարհի երկրների զարգացման ինչ ուղիներ գիտեք:
8. Երբ է սկսվել «Արաբական գարունը» և ինչ հետևանքներ է ունեցել:
9. Ինչպիսին է իրավիճակը արդի արաբական աշխարհում (օգտվեք նաև մամուլի և համացանցի նյութերից):
10. Երբ և ինչպես է առաջացել Պաղեստինի հիմնախնդիրը:

Քննարկման հարց

Ձեր կարծիքով ինչո՞ւ է այդքան երկար շարունակվում արաբա-իսրայելական հակամարտությունը Պաղեստինում:

Նոր հասկացություններ, անուններ

Զինվորական հեղաշրջում, Թուրգութ Օզալ, քրդական հիմնախնդիր, Մոհամմադ Մոսադեղ, Իրանի Իսլամական Հանրապետություն, կրոնապետություն (թեոկրատիա), Ալժիր, Թունիս, Լիբիա, Սիրիա, Իրաք, «Արաբական գարուն», Պաղեստինի հիմնախնդիր

42 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

20 ԱՐԴԻԱԿԱՆԱՑԱԾ ԱՐԵՎԵԼՔԸ

«Ճապոնական հրաշքը»

Երկրորդ աշխարհամարտից հետո՝ մինչև 1952 թ., Ճապոնիայում շարունակվում էր ամերիկյան ռազմակալումը: ԱՄՆ–ի աջակցությամբ ակտիվացան ճապոնական առաջադիմական ուժերը: Նրանց ջանքերով էլ երկրում իրականացվեցին արմատական բարեփոխումներ:

Կարճ ժամկետում Ճապոնիան ապառազմականացվեց ու դարձավ ժողովրդավարական երկիր: 1947 թ. ընդունվեց նոր սահմանադրություն: Ճիշտ է՝ պահպանվել է միապետությունը, սակայն ***կայսրն*** այլևս չունի իրական իշխանություն. նա ամենից առաջ ***ազգի միասնության խորհրդանիշն է***: Բարձրագույն օրենսդիր իշխանությունը պատկանում է երկպալատ խորհրդարանին: Խորհրդարանում մեծամասնություն կազմող կուսակցությունը ձևավորում է Ճապոնիայի կառավարությունը:

«Ճապոնական ոգի, եվրոպական գիտելիքներ» կարգախոսի ներքո երկիրը բուժեց պատերազմական վեր-

Ճանապարհային ցանց քաղաքամայր Տոկիոյի կենտրոնում

43 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

քերը և անցավ տնտեսության զարգացմանը: ***1950–1980–ական թթ. երկրի համախառն արտադրանքն ավելացավ շուրջ հինգ անգամ***: Զարգացան հատկապես մետաղաձուլությունը, նավաշինությունը, սարքաշինությունը, ավտոմեքենաշինությունը, էլեկտրոնիկան: Դրան մեծապես նպաստեց գիտության և տեխնոլոգիաների աննախընթաց վերելքը: Ճապոնիան ինքը սկսեց կապիտալ արտահանել այլ երկրներ:

Այս ամենի շնորհիվ նա դարձավ աշխարհի տնտեսական երրորդ խոշոր կենտրոնը՝ առաջ թողնելով միայն ԱՄՆ–ին և Եվրոպական համագործակցությանը: Իսկ 1980–ական թթ. սկզբին մեկ շնչի եկամտի ցուցանիշով նույնիսկ գերազանցեց աշխարհի գերհզոր երկիր ԱՄՆ–ին:

«Ճապոնական հրաշքի» գլխավոր նախապայմանը հասարակության ամուր հիմքերն էին, այնպիսի արժեքներ, ինչպիսին են ***աշխատանքային բարձր կարգապահությունը, գիտելիքի և նորարարության հանդեպ հարգանքն ու բուռն ձգտումը***:

Պատահական չէ, որ Ճապոնիայի փորձը ուղենիշ ծառայեց հեռավորարևելյան մի շարք երկրների զարգացման համար՝ Հարավային Կորեա, Սինգապուր, Թայվան և այլն:

Արդիականացման չինական ուղին

Երկրորդ աշխարհամարտի ավարտին Չինաստանն ազատագրվեց ճապոնական բռնազավթումից և միավորվեց: Սակայն 1946–1949 թթ. երկրում ծավալվեց քաղաքացիական պատերազմ՝ համայնավարների ու գոմինդանականների միջև: ***Համայնավարները Մաո Յզեդունի գլխավորությամբ հաղթեցին, գրավեցին մայրաքաղաք Պեկինը: Նրանք 1949 թ. հոկտեմբերի 1–ին հռչակեցին Չինական Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) ստեղծումը: Գոմինդանականները Չան Կայշիի գլխավորությամբ ամրացան Թայվան կղզում և ստեղծեցին չինական երկրորդ պետությունը***:

ՉԺՀ–ն կայացավ ԽՍՀՄ–ի անմիջական օգնությամբ: Նրա ղեկավարներն ընդօրինակեցին հասարակության խորհրդային տարաձևը: Ազգայնացվեցին և պետական վերահսկողության տակ դրվեցին արտադրության բոլոր



ՄԱՈ ՅԶԵԴՈՒՆ
(1893–1976)

Չինաստանի կոմունիստական կուսակցության և պետության ղեկավար: Կրթությամբ՝ մանկավարժ: 1920–ական թթ. ընդգրկվել է կոմունիստական կուսակցության շարքերը՝ արտահայտելով գյուղացիության շահերը: Բարդ էին հարաբերությունները Գոմինդանի հետ: Մերթ միավորվում էին, մերթ կատաղի պայքարում: Երկրորդ աշխարհամարտի տարիներին համագործակցում էին ընդդեմ ճապոնական զավթիչների: Պատերազմից հետո Մոսկվայի օժանդակությամբ համայնավարները հասան գերակայության:
1949 թ.՝ ՉԺՀ–ի հռչակումից հետո, Մաոն դարձավ երկրի վարչապետը, իսկ ապա՝ նախագահը: Շարունակում էր մնալ կոմունիստական կուսակցության առաջնորդը: Հետևելով Ստալինին՝ Մաոն Չինաստանում «բուծում էր» սոցիալիզմ՝ կոմունիզմի կառուցման հեռանկարով: Արդյունքները ողբերգական էին՝ տնտեսության անկում, աղքատություն, բռնաճնշումներ:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

ԴԵՆ ՍՅԱՈՊԻՆ
(1904–1997)

Չինաստանի կուսակցական և պետական հայտնի գործիչ, ում գործունեությունը որոշիչ դեր խաղաց Չինաստանի արդի տնտեսական վերելքի համար: Նրան անվանում են «Չինական բարեփոխումների ճարտարապետ»:

հիմնական միջոցները՝ հողը, հանքահորերը, երկաթուղիները, ձեռնարկությունները: Գյուղում իրականացվեց կոլեկտիվացում:

Խորհրդային երկրի օրինակով հաստատվեց կոմկուսի մենատիրությունը: Ձևավորվեց Մաոյի պաշտամունքը: Մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը գովերգում էին ***«մեծ նավավարին»***՝ նրան վերագրելով երկրի ունեցած և չունեցած բոլոր հաջողությունները:

Մաոն 1958 թ. հայտարարեց, որ նախատեսում է «Մեծ թռիչքի» միջոցով Չինաստանում կարճ ժամկետում կառուցել կոմունիզմ: Ծրագիրը, բնական է, ձախողվեց՝ մեծ վնաս հասցնելով երկրին: Քայքայվեց տնտեսությունը, աճեց ներքին դժգոհությունը: Ինչպես ժամանակին Ստալինը, Մաոն մեղքը բարդեց «ժողովրդի թշնամիների» վրա:

Դրանից հետո նա սկսեց «մշակութային հեղափոխություն», որի ընթացքում սպանվում կամ աքսորվում էին վարչակարգի համար անհաճո մարդիկ: Այս վիճակը շարունակվեց մինչև առաջնորդի մահը (1976 թ.):

Նոր ղեկավար ***Դեն Սյաոպինը*** ճգնաժամը հաղթահարելու համար որդեգրեց հասարակության ***ասպիճանական ապդիսկանացման ուղին***: Երկրում թույլատրվեց մասնավոր կապիտալի գործունեությունը, զարգացան

Գիշերային տեսարան ժամանակակից Պեկինից

45 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

շուկայական հարաբերությունները: Օտար ձեռներեցները Չինաստանում մեծ ներդրումներ կատարեցին:

Ավանդական թեթև արդյունաբերության կողքին ձևավորվեց արդի ծանր արդյունաբերություն՝ ատոմային էներգետիկա, մեքենաշինություն, սարքաշինություն, էլեկտրոնիկա: Այս զարգացումը շարունակվում է նաև մեր օրերում: Չինացիները նպատակ ունեն 2020-ական թթ. դառնալու աշխարհի տնտեսապես ամենաառաջատար երկիրը:

Չինաստանում հաջողվեց այն, ինչը չհաջողվեց կատարել ԽՍՀՄ-ում՝ աստիճանական անցում պլանային տնտեսությունից շուկայական տնտեսության:

Արդիականացման հնդկական ուղին

Բրիտանական գաղութային տիրապետության դեմ հնդիկ ժողովրդի մղած երկարատև պայքարն ի վերջո պսակվեց հաջողությամբ: 1947 թ. Հնդկաստանը ճանաչվեց Ազգերի բրիտանական համագործակցության ***ինքնավար տիրույթ (դոմինիոն)***, իսկ երեք տարի անց դարձավ ***անկախ պետություն***: Այս ընթացքում ***Հնդկաստանից անջատվեցին*** նրա ***հյուսիսարևմտյան շրջանները***, որոնք բնակեցված էին մուսուլմաններով: Այսպես առաջացավ նաև ***Պակիստան պետությունը***:

Հնդկաստանի սահմանադրությամբ երկիրը հռչակվեց ***խորհրդարանական հանրապետություն***: Բազմալեզու և բազմակրոն պետությունում պաշտոնական լեզու դարձավ անգլերենը: ***Քաղաքական կյանքի առաջատար ուժը շարունակում էր մնալ Հնդկական ազգային կոնգրես կուսակցությունը***: Առաջին վարչապետ ընտրվեց նրա առաջնորդ ***Ջավահառլալ Ներուն***:

Տնտեսական հետամնացությունը և աղքատությունը վերացնելու նպատակով պետությունն իրականացրեց մի շարք բարեփոխումներ: Որոշվեց համադրել պետական և մասնավոր տնտեսաձևերը: Այս ծրագիրը շարունակեց հաջորդ վարչապետը՝ ***Ինդիրա Գանդին***:

Կատարվեց հողային բարեփոխում: Հողազուրկ գյուղացիները հող ստացան: Պետությունը նրանց միջոցներ տրամադրեց ոռոգի կանգնելու և զարգանալու համար: Եվ այսօր հնդկական գյուղատնտեսությունն ապահո-



ՋԱՎԱՀԱՌԼԱԼ ՆԵՐՈՒ
(1889–1964)

Հնդկաստանի պետական գործիչ, հանրապետության հիմնադիրը: Մասնագիտությամբ՝ իրավաբան:
1919 թ. անդամակցել է Ազգային կոնգրեսին, դարձել Մ. Գանդիի աշակերտն ու համախոհը: Ակտիվ մասնակցել է հակաբրիտանական պայքարին:
1947 թ. Հնդկաստանը ճանաչվեց բրիտանական դոմինիոն, և Ներուն դարձավ նրա առաջին վարչապետը: Մեծ եռանդ ներդրեց նրա անկախության հռչակման գործում 1950 թ.: Շուրջ 15 տարի ղեկավարելով անկախ Հնդկաստանի կառավարությունը (մինչև 1964 թ.)՝ նա մշակեց և իրագործեց համալիր ծրագիր երկրի զարգացման համար:

46 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

վում է 1 միլիարդից ավելի բնակչություն ունեցող երկրի կարիքները:

Տպավորիչ էին արդյունաբերական զարգացման արդյունքները: 1950–1980–ական թթ. Հնդկաստանը ստեղծեց արդիական տնտեսություն՝ մետաղաձուլություն, քիմիական արդյունաբերություն, ատոմային էներգետիկա, էլեկտրոնիկա, մեքենաշինություն և այլն: Ձևավորվեց տեխնիկական մտավորականություն: Հետաքրքիր է, որ այս ամենն արվեց պետության մշակած հնգամյա պլաններով:

Հաջողությունների գլխավոր երաշխիքը հնդկական ավանդական հոգևոր արժեքների և եվրոպական ժողովրդավարական սկզբունքների համադրումն է:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հետպատերազմյան առաջին տարիներին ինչպիսի՞ փոփոխություններ կատարվեցին Ճապոնիայում:
2. Ներկայացրեք «ճապոնական հրաշքի» պատճառները: Դասագրքի և ինքնուրույն ձեռք բերած փաստերի միջոցով հիմնավորեք, որ Ճապոնիան գերզարգացած երկիր է:
3. Ի՞նչ ուժերի միջև ընթացավ քաղաքացիական պատերազմը Չինաստանում: Ե՞րբ է հռչակվել ՉԺՀ-ն:
4. Ձեր կարծիքով ինչո՞ւ Մաոյի «մեծ թռիչքի» քաղաքականությունը ձախողվեց:
5. Ներկայացրեք արդիականացման չինական ուղին:
6. Ինչո՞վ էր պայմանավորված Հնդկաստանի ազատագրական պայքարի հաջողությունը:
7. Թվարկեք Հնդկաստանի արդիականացման գլխավոր արդյունքները:

Գործնական աշխատանք

Կատարեք «Տրամագիր» վարժությունը՝ համեմատելով Չինաստանի, Ճապոնիայի և Հնդկաստանի արդիականացման գործընթացները:

Նոր հասկացություններ, անուններ, տերմիններ

Ազգի միասնության խորհրդանիշ, «Ճապոնական հրաշք», Չինական ժողովրդական Հանրապետություն, Հարավային Կորեա, Սինգապուր, Թայվան, Մաո Ցզեդուն, «մեծ թռիչք», «մեծ նավավար», Դեն Սյաոպին, Ինդիրա Գանդի

47 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

21 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1945–1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սառը պատերազմի տարիների միջազգային հարաբերությունները բնութագրվում էին երկու գերտերությունների՝ ԱՄՆ–ի և ԽՍՀՄ–ի քաղաքական, տնտեսական ու զաղափարական հակամարտությամբ: Սակայն դա չվերաճեց լայնածավալ պատերազմի: Պատճառը ՆԱՏՕ–ի և Վարշավյան դաշինքի միջև ձևավորված ռազմական հավասարակշռությունն էր: Պակաս կարևոր չէր նոր միջազգային–իրավական համակարգի առկայությունը:

Միավորված ազգերի կազմակերպությունը

Երկրորդ աշխարհամարտի ավարտին ակնհայտ էր դարձել Ազգերի լիգայի փոխարեն մի նոր միջազգային կազմակերպություն ստեղծելու անհրաժեշտությունը: Այն պետք է դառնար իրական միջոց աշխարհը նոր պատերազմների արհավիրքներից փրկելու համար: ***1945 թ. ստեղծվեց Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ)***: Հիմնադիր համագումարին մասնակցում էր 51 պետություն: Ընդունվեց ՄԱԿ–ի կանոնադրությունը: Նրա կենտրոնակայանը հաստատվեց Նյու Յորքում:

ՄԱԿ–ի դրոշը

- *2019 թ. դրությամբ ՄԱԿ–ն ուներ 193 անդամ պետություն: Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ–ին անդամակցել է 1992 թ. մարտի 2–ին:*

ՄԱԿ–ի կենտրոնակայանի շենքը Նյու Յորքում

ՄԱԿ–ի գլխավոր մարմիններն են ***Գլխավոր համաժողովը (ասամբլեա), Անվտանգության խորհուրդը և Քարտուղարությունը***: Այժմ ՄԱԿ–ի պաշտոնական լեզուները վեցն են՝ անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը, իսպաներենը, չինարենը և արաբերենը:

Գլխավոր համաժողովը հրավիրվում է առնվազն ***տարին մեկ անգամ***: Նրա աշխատանքներին մասնակցում են բոլոր անդամ պետությունների ներկայացու-

48 von 99 12.02.2021, 11:37

Հոդվածներ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից»
(ընդունվել է 1948 թ. դեկտեմբերի 10–ին)

ՀՈԴՎԱԾ 1. Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար՝ իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով, և պարտավոր են միմյանց վերաբերվել եղբայրության ոգով:

ՀՈԴՎԱԾ 5. Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատժի:

ՀՈԴՎԱԾ 23. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, արդարացի ու նպաստավոր աշխատանքային պայմանների և գործազրկությունից պաշտպանվելու իրավունք...

ՀՈԴՎԱԾ 25. Յուրաքանչյուր ոք այնպիսի կենսամակարդակի իրավունք ունի, որը պատշաճ է իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, առողջապահությունը և անհրաժեշտ սոցիալական ծառայությունները...

ցիչները: Իրավասու է քննարկելու բոլոր այն հիմնախնդիրները, որոնք առնչվում են աշխարհում խաղաղության և անվտանգության պահպանմանը: Որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ:

Անվտանգության խորհուրդը մշտապես գործող մարմին է: Ունի 5 մշտական անդամ՝ ***ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա***, և 10 ոչ մշտական անդամ: Անվտանգության խորհրդի որոշումներն ընդունվում են մշտական անդամների միաձայնության պայմանով և պարտադիր են ՄԱԿ–ի բոլոր անդամ պետությունների համար: Անհրաժեշտության դեպքում Անվտանգության խորհուրդը որոշում է կայացնում այս կամ այն հարցում զինված ուժ կիրառելու մասին: Այդ ուժը տրամադրում են անդամ պետությունները:

Քարտուղարությունն ապահովում է ՄԱԿ–ի և նրա մարմինների բնականոն գործունեությունը: Ղեկավարում է գլխավոր քարտուղարը, ով ՄԱԿ–ի ամենաբարձր պաշտոնյան է: Գլխավոր քարտուղարն ընտրվում է 5 տարի ժամկետով Գլխավոր ասամբլեայի կողմից՝ Անվտանգության խորհրդի երաշխավորությամբ:

ՄԱԿ–ին կից գործում են մի շարք մասնագիտացված հանձնախմբեր, որոնք զբաղվում են տնտեսական, մշակութային և սոցիալական տարաբնույթ հարցերով:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

35 պետությունների ղեկավարները Հելսինկիում ստորագրում են «Եզրափակիչ ակտը», 1975 թ.

Նոր միջազգային-իրավական համակարգի ձևավորումը: ԵԱՀԽ

ՄԱԿ-ի կանոնադրությունը սկիզբ դրեց նոր միջազգային-իրավական համակարգի ձևավորմանը: Այդ գործընթացը թափ ստացավ հատկապես 1970-ական թթ.: ***1975 թ. Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում*** 33 եվրոպական պետությունների և ԱՄՆ-ի ու Կանադայի ղեկավարների հրավիրած ***ԵԱՀԽ-ն՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցությունը***, ընդունեց մի կարևոր փաստաթուղթ՝ «Եզրափակիչ ակտը»: Դրանում ամրագրվեցին ***միջպետական հարաբերությունների 10 սկզբունքներ***, որոնք կազմում են նոր միջազգային համակարգի հենքը: Դրանցից են՝ ինքնիշխան պետությունների սահմանների անխախտելիություն, ժողովուրդների իրավահավասարություն ու ինքնորոշման իրավունք, պետությունների տարածքային ամբողջականություն, վեճերի խաղաղ կարգավորում, պետությունների ներքին գործերին չմիջամտում, մարդու իրավունքների ու ազատությունների հարգում և այլն:

- *Հայաստանի Հանրապետությունը «Եզրափակիչ ակտը» ստորագրել է 1992 թ. հուլիսի 8-ին:*

50 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Դրվագներ կորեական պատերազմից
Աջից՝ հյուսիսկորեական կործանված տանկ,
Ստորև՝ հարավկորեացի փախստական կին

Տարածաշրջանային պատերազմներ և հակամարտություններ

Ինչպես նշել ենք, սառը պատերազմը արտահայտվում էր նաև տեղական բնույթի պատերազմներով:

1950–1953 թթ. ***Կորեայում*** տեղի ունեցավ քաղաքացիական պատերազմ, որին միջամտեցին մի կողմից՝ ԱՄՆ–ը, մյուս կողմից՝ ԽՍՀՄ–ն ու Չինաստանը: Կողմերին չհաջողվեց հասնել առավելության: ***Կորեան բաժանվեց երկու հակադիր՝*** հյուսիսային (համայնավարական) և հարավային (ժողովրդավարական):

Երկարատև պատերազմ ծավալվեց Հնդկաչինում: Նախ՝ Ֆրանսիան, ստանալով ԱՄՆ–ի աջակցությունը, փորձեց վերականգնել իր գաղութային տիրապետու-

Ջախջախված իսրայելական տանկ. դրվագ արաբա-իսրայելական չորրորդ պատերազմից, 1973 թ.

51 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

թյունը: Սակայն Խորհրդային Միությունը և Չինաստանը օգնեցին ***Վիետնամի*** համայնավարներին, և ֆրանսիական կողմը ստիպված էր լքել տարածաշրջանը: Նրանց փոխարինելու եկան ամերիկացիները: Սկսվեց մի նոր պատերազմ ***(1964–1973 թթ.)***: Այս անգամ էլ Վիետնամի համայնավարները, օգնություն ստանալով ԽՍՀՄ–ից, մեծ կորուստների գնով հասան հաղթանակի:

Արդեն նշել ենք, որ 1940–ական թթ. վերջերից Մերձավոր Արևելքում սկիզբ էր առել արաբա–իսրայելական սուր հակամարտությունը: Սկսվեցին արաբա–իսրայելական արյունալի պատերազմներ: ԱՄՆ–ն օգնում էր Իսրայելին, իսկ ԽՍՀՄ–ը՝ արաբներին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ է ստեղծվել Միավորված ազգերի կազմակերպությունը:
2. Որո՞նք են նրա գլխավոր մարմինները:
3. Ներկայացրեք դրանց գործունեությունը:
4. Թվարկեք ԵԱՀԽ «Եզրափակիչ ակտով» ամրագրված միջազգային հարաբերությունների մի քանի սկզբունքներ:
5. Սառը պատերազմի տարիներին տարածաշրջանային ի՞նչ պատերազմներ են տեղի ունեցել: Ինչո՞վ ավարտվեցին դրանք:

Գործնական աշխատանք

Գծապատկերի միջոցով ներկայացրեք ՄԱԿ–ի կառույցը:

Նոր հասկացություններ, անուններ

Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ), Գլխավոր ասամբլեա, Անվտանգության խորհուրդ, Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցություն (ԵԱՀԽ), Կորեայի բաժանում, Վիետնամ, արաբա–իսրայելական պատերազմներ

52 von 99 12.02.2021, 11:37

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորվեց ուժերի նոր հարաբերակցություն: Երկու գերհզոր երկրների՝ ԽՍՀՄ–ի և ԱՄՆ–ի միջև պայքար ծավալվեց աշխարհում գերիշխանության հասնելու համար, առաջացավ երկբևեռ աշխարհակարգը: Նրանց միջև ծայր առավ սառը պատերազմը, որը շարունակվեց մինչև 1990–ական թթ. սկիզբը:

   - *Բնութագրեք սառը պատերազմը: Ներկայացրեք երկու հակադիր ռազմաքաղաքական խմբավորումների կազմը, նպատակները: Ինչո՞վ ավարտվեց սառը պատերազմը:*

2. Հետպատերազմյան շրջանում Արևմուտքի առաջատար երկրները արմատական առաջընթաց ունեցան կյանքի բոլոր բնագավառներում: 1970–ական թթ. նրանք թևակոխեցին զարգացման նոր փուլ, որն ստացել է հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակություն անունը:

   - *Ներկայացրեք ԱՄՆ–ի տնտեսական հզորացման արդյունքները: Ո՞ւմ օգնության շնորհիվ արագ ոտքի կանգնեցին և զարգացան Արևմտյան Եվրոպայի երկրները: Միայն դա բավարա՞ր էր նրանց տնտեսության թռիչքաձև զարգացման համար:*

3. Երկրորդ աշխարհամարտից հետո Խորհրդային Միությունը կարողացավ կարճ ժամկետում ամոքել պատերազմից ստացած վերքերը: Ապրեց հաջողությունների ու դժվարությունների ժամանակաշրջան:

   - *Ինչո՞ւ Ստալինը պատերազմից անմիջապես հետո դիմեց քաղաքական բռնաճնշումների: Ներկայացրեք խորհրդային երկրի նվաճումները գիտության բնագավառում: Բնութագրեք ԽՍՀՄ–ի պարտության «ձնհալի» և «լճացման» շրջանները: Ինչո՞ւ խորհրդային հասարակության բարեփոխումների փորձերը անհաջողության մատնվեցին:*

4. 1980–ական թթ. կեսերին Խորհրդային Միությունը հայտնվել էր տնտեսական խոր ճգնաժամի մեջ: Երկրի նոր ղեկավար Մ. Գորբաչովը և նրա շրջապատը փորձեցին վերակառուցման քաղաքականության միջոցով արդիականացնել խորհրդային հասարակությունը: Հասարակության որոշակի ազատականացման պայմաններում նախկինում զսպված բազմաթիվ և տարաբնույթ հակասությունները դրսևորվեցին նոր ուժով:

- *Պարզաբանեք վերակառուցման քաղաքականության էությունը: Ինչո՞ւ այն ձախողվեց: Անխուսափելի՞ էր արդյոք ԽՍՀՄ–ի փլուզումը. հիմնավորեք պատասխանը: Ինչ է ԱՊՀ–ն, ե՞րբ է ստեղծվել:*

5. ԽՍՀՄ–ի ռազմաքաղաքական ճնշման տակ Երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորվեց սոցիալիզմի համակարգը: Սոցիալիստական երկրների մեծ մասում հաստատվեց հասարակության խորհրդային տարաձևը: ԽՍՀՄ–ին միաժամանակ հաջողվեց իր վերահսկողության տակ պահել սոցերկրների ընկերակցությունը: Սակայն աստիճանաբար հասունանում էր ճգնաժամը:

- *Թվարկեք սոցիալիզմի ճամբարի պետությունները: Հասարակության խորհրդային տարաձևը ո՞ր պետություններում հաստատվեց: Ինչո՞ւ որոշ սոցերկրների բարեփոխման փորձերը ձախողվեցին: Պարզեք սոցիալիզմի համաշխարհային համակարգի փլուզման պատճառները:*

6. XX դարի երկրորդ կեսերին փլուզվեց համաշխարհային գաղութային համակարգը, պատմության թատերաբեմից հեռացան գաղութատեր կայսրությունները: Նորանկախ երկրները զարգացման դժվարին ուղի անցան: Լատինական Ամերիկայի և Ասիայի ավելի վաղ անկախացած երկրների հետ նրանք ձևավորեցին «Երրորդ աշխարհը»:

- *Ներկայացրեք գաղութային համակարգի փլուզման պատճառները: Թվարկեք նորանկախ մի քանի երկրներ տարբեր մայրցամաքներից: Ինչ է Երրորդ աշխարհը: Միջազգային ինչ նոր կազմակերպություն ստեղծեցին այս աշխարհի պետությունները, ո՞րն է դրա գլխավոր նպատակը:*

7. Մերձավոր և Միջին Արևելքի երկրները Երկրորդ աշխարհամարտից հետո ապրեցին հակասական մի ժամանակաշրջան: Թուրքիան փորձում է մերձենալ եվրոպական չափանիշներին, ստեղծել արդիական հասարակություն: Սակայն նա դեռ հեռու է ժողովրդավարական երկիր լինելուց: Իրանում տապալվեց շահական միապետությունը, հաստատվեց իսլամական հանրապետություն: Արաբական երկրները հետպատերազմյան տարիներին անկախացան ու բռնեցին արդիականացման ուղին:

- *Եվրոպական միություն մտնելու համար ինչ ինդիրներ պետք է լուծի Թուրքիան: Իրանում հեղափոխությունից հետո հաստատվել է կրոնապետություն (թեոկրատիա). ինչ է թեոկրատիան, պատմությունից կարո՞ղ եք հիշել նման այլ պետություններ: Նշեք արաբական աշխարհի երկրների զարգացման հիմնական ուղիները: Դասագրքի և*

լրացուցիչ աղբյուրների միջոցով պարզեք, թե ինչ արդյունք է տվել «Արաբական գարունը»:

8. Ժամանակակից Ճապոնիայի, Չինաստանի և Հնդկաստանի զարգացման փորձն ապացուցում է, որ հասարակության արդիականացումը բոլորովին էլ չի նշանակում պատճենել զարգացած երկրների անցած ուղին: Արդի հասարակությունը ձևավորվում է համաշխարհային պատմական առաջընթացի գլխավոր միտումների և ազգային արժեքների համադրման արդյունքում:

   - *Որոնք են «ճապոնական հրաշքի» պատճառները և արդյունքները: Պարզաբանեք Չինաստանի արդիականացման առանձնահատկությունները: Ներկայացրեք Հնդկաստանի արդիականացման արդյունքները:*

9. Հետպատերազմյան տարիներին միջազգային հարաբերություններում արձանագրվեցին էական տեղաշարժեր: Ստեղծվեց Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ): Սառը պատերազմի տարիներին բնորոշ էին տեղական բնույթի պատերազմները: Պատերազմող կողմերի թիկունքին կանգնած էին երկու հակամարտող գերտերությունները՝ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը:

   - *Երբ է ստեղծվել ՄԱԿ-ը: Ո՞րն է նրա գլխավոր նպատակը: Թվարկեք հելսինկյան «Եզրափակիչ ակտ»-ում ամրագրված կարևոր սկզբունքներից մի քանիսը: Սառը պատերազմի տարիներին տեղի ունեցած տարածաշրջանային ինչ պատերազմներ գիտեք, ինչ վտանգ էին դրանք պարունակում:*

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ԱՇԽԱՐՀԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

22 ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ

Զարգացման առանձնահատկությունները

Արդեն ասվել է, որ 1970-ական թվականներից Արևմուտքի երկրները մտել են զարգացման նոր շրջափուլ: Դրանցում ձևավորվել է ***հետարդյունաբերական հասարակություն***: XX դարի վերջին և XXI դարի սկզբին հստակ ուրվագծվեցին այն միտումները, որոնք պայմանավորում են ժամանակակից հասարակության զարգացման առանձնահատկությունները: Մասնավորապես արդի փուլում ***արտադրության կարևորագույն արդյունքը*** նյութական բարիքները չեն, այլ ***տեղեկույթը***:

Մարդկությունը կուտակել է մեծ քանակությամբ նյութական ու մտավոր միջոցներ: Այժմ կարևորվում է դրանց կառավարման և արդյունավետ օգտագործման խնդիրը: Իզուր չէ, որ համակարգիչը և կապի ու հաղորդակցության արդիական միջոցները սրընթաց մուտք են գործել աշխատանքային գործունեության ամենատարբեր ոլորտներ և մարդկանց կենցաղ:

Աշխարհում հաստատվել է կապի և տեղեկատվության ***համացանց (ինտերնետ)***: Դա իսկական հեղաշրջում է առաջացրել մարդկանց մտածողության, գործելակերպի և շփումների մեջ:

Ահա թե ինչու մեր օրերում ավելի ու ավելի են կարևորվում տարբեր տեսակի ***տեղեկատվական, հաղորդակցական և կառավարման ծառայությունները***: Առաջատար երկրներում այս ոլորտում այժմ ***ընդգրկված է աշխատուժի 50–60 տոկոսը***:

Արևմուտքի զարգացած երկրներն այսօր ներկայանում են ***երկու կենտրոններով՝ ԱՄՆ և Եվրոպական Միություն***: Դրանց հասարակական-քաղաքական կյանքում շարունակում են գերակշռել ***ազգային, պահպանողական*** և ***սոցիալիստական ուժերը***:

57 von 99 12.02.2021, 11:37

Եվրոպական Միություն

Եվրոպական Միության դրոշը

Դեռ 1950-ական թթ. սկսվել էր Արևմտյան Եվրոպայի միասնացման գործընթացը: Միացյալ Եվրոպայի գաղափարը քայլ առ քայլ նյութականանում էր: Ի վերջո ***1967 թ. ձևավորվեց Եվրոպական համագործակցությունը***:

Եվրոպական երկրները 1992 թ. կնքեցին մի շարք համաձայնագրեր՝ միացյալ տնտեսական, իրավական և մշակութային տարածք ձևավորելու վերաբերյալ: Այսպես Եվրոպական համագործակցությունը վերածվեց մի նոր կազմակերպության, որը ***սկսեց գործել 1993 թ. և կոչվեց Եվրոպական Միություն (ԵՄ)***: Միության հիմնադիր 12 երկրների բնակիչները ստացան ազատ տեղաշարժվելու իրավունք: Կազմավորվեց կապիտալի, ապրանքների և ծառայությունների միացյալ շուկա: Գործածության մեջ մտավ միության դրամը՝ եվրոն:

Եվրամիության շարքերը համալրել են բազմաթիվ պետություններ, որոնց մեծ մասը նախկին սոցիալիստական երկրներ են: 2019 թ. սկզբի դրությամբ ԵՄ-ի կազմում կար 27 անդամ պետություն (չհաշված Մեծ

Եվրոպական Միության տարածքը

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Բրիտանիան, որը 2016 թ–ից սկսել էր ԵՄ–ից դուրս գալու գործընթաց):

Միացյալ Եվրոպան, սակայն, ունի իր դժվարությունները: Լուրջ խնդիր է հատկապես ազգային և համաեվրոպական արժեքների համադրումը, ազգային ինքնության պահպանումը:

2008 թ. տնտեսական ճգնաժամը արտահայտող ծաղրանկար

2008 թ. սեպտեմբերին ԱՄՆ–ում սկսված և ապա ***համաշխարհային բնույթ ստացած տնտեսական նոր ճգնաժամը*** լուրջ հիմնախնդիրներ առաջացրեց նաև ԵՄ–ի տարածքում: Որոշ պետություններ հայտնվեցին շատ ծանր վիճակում. Հունաստանը սնանկացավ, նույն վտանգի առաջ էին կանգնած Իսպանիան, Պորտուգալիան և այլն: Հիմնախնդիրները լուծել հնարավոր է Եվրամիության անդամ երկրների համատեղ ջանքերով:

Արևմուտքի զարգացած երկրները

Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Սառը պատերազմի ավարտից հետո ԱՄՆ–ը մնաց ***միակ գերտերություն***: Դրան համապատասխան էլ նա վերակառուցեց իր ներքին ու արտաքին քաղաքականությունը:

1990–ական թթ. իշխանություն եկած ժողովրդավարական կուսակցությունը վերադարձ կատարեց իր ավանդական քաղաքականությանը. մեծացրեց պետու-

2001 թ. սեպտեմբերի 11–ին Նյու Յորքի միջազգային առևտրի կենտրոնի երկու երկնաքերերի վրա կատարված ահաբեկչությունը

59 von 99 12.02.2021, 11:37

թյան միջամտությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Տնտեսությունը սկսեց կայուն զարգանալ, ստեղծվեցին նոր աշխատատեղեր:

Հաջորդ նախագահ, սակայն, ընտրվեց հանրապետական ***Ջորջ Բուշ Կրտսերը***: Նրա կառավարման տարիներին (2001–2009 թթ.) տնտեսության մեջ նկատվում էր լճացում, արտադրության ծավալների անկում, դոլարի արժեզրկում: Հակառակ դրան՝ պետությունը վարում էր ռազմատենչ արտաքին քաղաքականություն: Դա ավելի սուր բնույթ ստացավ ***2001 թ. սեպտեմբերի 11-ին*** իսլամական ծայրահեղականների կողմից ***Նյու Յորքում կատարված ահաբեկչությունից*** հետո:

2003 թ. ԱՄՆ-ն իր դաշնակիցների հետ ռազմակալեց ***Իրաքը***, տապալվեց Սադամ Հուսեյնի վարչակարգը: Սակայն մինչ օրս Իրաքի ներքին կյանքում կայունություն չի հաստատվել: Չեն դադարում ռազմական գործողությունները նաև ***Աֆղանստանում***:

Այս ամենին գումարվեց 2008 թ. սկսված տնտեսական ճգնաժամը, և այդ թվականի նախագահական ընտրությունների ելքը կանխորոշված էր: Հաղթեցին ժողովրդավարները, և ***ԱՄՆ-ի պատմության մեջ առաջին անգամ նախագահ դարձավ աֆրոամերիկացին՝ Բարաք Օբաման***: Նա նախագահեց երկու շրջան:

ԲԱՐԱՔ ՕԲԱՄԱ
(1961)

ԱՄՆ-ի պատմության մեջ առաջին աֆրոամերիկացի նախագահը (2009–2017 թթ.):

2016 թ. կայացած ընտրություններում կրկին հաղթեցին հանրապետականները և նախագահ ընտրվեց միլիարդատեր ***Դոնալդ Թրամփը***:

Մեծ Բրիտանիա: Մ. Թեթչերից հետո այս երկրի ներքին և արտաքին քաղաքականության մեջ էական տեղաշարժեր կատարվեցին 1997 թ. սկսած: Իշխանության եկած ***լեյբորիստական կուսակցությունը կոշտ քաղաքականության միջոցով ապահովեց երկրի բարգավաճումը***: Երկիրը դարձավ համաշխարհային գործընթացների ակտիվ մասնակից: Մասնավորապես սերտացան հարաբերությունները Եվրամիության հետ: Այդուհանդերձ, Մեծ Բրիտանիան շարունակում է սատարել ԱՄՆ-ի բոլոր գործողություններին:

ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓ
(1946)

2016 թ. ընտրություններում հաղթեցին պահպանողականները: Երկրի պատմության մեջ ***երկրորդ անգամ***

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

ԹԵՐԵԶԱ ՄԵՅ
(1956)

ԷՄԱՆՈՒԵԼ ՄԱԿՐՈՆ
(1977)

ԱՆԳԵԼԱ ՄԵՐՔԵԼ
(1954)

վարչապետ դարձավ կին քաղաքական գործիչ՝ Թերեզա Մեյը:

Ֆրանսիա: Դարավերջին երկրի ներքին կյանքում առկա էին լուրջ խնդիրներ՝ արդյունաբերության ցածր աճ, մեծ գործազրկություն: Դա էր պատճառը, որ ***1995 թ.*** ընտրություններում սոցիալիստները պարտվեցին: Նախագահ ընտրվեց ***պահպանողականների առաջնորդ Ժակ Շիրակը***: Ուժեղ ձեռքի քաղաքականության կողմնակից այս նախագահը կտրուկ քայլերով կարողացավ առողջացնել տնտեսությունը՝ մեծ ներդրումներ, հարկային բարեփոխումներ, կենսամակարդակի բարձրացում: Միաժամանակ Ֆրանսիան վարում էր ճկուն և հավասարակշռված արտաքին քաղաքականություն: Նա Եվրամիության «ճարտարապետներից» է:

Երկրի ներքաղաքական դժվարությունները և համաշխարհային տնտեսական ճգնաժամը հանգեցրին նրան, որ ***2012 թ.*** նախագահական ընտրություններում ***կրկին հաղթեցին սոցիալիստները***: Իսկ ***2017 թ. մայիսին*** նախագահ ընտրվեց նախկին սոցիալիստ 39-ամյա ***Էմանուել Մակրոնը***:

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն: Արդեն գիտեք, որ 1990 թ. Գերմանիան միավորվեց: Արևելյան Գերմանիան իր զարգացմամբ հետ էր մնում, և այն հաղթահարելու նպատակով կատարվեցին մեծ ներդրումներ: ***Միավորված Գերմանիայի առաջին վարչապետ Հ. Քոլը ծրագրեց խնայողության միջոցով ստեղծել արդիական տնտեսություն***: Այդ քաղաքականությունը շարունակեց հաջորդ կառավարությունը: Իր տնտեսական, քաղաքական և մշակութային ***զարգացմամբ Գերմանիան այժմ աշխարհում զբաղեցնում է առաջին տեղերից մեկը***:

2005 թ. Անգելա Մերքելը դարձավ Գերմանիայի առաջին կին վարչապետը՝ կանցլեր: 2018 թ. նա այդ պաշտոնում հաստատվեց չորրորդ անգամ անընդմեջ:

Իտալիա: Ժամանակակից Իտալիան դասվում է աշխարհի զարգացած երկրների շարքին: Նրա տնտեսության առաջատար ճյուղը մեքենաշինությունն է: Դարավերջի ներքաղաքական կյանքը երկրում կարելի է բնորոշել իբրև «անկայուն հավասարակշռություն»: Վերջին

61 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

տարիներին իշխանության մոտ ավելի հաճախ պահպանողական ուժերն էին՝ ***Սիլվիո Բեռլուսկոնիի*** գլխավորությամբ: Պայքար էր տարվում կաշառակերության ու ստվերային ձեռներեցության դեմ՝ հանուն երկրի կայուն զարգացման:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է կոչվում Արևմուտքի զարգացած երկրներում ձևավորված արդի հասարակությունը:
2. Ինչ փոփոխություններ է առաջացրել գիտության բուռն վերելքը արդի հասարակության կյանքում:
3. Օգտվելով դասագրքի ներածությունից և այս դասանյութից՝ ներկայացրեք ժամանակակից հասարակության առանձնահատկությունները:
4. Ե՞րբ է սկսվել Արևմտյան Եվրոպայի միասնացման գործընթացը: Ինչ համաեվրոպական կառույց ստեղծվեց և ե՞րբ: Ե՞րբ է ստեղծվել Եվրոպական Միությունը: Ներկայումս քանի՞ անդամ ունի:
5. Բնութագրե՛ք ԱՄՆ–ի ներքին և արտաքին քաղաքականությունը արդի փուլում:
6. Ինչ ընդհանուր միտումներ կարող եք նշել Արևմուտքի զարգացած երկրների տնտեսական և քաղաքական կյանքում:

Քննարկման հարցեր

Խմբային աշխատանքի օգնությամբ պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

1. Ինչո՞ւ Արևմուտքի զարգացած գրեթե բոլոր երկրներում վերջին նախագահական կամ խորհրդարանական ընտրություններում իշխող կուսակցությունները պարտվեցին:
2. Համաձա՞յն եք այն պնդմանը, որ ԱՄՆ–ը մնում է աշխարհի միակ գերհզոր պետությունը. հիմնավորե՛ք ձեր տեսակետը:

Նոր հասկացություններ, անուններ

Համացանց, Եվրոպական Միություն, Ջորջ Բուշ Կրտսեր, Բարաք Օբամա, Դոնալդ Թրամփ, Թերեզա Մեյ, Ժակ Շիրակ, Էմանուել Մակրոն, Անգելա Մերքել, Սիլվիո Բեռլուսկոնի

62 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

23 ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԸ

Զարգացման առանձնահատկությունները

Սոցիալական անհավասարության մի քանի դրսևորումներ

ԽՍՀՄ-ի անկումից հետո (1991 թ.) ***հետխորհրդային տարածքում տեղի էր ունենում անցում ամբողջատիրությունից դեպի ժողովրդավարություն***:

Այդ շրջափուլի սկզբում նորանկախ պետությունները կանգնել էին տնտեսական, քաղաքական և սոցիալական մեծ դժվարությունների առջև: ***Դրանք հաղթահարելու նպատակով իրականացվեցին հետևյալ կարևոր քայլերը***՝

- տնտեսական կյանքի ազատականացում և շուկայական հարաբերությունների զարգացում,
- մասնավոր սեփականության զարգացում,
- կառավարման վարչահրամայական համակարգի կազմալուծում,
- դրամական նոր համակարգերի ստեղծում:

Անցումային շրջանում ***սեփականաշնորհվեցին*** հազարավոր ձեռնարկություններ: ***Զևավորվեց ձեռնարկատերերի խավը***: Գյուղատնտեսության մեջ վերափոխումը հանգեցրեց ***կոլեկտիվ տնտեսությունների վերացմանը*** և հողի սեփականաշնորհմանը: ***Ստեղծվեցին մասնավոր գյուղացիական տնտեսություններ***:

Այս գործընթացը համեմատաբար սահուն ընթացավ մերձբալթյան հանրապետություններում՝ Լիտվա, Լատվիա, Էստոնիա: Նրանք այժմ ընդգրկվել են եվրոպական կառույցներում:

Սյուս հանրապետություններում ակնառու էին բացասական հետևանքները: Գործազրկության, չնչին աշխատավարձերի, ապրանքների բարձր գների պայմաններում ***հասարակության մեծ մասը հայտնվեց ծայրահեղ աղքատության մեջ***: Դրան հակառակ՝ ***առանձին անհատներ կայծակնային արագությամբ կուտակեցին ահռելի կարողություն***: Դրա աղբյուրն առաջին հերթին ***«վայրի սեփականաշնորհումն»*** էր. «ճարպիկները»

չնչին գներով ձեռք բերեցին նախկին պետական սեփականության մեծ մասը:

Հասարակության ծայրահեղ բևեռացումը դարձել է հետխորհրդային երկրների քաղաքական անկայունության հիմնական պատճառը՝ տեղիք տալով բռնությունների, ընդրակեղծիքների, «գունավոր հեղափոխությունների»:

Այս երկրների քաղաքական համակարգը դեռևս կատարելագործման կարիք ունի: Ճիշտ է՝ բոլորն ընդունել են սահմանադրություն և իրենց հռչակել ժողովրդավարական պետություններ, բայց թույլ են քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները: ***Դրանք, չնչին բացառություններով, միավորված են ոչ թե գաղափարների, այլ «առաջնորդների» շուրջը***:

Նորանկախ երկրների վրա ազդում են նաև ***արտաքին գործոնները***, մասնավորապես՝ ***ԱՄՆ-ի, Եվրամիության և Ռուսաստանի քաղաքականությունը***: ԱՄՆ-ը և Եվրամիությունը ձգտում են հաստատելու իրենց ներկայությունը հետխորհրդային տարածքում, մինչդեռ Ռուսաստանը չի ուզում կորցնել իր դիրքերը:

Ռուսաստանի Դաշնություն

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանի պատմության մեջ սկսվեց նոր դարաշրջան: Նախագահ ***Բ. Եցինի կառավարման տարիները (1991-1999 թթ.)*** բարդ և հակասական էին. մի կողմից՝ տնտեսական քայքայում և կառավարման համակարգի կազմալուծում, մյուս կողմից՝ անհաջող տնտեսական բարեփոխումներ: Դրան գումարվեց արյունալի պատերազմը Հյուսիսային Կովկասում չեչեն անջատողականների դեմ: Նախագահին այդպես էլ չհաջողվեց լուծել այս խնդիրները:

Հաջորդ նախագահ ընտրվեց ***Վլադիմիր Պուտինը***: Նրան հաջողվեց ներքին ու արտաքին ճկուն քաղաքականությամբ վերականգնել ու զարգացնել երկրի տնտեսությունը, վերափոխել կառավարման համակարգը: Մեծ միջոցներ ներդրվեցին մարդկանց բարեկեցության բարելավման համար: ***Վերականգնվեց հավատը ապագայի նկատմամբ***: Միաժամանակ Ռուսաստանի Դաշ-

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆ (1952)

Ռուս նշանավոր քաղաքական և պետական գործիչ, Ռուսաստանի Դաշնության վարչապետ՝ 1999-2000 թթ., 2008-2012 թթ., նախագահ՝ 2000-2008 թթ., կրկին նախագահ՝ 2012 թ-ից: Նրա կառավարման շրջանում ՌԴ-ն վերականգնեց համաշխարհային տերության կարգավիճակը: Սակայն երկիրը իրական ժողովրդավարության առումով դեռ լուրջ խնդիրներ ունի լուծելու, կան ավտորիտարիզմի դրսևորումներ: 2014 թ. Ղրիմի միացումից հետո երկրի միջազգային դիրքերը սասանվեցին: ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից կիրառվեցին տնտեսական պատժամիջոցներ, ՌԴ-ին հանեցին «Մեծ ութնյակ»-ից: Նոր թափ է հավաքել ԱՄՆ-ՌԴ հակամարտությունը:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

նությունը սկսեց ավելի հաստատակամ արտաքին քաղաքականություն վարել ԱՄՆ–ի, Եվրամիության, Չինաստանի, Հնդկաստանի, Բրազիլիայի և այլ երկրների հետ: ***Արդյունքում՝ Ռուսաստանը վերադարձրեց մեծ տերության իր կարգավիճակը***:

Այս հանգամանքը վճռական դեր խաղաց, և ***Պուտինը*** չորսամյա ընդմիջումից հետո երկու անգամ անընդմեջ՝ ***2012 և 2018 թթ., ընտրվեց*** Ռուսաստանի Դաշնության ***նախագահ***: Սակայն Ղրիմի հարցի հետ կապված ՌԴ–ի դեմ ԱՄՆ–ը և ԵՄ–ն կիրառեցին պատժամիջոցներ, որը լուրջ խնդիրներ է առաջացրել երկրի տնտեսական և սոցիալական կյանքում:

ԱՊՀ գործադիր կոմիտեի շենքը Բելառուսի մայրաքաղաք Մինսկում

Անկախ Պետությունների Համագործակցությունը

Կազմավորման պահին (1991 թ. դեկտեմբեր) ԱՊՀ–ին անդամագրվել էր 11 պետություն: Շուտով միացավ նաև Վրաստանը, իսկ մերձբալթյան երեք նախկին խորհրդային հանրապետությունները ինտեգրվեցին Արևմտյան Եվրոպային:

ԱՊՀ–ի կայացման ճանապարհին կարևոր քայլ էր 1993 թ. ընդունված նրա կանոնադրությունը, որը, սակայն, վավերացվեց ոչ բոլոր պետությունների կողմից: ***Այժմ նրա կազմում կա 9 լիիրավ անդամ***: Վրաստանը 2008 թ. ռուս–վրացական պատերազմից հետո դուրս եկավ ԱՊՀ–ից: Իսկ 2014 թ. ներքաղաքական թեժ զարգացումների պայմաններում Ուկրաինայի նոր իշխանությունը կապերը խզեց ԱՊՀ–ի հետ:

ԱՊՀ մշտապես գործող մարմին է ***Գործադիր կոմիտեն***, որը ***տեղակայված է Մինսկում***:

Համագործակցության երկրների համար առաջնահերթ է անվտանգության հարցը: 1992 թ. ստորագրվեց ԱՊՀ հավաքական անվտանգության պայմանագիրը: ***2002 թ. այն կոչվեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)***: Դրա մեջ մտնում է վեց պետություն՝ Ռուսաստանը, Բելառուսը, Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը:

ԱՊՀ դրոշը

65 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

«Մայդանը» Ուկրաինայում. 2014 թ. փետրվար

2015 թ. հունվարի 1-ից ԱՊՀ տարածքում սկսեց գործել ***Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ)***: Դրա անդամներն են ***Ռուսաստանը, Ղազախստանը, Բելառուսը, Հայաստանը և Ղրղզստանը***:

ԱՊՀ անդամ երկրների միջև, սակայն, առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ: Դրանք խոչընդոտում են նրանց լիարժեք համագործակցությանը:

2003, 2004 և 2005 թթ. համապատասխանաբար ***Վրաստանում, Ուկրաինայում*** և ***Ղրղզստանում*** տեղի ունեցան ***«գունավոր» հեղափոխություններ*** (իրենց անվանումները ստացան ըստ տվյալ հեղափոխության կողմից ընդունած գույնի կամ խորհրդանիշի):

«Վարդերի» հեղափոխությունը Վրաստանում. 2003 թ. նոյեմբեր

66 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

«Թավշյա» հեղափոխությունը. Երևան, Հանրապետության հրապարակ, 2018 թ. ապրիլ

Դրանք խորացրին Ռուսաստանի հետ նրանց հակասությունները:

2014 թ. փետրվարին Ուկրաինայի մայրաքաղաքում իրադարձությունները արյունալի ընթացք ստացան, նախագահը լքեց երկրի տարածքը: Ուկրաինայի արևելյան շրջաններում անջատողական շարժում սկսվեց: Նույն թվականի մարտին Ղրիմում հանրաքվե անցկացվեց, որի արդյունքում այն միացվեց Ռուսաստանին:

2018 թ. ապրիլ–մայիսին «թավշյա» հեղափոխությունը հաղթեց Հայաստանի Հանրապետությունում: Բողոքի և անհնազանդության հուժկու շարժումը տապալեց հին վարչակարգին, տեղի ունեցավ խաղաղ իշխանափոխություն: Սկսվել է իրականում ազատ, արդար, ժողովրդավար և ինքնիշխան պետության կայացման գործընթացը:

Հայաստանի Հանրապետությունը և ԱՊՀ երկրները

Հայաստանի Հանրապետությունը, ինչպես արդեն գիտենք, ձևավորման պահին անդամագրվել էր ԱՊՀ-ին:

Բացի ընդհանուր հարաբերություններից՝ ԱՊՀ երկրների միջև ստեղծվել են նաև երկկողմ հարաբերություններ: ***Մեր հանրապետության և ՌԴ-ի միջև ձևավորվել է ռազմավարական համագործակցություն***: Բա-

67 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

դիդրացիական կապեր են հաստատվել նաև ***Թուրքմենստանի, Ուկրաինայի, Վրաստանի*** և այլ երկրների հետ:

Միակ բացառությունը Ադրբեջանն է: ***Հարաբերությունների կարգավորմանը խոչընդոտում է Ադրբեջանի ծայրահեղական կեցվածքը***: Նա չի ցանկանում ճանաչել Արցախի (Ղարաբաղ) հայության ինքնորոշման իրավունքը և հերոսական պայքարով նվաճած անկախությունը:

Անցած տասնամյակների փորձը ցույց է տալիս, որ ԱՊՀ–ի ապագան մեծապես կախված է անդամ երկրների պատրաստակամությունից՝ շուտափույթ հաղթահարելու առկա հակասությունները և զարգացնելու փոխշահավետ հարաբերություններ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ հասարակություն է կառուցվում նախկին խորհրդային հանրապետություններում:
2. Ի՞նչ միջոցառումներ ձեռնարկվեցին վարչահրամայական տնտեսությունից շուկայականի անցնելու նպատակով:
3. Նշեք հետխորհրդային երկրների քաղաքական զարգացման մի քանի առանձնահատկություն:
4. Ի՞նչ ուղիով զարգացան մերձբալթյան նախկին խորհրդային երկրները:
5. Ձեր կարծիքով Ռուսաստանի Դաշնությունը վերականգնե՞լ է գերտերության կարգավիճակը. պատասխանը հիմնավորեք փաստերով:
6. Ինչո՞ւ է Ռուսաստանը հայտնվել պատժամիջոցների տակ:
7. Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) կայացման գործընթացը ի՞նչ դժվարությունների առջև է կանգնած:
8. ԱՊՀ ո՞ր երկրներում և ե՞րբ են տեղի ունեցել «գունավոր հեղափոխություններ»:
9. Հայաստանի համար ի՞նչ նշանակություն ունի անդամակցությունը ԱՊՀ–ին:
10. Բացատրեք ՀԱՊԿ և ԵԱՏՄ հապավումները:

Քննարկման հարց

ԱՊՀ–ն ունի՞ արդյոք զարգացման հեռանկար:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Հետխորհրդային տարածք, «վայրի սեփականաշնորհում», Վլադիմիր Պուտին, ՀԱՊԿ, ԵԱՏՄ, «գունավոր հեղափոխություններ», Հայաստանի «թավշյա» հեղափոխություն

68 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

24 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արդեն գիտենք, որ սառը պատերազմն ավարտվեց Արևմուտքի հաղթանակով: ԱՄՆ–ը միաժամանակ մնաց միակ գերտերությունը: Այս իրողությունը փոփոխությունների հանգեցրեց միջազգային հարաբերություններում:

Որակական փոփոխություններ միջազգային հարաբերություններում

Սառը պատերազմից հետո աննախադեպ կարևորվեց ՆԱՏՕ–ի և Եվրամիության դերակատարությունը:

Ընդլայնվող ՆԱՏՕ–ն ժամանակակից աշխարհի ամենահզոր ռազմաքաղաքական դաշինքն է: Այն նպատակ ունի աշխարհում հասնելու գերիշխանության: Իսկ Եվրամիության նպատակներում գերակայում է տնտեսական, քաղաքական, մշակութային, իրավական միասնացման ձգտումը:

Վարշավյան դաշինքի լուծարումով վերացավ ՆԱՏՕ–ի գլխավոր հակառակորդը: Դա հանգեցրեց նրա նպատակների և գործունեության ձևերի վերակառուցման: ***1994 թ. ՆԱՏՕ–ն իրականացրեց*** իր պատմության

Ձախից՝ սերբական քրիստոնեական ավերված եկեղեցի Կոսովոյում
Աջից՝ Հարավսլավիայի մայրաքաղաք Բելգրադի փողոցները ՆԱՏՕ–ի ռմբակոծումներից հետո

69 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Ամերիկացի զինվորները հատուկ գործողություն են իրականացնում Աֆղանստանում. 2012 թ.

մեջ ***առաջին ռազմական գործողությունը***՝ միջամտելով նախկին Հարավսլավիայում ընթացող պատերազմին:

ԱՄՆ-ի դեմ իրականացված Սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը առիթ դարձավ ՆԱՏՕ-ի գործունեության աշխարհագրության ընդլայնման համար: Նա ռազմական գործողություններ ծավալեց ***Աֆղանստանի*** դեմ և այդ երկրում տեղակայեց իր զինված ուժերը:

ՆԱՏՕ-ն սկսեց համատեղ ծրագրեր իրականացնել նաև ոչ անդամ երկրների հետ: ***1999 թ. սկսվեց այս կազմակերպության ծավալումը դեպի Արևելք***: Նախկին սոցիալիստական մի շարք երկրներ անդամակցեցին նրան: ***2019 թ. դրությամբ*** ՆԱՏՕ-ի կազմում ընդգրկված էր ***29 պետություն***:

- *1994 թ. Հայաստանը միացավ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին: Ներկայումս Հայաստանը և ՆԱՏՕ-ն համատեղ իրականացնում են «Անհատական գործընկերության ծրագիրը»: 2004 թվականից հայկական զինված ուժերը մասնակցում են Կոսովոյում ՆԱՏՕ-ի խաղաղապահ առաքելությանը:*

Եվրամիությունը, ինչպես արդեն ասել ենք, սկսել է գործել 1993 թվականից: Ներկայումս այն աշխարհի խոշորագույն տնտեսական կենտրոններից մեկն է՝ մոտ ***510 միլիոն*** բնակչությամբ:

70 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Չինաստանի Շանհայ քաղաքի արդի համայնապատկերը

- *Հայաստանը ակտիվ համագործակցում է ԵՄ–ի հետ: 2017 թ. ՀՀ–ի և ԵՄ–ի միջև ստորագրվել է համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագիր, որի գործադրումը կնպաստի Հայաստանի համակողմանի զարգացմանը:*

Միավորման և համագործակցության գործընթացները խորացան նաև աշխարհի այլ շրջաններում: Մասնավորապես ***2001 թ. Ռուսաստանը և Չինաստանը հիմնադրեցին Համագործակցության Շանհայի կազմակերպությունը***: Ներկայումս դրա կազմում կա 6 պետություն: Ունենալով հսկայական տարածքային, մարդկային, տնտեսական և էներգետիկ հնարավորություններ՝ այն փորձում է ներազդել համաշխարհային գործընթացների վրա:

Միջազգային հակամարտությունները և ուժերի նոր փոխհարաբերակցությունը

Սառը պատերազմից հետո ուժեղացան ազգամիջյան, ինչպես նաև ներպետական հակամարտությունները: Նույնիսկ Եվրոպան զերծ չմնաց դրանցից: ***Կիզակետը դարձավ նախկին Հարավսլավիան***:

Փորձելով կասեցնել երկրի տրոհումը՝ Սերբիան պատերազմական գործողություններ սկսեց նախկին հարավսլավական հանրապետությունների դեմ: ՆԱՏՕ–ն օգնության եկավ նրանց: Պատերազմն ավարտվեց Սեր-

71 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

բիայի պարտությամբ: Նրա ավանդական դաշնակից Ռուսաստանը չկարողացավ օգնություն ցուցաբերել:

Հարավսլավիայի վերջին «բեկորը» ***Կոսովոն*** էր: ***Եվրամիությունը, ԱՄՆ-ը*** և աշխարհի մի շարք պետություններ ***2008 թ. ճանաչեցին նրա ազգային ինքնորոշման և սեփական պետություն ունենալու իրավունքը***:

Սուր հակամարտության օջախ է դարձել Իրաքը, որի նախագահն էր բռնապետ Սադամ Հուսեյնը: ***2003 թ.*** ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները, մեղադրելով ***Իրաքին*** համաշխարհային ահաբեկչությանն օժանդակելու և գաղտնի միջուկային զենք ստեղծելու մեջ, նրա դեմ սկսեցին պատերազմ: ***ՄԱԿ-ը դեմ էր այս պատերազմին***: Դաշնակիցները հասան հաղթանակի: Ռազմականացրեցին Իրաքը և տապալեցին Սադամի վարչակարգը: Ստեղծվեց նոր իշխանություն: Սակայն երկրում դրությունն անկայուն է:

Ահաբեկչություն Բաղդադում. Իրաք, 2012 թ. հունիս

Նոր աշխարհակարգի հիմնախնդիրը

Մեր օրերի միջազգային հարաբերությունների կարևորագույն խնդիրը նախկին երկբևեռ աշխարհի փոխարեն նոր աշխարհակարգ ձևավորելն է: ***Սոկա է երկու միտում. առաջինը պահում է միաբևեռ աշխարհի, երկրորդը՝ բազմաբևեռ աշխարհի ստեղծման***:

Հարավսլավիայի մասնատումը

72 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Առաջին միտումը ներկայացնում է ԱՄՆ–ը: Նա մեծ ջանքեր է գործադրում իր կամքը թելադրելու աշխարհին: Արևմտյան պետությունները միշտ չէ, որ աջակցում են նրան. հաճախ հետևում են իրենց սեփական շահերին:

XXI դ. սկզբներին ***Ռուսաստանի Դաշնությունը*** սկսեց վերականգնել գերտերության իր դիրքերը: Եվրամիությունը սկսեց վարել ավելի ինքնուրույն և նպատակամետ քաղաքականություն: Նկատելի դարձավ ***Չինաստանի*** տնտեսական և քաղաքական ազդեցության աճը:

Եվ այժմ ակնհայտ է, որ աշխարհը պետք է լինի բազմաբևեռ՝ ճկուն տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումներով:

Հարցեր և առաջադրանքներ

1. ՆԱՏՕ–ն ե՞րբ է իրականացրել իր առաջին ռազմական գործողությունը և որտե՞ղ:
2. Ձեր կարծիքով ինչո՞ւ նախկին սոցիալիստական երկրներից շատերը մտան ՆԱՏՕ–ի և Եվրամիության մեջ:
3. Օգտվելով տարբեր աղբյուրներից՝ ինքնուրույն ճշտե՛ք՝ որքան անդամ ունեն այդ կառույցները ներկա դրությամբ:
4. Ինչ հարաբերություններ ունի Հայաստանը այդ կառույցների հետ:
5. Ե՞րբ է հիմնադրվել Համագործակցության Շանհայի կազմակերպությունը և ո՞ւմ կողմից:
6. Թվարկե՛ք արդի դարաշրջանի տարածաշրջանային մի քանի հակամարտություններ:
7. Արդի փուլում աճե՞լ է արդյոք ՄԱԿ–ի դերը միջազգային հարաբերություններում, թե՞ ոչ: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

Քննարկման հարց

Նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացում ո՞ր միտումն է գերակշռում՝ միաբևեռ, թե՞ բազմաբևեռ:

Նոր հասկացություններ, անուններ

Համագործակցության Շանհայի կազմակերպություն, Հարավսլավիայի տրոհում, Իրաքյան պատերազմ, նոր աշխարհակարգի ձևավորում, միաբևեռ կամ բազմաբևեռ աշխարհ

73 von 99 12.02.2021, 11:37

25 ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Համաշխարհայնացում

Համաշխարհայնացումը (գլոբալացում) արդի աշխարհի ամենաբնորոշ գործընթացներից է: Այն տանում է տարբեր երկրների ու ժողովուրդների համագործակցության և տնտեսական միավորման: Ստեղծված համաշխարհային ֆինանսական դաշտը հնարավորություն է տալիս արագ և փոխշահավետ գործարքներ կատարելու տարբեր երկրների, բանկերի և ձեռնարկությունների միջև:

Համաշխարհայնացման տեխնիկական հիմքը համաշխարհային լրատվական համացանցն է (ինտերնետ): Ձևավորվել է տեղեկատվական հասարակություն:

Հոգևոր ոլորտում համաշխարհայնացումն ուղեկցվում է ***արևմտյան արժեքների և անգլերենի լայն տարածմամբ***: Ուղի է հարթվում մարդկության միավորման և արագ զարգացման համար:

Սակայն ***այս երևույթն ունի նաև բացասական հետևանքներ***: Այն կարող է տանել դեպի ազգային արժեքների և մշակույթների համահարթեցում: Դրա նշաններն արդեն առկա են՝ ստանդարտացված հագուստներ, կարծրատիպային ֆիլմեր, պատկերացումներ, գաղափարներ, պահվածք, կենսակերպ և այլն:

- *Այսօր Հայաստանը նույնպես ներքաշվել է համաշխարհայնացման գործընթացի մեջ: Դա հնարավորություն է տալիս աշխարհին համաբայլ զարգացնելու տնտեսությունը, քաղաքականությունը, մշակույթի տարբեր ոլորտները: Միաժամանակ խնդիր է ծառանում՝ ինչպես նոր պայմաններում պահպանել և զարգացնել ազգային արժեհամակարգը:*

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Համաշխարհայնացման դեմ ուղղված շարժումը. կրոնի դերի աճը

Համաշխարհայնացման դեմ ուղղված ցույց. Կանադա, Տորոնտո, հունիսի 27, 2010 թ.

Աշխարհի տարբեր երկրներում սկիզբ է առել ***համաշխարհայնացման հակառակորդների շարժումը***: Նրանց կարծիքով պետք է պայքարել այս երևույթի դեմ, քանի որ այն տանում է ազգերի, մշակույթների, կառավարությունների և առանձին անհատների դերի սահմանափակման:

Համաշխարհայնացումը հասարակության որոշ շերտերի մոտ առաջացնում է ձգտում՝ ներփակվելու կրոնի շրջանակներում: Արևմուտքում համաշխարհայնացման հակառակորդները դիմում են քրիստոնեությանը: Որոշ կուսակցություններ քրիստոնեական արժեքները ներառում են իրենց ծրագրերում:

Այս շարժման դրսևորումներից է նաև «կանաչների շարժումը»: Նրա ներկայացուցիչները համոզված են, որ համաշխարհայնացումն ավելի է ընդգծում բնության անխնա օգտագործումը և տեղիք տալիս աղետների:

Արևելքում շարժումը հաճախ ուղեկցվում է հակաարևմտյան տրամադրություններով, քանի որ համաշխարհայնացումը նույնացվում է բոնի արևմտականացման հետ: Իրենց ինքնության պաշտպանության համար այստեղ հաճախ դիմում են կրոնին՝ իսլամ, բուդդայականություն, հինդուիզմ և այլն: Հակաարևմտյան տրամադրությունները երբեմն ծնում են ահաբեկչություն:

«Կանաչների շարժումը»՝ արդեն որպես քաղաքական գործոն Ֆինլանդիայի նախագահական ընտրությունների ժամանակ

Հումանիտար հիմնախնդիրներ. ցեղասպանություն, ահաբեկչություն

Արդի աշխարհի ցավոտ ***հիմնախնդիրներից է ցեղասպանությունը***: 1990-ական թթ. ցեղասպանություն իրականացվեց Ռուանդայում: Դրան հաջորդեց ցեղասպանություն աֆրիկյան մեկ այլ երկրում՝ Սուդանում: Նույնիսկ Եվրոպան զերծ չմնաց նման ոճրագործությունից: Հարավսլավիայի անկման և պատերազմի ժամանակ հակամարտող կողմերի վայրագությունները շատ դեպքերում բնութագրվում են որպես ցեղասպանական գործողություններ:

75 von 99 12.02.2021, 11:37

Տեսարան Ռուանդայի 1994 թ. ցեղասպանությունից

Դա փաստում է, որ մարդկությունը դեռևս չի մշակել ցեղասպանությունների կանխարգելման գործուն միջոցներ: Ակնհայտ է՝ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» ՄԱԿ–ի 1948 թ. բանաձևը չի ծառայում իր նպատակին: Դրանում հստակորեն ձևակերպված չէ ցեղասպանության համար պետության պատասխանատվությունը:

- *XIX դարի վերջին և XX դարի սկզբին Օսմանյան Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանությունը դեռևս չեն դատապարտել ՄԱԿ–ը և պետությունների մեծ մասը: Ըստ այդմ հանցագործների մոտ պատրանք է ստեղծվում, թե կարելի է խուսափել պատասխանատվությունից:*

Աշխարհի համար մեծ վտանգ է ահաբեկչությունը: 2001 թ. սեպտեմբերի 11–ին Նյու Յորքում, ինչպես նաև հետագայում Լոնդոնում, Մադրիդում, Մոսկվայում տեղի ունեցած պայթյունները ակնհայտ դարձրին, որ նույնիսկ ամենահզոր պետությունները չեն կարող ապահովել իրենց անվտանգությունը միջազգային ահաբեկչությունից: Սակայն ***կարելի է հաջողության հասնել, եթե բոլոր երկրները համատեղեն իրենց ջանքերը***:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Խաղաղ օվկիանոսում առաջացած աղբի ահռելի «կղզի», որի չափերը համեմատելի են եվրոպական պետությունների տարածքների հետ

Համընդհանուր հիմնախնդիրներ

XXI դարում մարդկությունը բախվել է մի շարք լուրջ սպառնալիքների, որոնք վտանգում են նրա գոյությունը: Դրանց թվին է պատկանում նախ և առաջ ***շրջակա միջավայրի աղտոտումը***: Այն տարածվում է՝ հանգեցնելով մոլորակի կլիմայի արմատական փոփոխության՝ երաշտներ, ջրհեղեղներ: Արձանագրվում է մոլորակի ջերմաստիճանի բարձրացում, որի պատճառով կհալչեն բևեռային սառույցները, կբարձրանա օվկիանոսի մակարդակը, մեծ տարածքներ ջրասույզ կլինեն:

Ասրիճանաբար սպառվում են սննդի, խմելու ջրի, էներգակիրների (հիմնականում՝ գազի և նավթի) պաշարները: Գիտնականները կանխատեսում են, որ եթե անհապաղ միջոցներ չձեռնարկվեն, ապա շուտով տեղի կունենան ավերիչ պատերազմներ:

Վտանգի գիտակցությամբ ***մարդկությունը սկսում է մտածել բնության և մարդու հավասարակշռությունը վերականգնելու մասին***: Գնալով ավելի լայն թափ է ստանում ***բնապահպանական շարժումը***: Առանձին պետություններ բնապահպանական միջոցներ են ձեռնարկում, սակայն այդ ամենը բավարար չէ: Այս դեպքում նույնպես հաջողության կարելի է հասնել միայն համայն մարդկության ջանքերով:

Թրաֆիքինգի զոհ դեռահասը

Համաշխարհային հանրության առջև կանգնած արդիական հիմնախնդիրներից է նաև ***թրաֆիքինգը***: Դա ***ստրկության ժամանակակից դրսևորումն է***, որը ապօրինի, հանցագործ բիզնեսի ասպարեզում իր զարգացման տեմպերով զիջում է միայն թմրադեղերի վաճառքին: ***Թրաֆիքինգի սոցիալական բազան սեփական երկրներում տնտեսական ծանր պայմաններն են***, որի պատճառով մարդիկ ստիպված են լինում պարտքի դիմաց համաձայնվել հայրենիքից դուրս՝ մեկ այլ երկրում, կատարելու ցանկացած բնույթի աշխատանք, հիմնականում՝ սնագործ:

Հետարդյունաբերական հասարակության ծնունդ է և XXI դարում գնալով աննախադեպ թափ է հավաքում ***կիբերհանցագործությունը***: Համացանցը ստեղծել է մի ***նոր իրականություն***, որն անվանում են ***կիբեր*** կամ ***վիր-***

77 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

վիրտուալ աշխարհ: Համաշխարհային միասնական կիբեր-տարածքի ստեղծումը, դրական բազմաթիվ կողմերի հետ մեկտեղ, ծնել է մի ***նոր հիմնախնդիր*** մարդկության համար՝ ***կիբերանվտանգության ապահովումը***: Այս տիպի հանցագործությունները անմիջական սպառնալիք են մարդկանց անձնական կյանքին, հասարակական և պետական ամենատարբեր կառույցներին ու ոլորտներին, միջազգային հարաբերություններին: ***Կիբերհանցագործության դեմ պայքարը նույնպես պահանջում է քաղաքակիրթ աշխարհի ուժերի համադրում***:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է համաշխարհայնացումը: Հասարակական կյանքի ո՞ր ոլորտներում է այն դրսևորվում:
2. Որո՞նք են համաշխարհայնացման դեմ ուղղված շարժման պատճառները:
3. Մեր ժամանակներում ինչո՞ւ է մեծացել կրոնի դերը մարդկանց կյանքում:
4. Վերհիշե՛ք՝ ինչ է ցեղասպանությունը: Ձեր կարծիքով ինչո՞ւ են մեր օրերում ևս տեղի ունենում ցեղասպանություններ:
5. Միջազգային ահաբեկչությունն ինչպիսի՞ վտանգ է ներկայացնում մարդկության համար:
6. Նշե՛ք մարդկության առջև այսօր ծառացած համընդհանուր հիմնախնդիրներ:
7. Ինչ է թրաֆիքինգը: Ո՞րն է դրա գլխավոր պատճառը: Ձեր կարծիքով՝ ինչ միջոցներ պետք է կիրառվեն թրաֆիքինգը վերացնելու համար:
8. Ինչ է կիբեր կամ վիրտուալ աշխարհը: Ձեր կարծիքով՝ հնարավո՞ր է վերացնել կիբերհանցագործությունը:

Քննարկման հարց

Համաշխարհայնացման գործընթացն ավելի շատ դրական՝, թե՞ բացասական կողմեր ունի:

Նոր հասկացություններ, անուններ

Համաշխարհայնացում, համաշխարհայնացման դեմ ուղղված շարժում, «կանաչների» շարժում, հումանիտար հիմնախնդիրներ, միջազգային ահաբեկչություն, Ռուանդա, Սուդան, մարդկության դեմ ծառացած համընդհանուր խնդիրներ, թրաֆիքինգ, կիբեր/վիրտուալ աշխարհ, կիբեր հանցագործություն

78 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

26 ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ



ՋԵՅՄՍ ՎԱԹՍՈՆ
(1928)

ԴՆԹ-ի կառուցվածքը բացահայտող գիտնականներից մեկն է: Դա գիտության մեջ մեծագույն հայտնագործություններից է, որը հեղինակների խմբին բերեց Նոբելյան մրցանակ:

ԷԴՎԻՆ ՀԱԲԼ
(1889–1953)

XX դարի խոշորագույն աստղագետներից է, որի հետազոտությունները շրջադարձային նշանակություն ունեցան ժամանակակից տիեզերագիտության համար:

Երկրորդ աշխարհամարտից հետո, ինչպես նշել ենք, աստիճանաբար ձևավորվեց հետարդյունաբերական հասարակությունը: ***Արդի աշխարհում աննախադեպ աճել է գիտության և մշակույթի դերակատարությունը***:

Հիմնարար գիտությունները

Հիմնարար գիտությունների կիզակետը շարունակում է մնալ շրջակա աշխարհի կարևորագույն օրենքների ուսումնասիրությունը: Մասնավորապես ***գիտնականների ուշադրությունը կենտրոնացած է նյութի փարրերի՝ ատոմի և գենի վրա***:

Ատոմով զբաղվում է ***միջուկային ֆիզիկան***: Հաջողվել է բացահայտել ատոմի ներքին կառուցվածքի և տարրական մասնիկների հիմնարար օրենքները: Այդ գործում համագործակցել են տարբեր ազգերի գիտնականները՝ գերմանացի ***Վերներ Հայզենբերգը***, ռուս ***Լև Լանդաուն*** և այլք:

Խոշոր նվաճումների է հասել ***մոլեկուլային կենսաբանությունը***: Ասվածն առաջին հերթին վերաբերում է ԴՆԹ-ի ուսումնասիրությանը: Դա գենի այն նյութն է, որով պայմանավորված են օրգանիզմների ժառանգական հատկանիշները: Շնորհիվ դրա՝ գիտությունը հնարավորություն է ստացել հասկանալու կենդանիների և մարդու կյանքի շատ օրինաչափություններ: Այդ գործում որոշիչ է ամերիկացի գիտնական ***Ջեյմս Վաթսոնի*** դերը:

Հաջողությունների է հասել ***տիեզերագիտությունը***՝ բացահայտվել են նոր մոլորակներ, աստղեր, աստղաբույլեր (գալակտիկաներ): Առաջ են քաշվել Տիեզերքի ծագման և զարգացման նոր տեսություններ: Այդ առումով մեծ է ամերիկացի ***Էդվին Հաբլի*** և հայ ***Վիկտոր Համբարձումյանի*** գիտական վաստակը:

Գիտնականների և ճարտարագետների աշխատանքով մարդկության պատմության մեջ սկսվեց տիեզե-

79 von 99 12.02.2021, 11:37

ռագնացության դարաշրջանը: Ստեղծվեցին նոր տիպի թռչող սարքավորումներ, որոնք նախ դուրս եկան մերձերկրյա տարածք, ապա ուղևորվեցին դեպի այլ մոլորակներ՝ Վեներա, Մարս, Յուպիտեր և այլն: ***Ռուս Յ. Գագարինը դարձավ աշխարհի առաջին տիեզերագնացը***: Ամերիկացի տիեզերագնացները առաջինը ոտք դրին Լուսնի վրա: Թռիչքները շարունակվում են նաև մեր օրերում: Տիեզերագնացության պատմության մեջ անգնահատելի է ամերիկացի ճարտարագետ ***Վերներ Բրաունի*** և ռուս ***Սերգեյ Կորոլյովի*** ներդրումը:

Միջուկային ֆիզիկայի նվաճումները հնարավոր դարձրին ատոմային էներգիայի օգտագործումը խաղաղ նպատակներով: ***Ստեղծվեցին ատոմային էլեկտրակայաններ***: Դրանք ի զորու են մարդկությանը ապահովելու անսպառ էներգիայով, սակայն պահանջում են շահագործման մեծ ճշգրտություն, այլապես աղետներն անխուսափելի կլինեն: Ատոմային էներգետիկան զարգացած է այնպիսի երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ–ը, Ռուսաստանը, Ֆրանսիան և Ճապոնիան:

- *Ատոմային էներգետիկան զարգացած է նաև Հայաստանում: Հայկական ատոմակայանը տալիս է երկրում արտադրվող էլեկտրաէներգիայի 40 %–ը: Ճարտարագետների և բանվորների արհեստավարժ աշխատանքի շնորհիվ այն աչքի է ընկնում հուսալիությամբ:*

Աննախադեպ նվաճումներ արձանագրվեցին ***ինֆորմատիկայի (տեղեկագիտություն)*** բնագավառում: Ստեղծվեցին համակարգիչներ, որոնք հնարավորություն տվեցին կուտակելու, համակարգելու, մշակելու և հաղորդելու անհավատալի քանակությամբ տեղեկույթ: Դա ***հեղափոխել է մարդկանց կյանքի շատ կողմեր***: Ինֆորմատիկայի զարգացման գործում մեծ է ամերիկացի մաթեմատիկոս, կիբեռնետիկայի հիմնադիր ***Նորբերտ Վիների*** դերը:

Շրջաղարձային ազդեցություն ունեցան գիտության և տեխնիկայի հետագա զարգացման համար ***կիսահաղորդչային սարքերի*** (տրանզիստորների) և ***լազերի*** գյուտերը:



ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
(1908–1996)

Հայ աստղաֆիզիկոս, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, Բյուրականի աշխարհահռչակ աստղադիտարանի հիմնադիրը և տնօրենը: Հիմք է դրել գիտական նոր ուղղությունների, ստեղծել գիտական դպրոցներ, որոնք մեծ ազդեցություն են ունեցել ֆիզիկայի շատ բնագավառների վրա:

ՄԵՐԳԵՅ ԿՈՐՈԼՅՈՎ
(1906–1966)

Խորհրդային տիեզերանավերի և տիեզերական համակարգերի գլխավոր նախագծողը

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/



ՆՈՐԲԵՐՏ ՎԻՆԵՐ
(1894–1964)

Ականավոր մաթեմատիկոս, կիբեռնետիկայի հիմնադիրը: Նրա և մի քանի այլ գիտնականների գործերը զարկ տվին հաշվիչ տեխնիկայի, ինքնաշխատ բազմաթիվ սարքերի ստեղծմանը, խթանեցին տեղեկույթի մշակման և պահպանման տեսության զարգացումը:

Ամերիկյան «Ապոլոն–11» տիեզերանավով 1969 թ. Լուսնի վրա իջած առաջին աստղագնացները

Գիտության տարբեր ոլորտների տվյալների համադրմամբ (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) հնարավոր եղավ ***արհեստական նոր նյութերի (պոլիմերներ)*** ստացումը: Դրանք արմատապես փոխեցին ինչպես արտադրությունը, այնպես էլ առօրյա կյանքը:

Մեծ թռիչք է ապրել բժշկությունը: Ստեղծվել են նոր դեղամիջոցներ և վիտամիններ: Սովորական են դարձել բարդ վիրահատությունները: Կատարվում են մարդկանց օրգանների՝ սրտի, երիկամի, լյարդի պատվաստումներ: Մշակվել է առողջապահության նոր հա-

Ամերիկացիներ Սթիվ Ջոբսը և Սթիվ Վոզնյակը 1976 թ. ստեղծեցին առաջին անհատական համակարգիչը:

81 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

մակարգ, որի նպատակն է կանխարգելել հիվանդությունները:

Ձևավորվել է մի ***նոր գիտություն***, որը կոչվում է ***բնապահպանություն (էկոլոգիա)***: Այժմ մարդկությունն ունի բնության վրա ներազդելու տեխնիկական մեծ հնարավորություններ: Հաճախ դա կատարվում է չմտածված՝ տեղիք տալով բնական աղետների: Բնապահպանության խնդիրն է ուսումնասիրել և պահպանել շրջակա աշխարհը:

Տեխնիկայի զարգացման հետևանքով մեր կյանքի անբաժանելի մասն են դարձել հեռուստատեսությունը, համացանցը, բջջային հեռախոսը և այլն:

ԹԻՄ ԲԵՐՆԵՐՍ-ԼԻ
(1955)

Բրիտանացի գիտնական, համացանցի (ինտերնետի) գյուտարարը. դրա գաղափարը և կառուցման սկզբունքները առաջարկել է 1989 թ.:

Հումանիտար գիտությունները

Արդի դարաշրջանում մեծացել է հումանիտար գիտությունների դերն ու նշանակությունը: Մարդկությունն ավելի ու ավելի է կենտրոնանում իր ընդհանուր խնդիրների շուրջ, յուրովի է լուսաբանում անցյալը, ներկան և ապագան:

Պատմության մեջ շարունակվում է քաղաքակրթությունների մասին տեսության մշակումը: Այն նպատակ ունի համակարգելու մարդկության անցյալը և բացահայտելու նրա զարգացման հեռանկարները: Այդ գործում կարևոր են ֆրանսիացի պատմագետ ***Ֆերնան Բրոդելի*** ուսումնասիրությունները:

Տնտեսագիտության մեջ ձևավորվել է մի ուղղություն, որը նպատակ ունի ուսումնասիրելու առանձին երկրների և համայն աշխարհի տնտեսական գործընթացները՝ օգտագործելով մաթեմատիկայի մեթոդները:

Իմաստասիրությունը մշակել է տեսություններ, որոնք նորովի են դիտարկում մարդ էակի դերն աշխարհում:

Զարգացել է հոգեբանությունը: Այն կենտրոնացել է մի կողմից՝ անհատի, մյուս կողմից՝ հասարակական խմբերի և ազգերի հոգեբանության վրա:



ՖԵՐՆԱՆ ԲՐՈԴԵԼ
(1902–1985)

Ֆրանսիացի հայտնի պատմագետ: Աշխատությունները նվիրված են համաշխարհային քաղաքակրթությունների ուսումնասիրությանը: Անդրադարձել է նաև Հայոց պատմության խնդիրներին:

- *Արդի դարաշրջանում հայ գիտությունը համաքայլ է համաշխարհային գիտությանը: Դրան մեծապես նպաստեց Գիտությունների ազգային ակադեմիայի ստեղծումը 1943 թ.: Ձևավորվեցին գիտական դպրոցներ՝ մա-*

82 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

ԱՐՏԵՄ ԱԼԻԽԱՆՅԱՆ
(1908–1978)

Հայ և խորհրդային նշանավոր ֆիզիկոս, ԽՍՀՄ և ՀԽՍՀ գիտությունների ակադեմիաների իսկական անդամ: Զբաղվում էր միջուկային ֆիզիկայով, ուսումնասիրում տարրական մասնիկները և տիեզերական ճառագայթները: Երևանի ֆիզիկայի ինստիտուտի և Արագած լեռան վրա տեղակայված լաբորատորիայի հիմնադիր տնօրենը: Նրա ղեկավարությամբ 1967 թ. Երևանում գործարկվեց տարրական մասնիկների օղակաձև արագացուցիչը՝ իր տեսակի մեջ առաջինը ԽՍՀՄ-ում և Եվրոպայում:



թեմատիկայի, ինֆորմատիկայի, աստղաֆիզիկայի, միջուկային ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, հայագիտության և այլ ասպարեզներում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Արդի դարաշրջանում ինչ նորություններ են արձանագրվել հիմնարար գիտությունների բնագավառում:
2. Կիրառական ինչ հնարավորություններ են ընձեռում միջուկային ֆիզիկայի ձեռքբերումները:
3. Արդի դարաշրջանում ինչ նոր գիտություն է ձևավորվել: Ինչ խնդիրներ է այն լուծում:
4. Ինչ խնդիրներ ունեն արդի հումանիտար գիտությունները:
5. Նախորդ շրջանի հետ համեմատելով՝ նշեք գիտության զարգացման բնագավառում արձանագրված նորությունները:

Նոր հասկացություններ, անուններ

Միջուկային ֆիզիկա, Վերներ Հայզենբերգ, Լև Լանդաու, մոլեկուլյար կենսաբանություն, Ջեյմս Վաթսոն, տիեզերագիտություն, Էդվին Հաբլ, Վիկտոր Համբարձումյան, տիեզերագնացություն, Սերգեյ Կորոլյով, ինֆորմատիկա (տեղեկագիտություն), Նորբերտ Վիներ, բնապահպանություն (էկոլոգիա), Ֆերնան Բրոդել

83 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

27 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Երկրորդ աշխարհամարտին հաջորդած տարիներին ***մշակույթի հիմնախնդիրը շարունակում էր մնալ մարդը***՝ իր ապրումներով ու մտքերով, ուրախություններով ու հիասթափություններով: Դա արտացոլվել է գրականության և արվեստի բոլոր ասպարեզներում:

Գրականությունը

Իր տարբեր ժանրերով գրականությունը նպատակ ունի բացահայտելու այն ընդհանուր արժեքները, որոնք միավորում են մարդկանց՝ անկախ նրանց ազգային և ռասայական տարբերություններից: Անցնելով կյանքի բարդ փորձությունների միջով՝ նրանք պահպանում են հավատը բարու նկատմամբ: Այս ոգով են գրված դարաշրջանի մեծագույն գրողների ստեղծագործությունները՝ գերմանացի ***Հայնրիխ Բյոլ***, ֆրանսիացի ***Ֆրանսուազ Սագան***, ամերիկահայ ***Վիլյամ Սարոյան***, ռուս ***Ալեքսանդր Սոլժենիցին*** և այլք:

- *Հայ գրականությունը համընթաց էր համաշխարհային գրական զարգացումներին: Ի հայտ եկավ գրական նոր սերունդ, որի լավագույն ներկայացուցիչները ժամանակակից հայի ներաշխարհում բացահայտեցին համամարդկային արժեքներ՝ բանաստեղծներ Պ. Սևակ, Հ. Սահյան, արձակագիրներ Հ. Մաթևոսյան, Պ. Զեյթունցյան:*

Երաժշտությունը

Զարգանում են երաժշտության տարբեր ժանրերը: Դասական երաժշտության խոշորագույն ներկայացուցիչները ստեղծել են սիմֆոնիաներ, օպերաներ, բալետներ: Դրանք արտահայտում են մեր ժամանակակցի ներաշխարհը: Այս առումով հիշատակելի է այն խոշոր



ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ
(1908–1981)

Ամերիկահայ գրող: Նրա ձևավորման գործում մեծ դեր է խաղացել ինքնակրթությունը, ամերիկյան և համաշխարհային գրականության ընթերցումը:
Գրական գործունեությունը սկսել է 1930-ական թթ.:
1942 թ. զորակոչվել է բանակ: Պատերազմը ընկալել է որպես զարհուրելի աղետ:
Բազմաթիվ թատերգությունների հեղինակ է: Դրանցից հանրահայտ է «Իմ սիրտը լեռներում է» դրաման, որը բեմադրվել է աշխարհի շատ բեմերում:
Բազմիցս այցելել է հայրենիք, կապեր հաստատել գրողների և արվեստագետների հետ: Աճյունն ամփոփված է Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում:

84 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/



ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ
(1903–1978)

XX դարի խոշորագույն երգահաններից է: Նրա շնորհիվ հայ ազգային երաժշտությունը համաշխարհային ճանաչում ստացավ: Նա ազգային առաջին բալետի, գործիքային կոնցերտների հեղինակն է, հայկական կինոերաժշտության հիմնադիրը: Նրա ստեղծագործական պսակը դարձավ «Սպարտակ» բալետը:

ԼՈՒԻ ԱՐՄՍԹՐՈՆԳ
(1901–1971)

ավանդը, որ համաշխարհային երաժշտության գանձարան են ներմուծել ռուս երգահան ***Դմիտրի Շոստակովիչը***, անգլիացի ***Բենջամին Բրիթենը***, հայ ***Արամ Խաչատրյանը***:

Մեծ տարածում է գտել մեկ այլ ժանր՝ ***ջազը***: Նրա ներկայացուցիչ ***Լուի Արմսթրոնգը*** համարվում է բոլոր ժամանակների խոշորագույն երաժիշտներից մեկը: Երիտասարդները նախապատվություն են տալիս նաև ***ռոք երաժշտությանը***:

- *Հայ երգահանների նոր սերնդի ներկայացուցիչները համադրում են ազգային ավանդույթները համամարդկային արժեքների հետ: Ասվածի լավագույն արտահայտությունը Ա. Բաբաջանյանի և Տ. Մանսուրյանի ստեղծագործություններն են:*

Կերպարվեստը

Շարունակելով նախորդ դարաշրջանի ձեռքբերումները՝ տարբեր ազգության վրձնի վարպետները ստեղծել են գեղանկարչական գործեր, որոնք գծի և գույնի զուգորդությամբ արտահայտում են շրջակա աշխարհի և մարդու բարդ առնչությունները: Նրանց մոտեցումները տարբեր են: Ոմանք ձգտում են ներկայացնելու արտաքին նմանությունը, ոմանք հեռանում են դրանից՝ խնդիր ունենալով բացահայտելու իրերի խորքային իմաստները: Շատ են տաղանդավոր նկարիչները, սակայն կարելի է առանձնացնել իսպանացի ***Խուան Միրոյին***, ֆրանսիացի ***Մարկ Շագալին*** և ամերիկահայ ***Արշիլ Գորկուն (Ոստանիկ Ադոյան)***:

- *Շարունակում էին ստեղծագործել Ե. Քոչարը, Մ. Սարյանը: Ձևավորվեց հայ գեղանկարչության ուրույն դպրոցը, որի ներկայացուցիչները նոր փաթաթ բերեցին հայ մշակույթին: Նրանցից են Մ. Ավետիսյանը, Հ. Հակոբյանը և այլք:*

85 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

Թատրոնը և կինոն

Արդի դարաշրջանում թատրոնը շարունակում է իր առաքելությունը՝ մարդկանց ներարկելով բարձր ճաշակ և հասարակական գաղափարներ: Թատրոնի տարբեր դպրոցները զարգանում են՝ փոխառելով միմյանց փորձը:

Մարդկության մշակութային կյանքում առանձնահատուկ տեղ ունի կինոն: Հեռուստատեսության շնորհիվ այն մտել է յուրաքանչյուր տուն: Դիտում են բոլորը՝ պատասխան սպասելով իրենց հետաքրքրող հարցերին:

Կինոն տարբեր է, բայց նրա լավագույն ստեղծագործությունները չեն ճանաչում ազգային սահմաններ: Դրանք պատկանում են համայն մարդկությանը: Ասվածը վերաբերում է խոշորագույն բեմադրիչներին՝ իտալացի ***Ֆեդերիկո Ֆելինի***, ռուս ***Անդրեյ Տարկովսկի***, հայ ***Սերգեյ Փարաջանով*** և ուրիշներ:

ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ
(1904–1948)

Հայազգի ամերիկյան նկարիչ: Ծնվել է Վասպուրականի Հայոց ձոր գավառում: 1915 թ. մոր և քույրերի հետ գաղթել է Երևան: 1919 թ. մեկնել է Նյու Յորք: 1925 թ. փոխել է անունը և ազգանունը՝ Գորկի (ռուս.՝ դառը): Մոր կերպարը արվեստագետի համար դարձել է մանկության օրերի ամենակենդանի հուշը: Նրա հայտնի գործերից է «Նկարիչն ու իր մայրը» կտավը:
1930–1940-ական թթ. ստեղծած կտավները նրան համաշխարհային հռչակ են բերել: Գորկին համարվում է արդի գեղանկարչության խոշորագույն դեմքերից մեկը:

Արշիլ Գորկի.
«Նկարիչն ու իր մայրը»

86 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ
(1924–1990)

Կինոռեժիսոր (բեմադրիչ): Ծնվել է Թիֆլիսում, ավարտել տեղական կոնսերվատորիայի վոկալի բաժինը, ապա՝ կինեմատոգրաֆիայի համամիութենական ինստիտուտը: Նրան ճանաչում է բերել «Մոռացված նախնիների ստվերները» ֆիլմը, որն արժանացել է բազմաթիվ մրցանակների:
Սայաթ-Նովայի կյանքին և ստեղծագործությանը նվիրված «Նռան գույնը» կինոնկարը հաստատել է նրա արվեստի յուրօրինակությունը: Նրա ստեղծագործությանը բնորոշ են գեղանկարչական մեծ ճաշակը, մտքի փիլիսոփայական խորությունը:

- *Շարունակում էին ստեղծագործել հայ թատրոնի մեծերը: Նրանց ազդեցությամբ ձևավորվեց թատերական նոր սերունդ՝ Մ. Մկրտչյան, Ս. Սարգսյան: Կինոյում ստեղծագործում էին բեմադրիչներ Ֆ. Դովլաթյանը և Հ. Մալյանը:*

Հեռուստատեսությունը

Մեր դարաշրջանում ***հեռուստատեսությունը*** զուտ տեխնիկական հնարքից ***վերածվել է մշակույթի յուրահատուկ ասպարեզի***: Այն համադրական բովանդակություն ունի, ծրագրերում տեղ ունեն ամենատարբեր հաղորդումներ՝ քաղաքական վերլուծություն, թարմ լուրեր, սպորտ, երաժշտություն, թատրոն, կինո, գիտություն, կրթություն և այլն: Դրանք մեծապես ազդում են մարդկանց գիտակցության և ճաշակի ձևավորման վրա:

Ճարտարապետությունը

Արվեստի այս բնագավառն արդի դարաշրջանում մեծ առաջընթաց է ապրում: Նոր նյութերի օգտագործմամբ հնարավոր է դարձել ստեղծել ճարտարապետական նոր ձևեր: Նախագծվում են բնակելի և առևտրական համալիրներ, մշակույթի կենտրոններ, գրասենյակներ և այլն: Ուշադրություն է դարձվում դրանց ներքին գեղարվեստական հարդարանքին: Կառուցվում են ճանա-

Մարզահամերգային համալիրի շենքը Երևանում

87 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

պարիներ և գետնուղիներ (մետրոպոլիտեն): Այս ամենի շնորհիվ մարդկանց կյանքը դառնում է ավելի հարմարավետ ու հաճելի:

Հարցեր և առաջադրանքներ

1. Նշեք արդի շրջանի գրականության խոշորագույն ներկայացուցիչների:
2. Երաժշտության բնագավառում ինչ ականավոր ստեղծագործողների գիտեք: Երաժշտության ո՞ր ճյուղն էին նրանք ներկայացնում:
3. Ո՞ր ուղղություններն են գերակշռում արդի կերպարվեստում:
4. Ինչ դեր ունեն կինոն և թատրոնը մարդկանց կյանքում:
5. Ձեր կարծիքով ինչ նշանակություն ունի հեռուստատեսությունը մարդկանց կյանքում:
6. Ներկայացրեք ճարտարապետության բնագավառի նորամուծությունները: Արդի ճարտարապետական ինչ կառույց է Ձեզ դուր գալիս, ինչո՞ւ:

Գործնական աշխատանք

Աշխատանքային տետրում ինքնուրույն լրացրեք աղյուսակը:

Բնագավառ	Գործիչներ	Ստեղծագործություններ
Գրականություն		
Երաժշտություն		
Կերպարվեստ		
Թատրոն		
Կինո		

Նոր հասկացություններ, անուններ

Հայնրիխ Բյոլ, Ֆրանսուազ Սագան, Վիլյամ Սարոյան, Ալեքսանդր Սոլժենիցին, Դմիտրի Շոստակովիչ, Բենջամին Բրիթեն, Արամ Խաչատրյան, Խոան Միրո, Մարկ Շագալ, Արշիլ Գորկի, Ֆեդերիկո Ֆելինի, Անդրեյ Տարկովսկի

88 von 99 12.02.2021, 11:37

ԵՐՐՈՐԴ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հետարդյունաբերական հասարակության արդի փուլի գլխավոր առանձնահատկություններից են պետության և շուկայական տնտեսության միջև հավասարակշռման, պետության սոցիալական դերակատարության աճի միտումները: Արևմուտքի երկրների հասարակական կյանքի զարգացման գործում կարևոր դեր են խաղում նաև նախորդ ժամանակաշրջանում ձևավորված քաղաքական, տնտեսական և մշակութային ավանդույթները:

   - *Բնութագրեք հետարդյունաբերական (տեղեկատվական) հասարակությունը: Ձեր կարծիքով ինչ ապագա ունի Եվրամիությունը: Ներկայացրեք Արևմուտքի երկրների զարգացման գլխավոր առանձնահատկություններն արդի փուլում:*

2. ԽՍՀՄ փլուզումից հետո նրա տարածքում առաջացավ Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ): Միջազգային այս կազմավորումը դժվարին ուղի է անցնում: Ակնհայտ ձեռքբերումների կողքին առկա են բազմաթիվ խոչընդոտներ: ԱՊՀ-ի գոյությունը կախված է ոչ միայն նրա շրջանակներում տեղի ունեցող տնտեսական ու քաղաքական գործընթացներից, այլև համաշխարհային զարգացման միտումներից: Ձևավորման պահից այն կանգնեց տնտեսական, քաղաքական և ազգամիջյան լուրջ հիմնախնդիրների առջև:

   - *Ինչ հիմնախնդիրների լուծման առջև էին կանգնել հետխորհրդային հանրապետությունները 1990-ական թթ.: Ռուսաստանի Դաշնությունն արդյոք վերականգնել է գերտերության կարգավիճակը. հիմնավորեք ձեր տեսակետը: ԱՊՀ որ երկրներում են տեղի ունեցել «գունավոր հեղափոխություններ»: Ներկայացրեք Հայաստան—ԱՊՀ հարաբերությունները արդի փուլում:*

3. Սառը պատերազմի ավարտից հետո միջազգային հարաբերություններում տեղի ունեցան որակական փոփոխություններ: ԱՄՆ-ը մնաց միակ գերտերությունը: Ընդլայնվեցին և հզորացան ՆԱՏՕ-ն և ԵՄ-ն, ինչը հանգեցրեց նրանց դերի աննախադեպ աճի: Սակայն ակնհայտ է դարձել, որ բազմաբևեռ աշխարհի ձևավորման միտումը սկսում է գերակշռել:

   - *Ինչո՞ւ հետսառըպատերազմյան շրջանում կտրուկ աճեց ՆԱՏՕ-ի դերը: Ինչ դերակատարություն ունի Եվրամիությունը արդի աշխարհում: Ինչո՞ւ տրոհվեց Հարավսլավիան: Միաբևեռ է աշխարհն այսօր, թե՞ ոչ. հիմնավորեք Ձեր պատասխանը:*

4. Արդի աշխարհին բնորոշ երևույթներից է համաշխարհայնացումը: Այն ունի դրական և բացասական կողմեր: Դա առաջացնում է համաշխարհայնացման հակառակորդների շարժում, որն Արևելքի երկրներում երբեմն ուղեկցվում է ահաբեկչության դրսևորումներով: Ցեղասպանությունը և ահաբեկչությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի աղտոտումը, թրաֆիքինգը, կիբերհանցագործությունը և այլն արդի աշխարհի ամենացավոտ հիմնախնդիրներից են: Պայքարը դրանց դեմ հնարավոր է միայն բոլոր ժողովուրդների համատեղ ջանքերով:

   - *Ինչ է համաշխարհայնացումը: Ավելի շատ դրական, թե՞ բացասական հետևանքներ ունի այն: Թվարկեք մարդկության առջև ծառացած արդի համընդհանուր հիմնախնդիրները և նշեք դրանց լուծման ուղիներ:*

5. Արդի դարաշրջանում գիտությունը դարձել է մարդկության առաջընթացի կարևորագույն գործոններից մեկը: Հիմնարար և հումանիտար գիտություններն էապես փոխել են մարդկության կյանքը: Միաժամանակ նրան կանգնեցրել են մի շարք բարդ հիմնահարցերի առաջ, որոնց լուծումը պահանջում է բոլոր ազգերի համատեղ և նպատակամետ աշխատանք:

   - *Գիտության ո՞ր ճյուղերն են մեծ զարգացում արձանագրել արդի փուլում: Գիտական ինչ նվաճումներ կարող եք նշել, որոնք ներդրվել են մեր կենցաղում: Արդի փուլում ինչ հարցերի պատասխան պետք է տան հումանիտար գիտությունները:*

6. Հետարդյունաբերական դարաշրջանում ավելի բազմազան է դարձել գրականության և արվեստի ստեղծագործական թեմատիկան: Գրականության, երաժշտության, կերպարվեստի, թատրոնի, կինոյի, ճարտարապետության խոշորագույն վարպետները ստեղծել են արժեքներ, որոնք ներկայացնում են նորագույն շրջանի մարդուն, նրա շրջապատը, փոխհարաբերությունները և արժեքային համակարգը:

   - *Գրականության և արվեստի ինչ հայտնի հեղինակների գիտեք. թվարկեք նրանց ստեղծագործություններից: Ներկայացրեք հեռուստատեսության, կինոյի, հեռախոսի, համակարգչի, ժամանցի տարբեր ձևերի տեղն ու դերը մարդու կյանքում: Քննարկեք և պարզեք դրանց օգուտներն ու վնասները:*

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

ԵԶՐԵՐԻ (ՏԵՐՄԻՆՆԵՐԻ) ԲԱՌԱՐԱՆ

Աբստրակցիոնիզմ (վերացականություն) — Նորագույն շրջանի մոդեռնիստական նոր ուղղություն, առաջացել է XX դ. սկզբին: Մեծ տարածում է գտել ամենից առաջ ԱՄՆ–ում՝ հատկապես 1940–1960–ական թթ.: Վերացական նկարչությունը գույների և ձևերի համադրություն է՝ բոլորովին զրկված առարկայությունից:

Ագրեսիա (լատ.՝ հարձակում) — Մի պետության կողմից ուժի անօրինական գործադրումը մեկ այլ պետության տարածքային ամբողջականության կամ անկախության դեմ:

Ազատականացում (լիբերալացում, լատ.՝ ազատ բառից) — Այստեղ՝ պետական վերահսկողության թուլացում կամ վերացում տնտեսական գործունեության տարբեր ձևերի, գների, աշխատավարձի, տարադրամի արժեքի, տոկոսադրույքի չափերի նկատմամբ և այլն:

Ազատ տնտեսական գոտի — Որևէ պետության մեջ առանձնացված տարածք, որտեղ այդ պետության և օտարերկրյա ձեռնարկատերերին ու ներդրողներին ազատորեն թույլատրվում է տնտեսական գործունեություն (արտադրություն, առևտուր, գույքի ձեռքբերում և այլն) ծավալել: Դրա համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ՝ օրենսդրական, հարկային, վարձակալման և այլ արտոնություններ:

Ազգայնականություն (նացիոնալիզմ, լատ. natio «ազգ, ժողովուրդ» բառից) — Գաղափարախոսություն և քաղաքական շարժում: Ազգայնականների համար ազգի բարգավաճումը և բարեկեցությունը գերակայում են մյուս հասարակական խնդիրների նկատմամբ: Փոքր ազգերի համար այն ազգային անվտանգության ապահովման կարևոր միջոց է, ընդդեմ մեծ ազգերի ճնշումների: Ա.–ի հակադիր դրսևորումն է ազգայնամոլությունը, որը սեփական ազգից բացի չի հանդուրժում մյուս ազգերին, այն հետադիմական, ռասիստական և մարդատյաց բնույթ ունի:

Ազգայնացում — Տնտեսության որոշ ճյուղերի, մասնավոր ձեռնարկությունների, հողի և այլ մասնավոր սեփականության վերածումը պետական սեփականության: Դա կարող է կատարվել ունեզրկման, ինչպես նաև լրիվ կամ մասնակի փոխհատուցման ճանապարհով:

«Ազգերի բրիտանական համագործակցություն» — Մեծ Բրիտանիայից և նրա նախկին տիրույթներից՝ բրիտանական գաղութային տերության փլուզման արդյունքում կազմված միջպետական միավորում: Սկսել է ձևավորվել 1947 թ.: Դրա մեջ են մտել նաև նախկին դոմինիոնները: Ընդգրկում է 50–ից ավելի պետություն:

Ազգերի ինքնորոշման իրավունք — Ազգի պետական և իրավական կազմակերպման հարցերն ինքնուրույնաբար տնօրինելու իրավունք: Այն որևէ ազգի համար ենթադրում է՝ 1. տվյալ երկրի սահմաններում տարածքային կամ մշակութային ինքնավարություն, 2. տվյալ երկրից անջատվել և ազգային անկախ պետություն ստեղծել, 3. որևէ պետության (պետությունների) հետ միավորում՝ դաշնության կամ համադաշնության ստեղծում: Որպես քաղաքական և գաղափարական սկզբունք ծագել է XVIII–XIX դդ. առաջին կեսի հեղափոխությունների ժամանակ, իսկ նորագույն շրջանում դարձել է միջազգային իրավունքի կարևորագույն նորմերից մեկը: Ա. ի. ի. իրագործման բնորոշ օրինակ է ազատագրական պայքարի շնորհիվ արցախահայության ստեղծած անկախ պետականությունը՝ Արցախի Հանրապետությունը:

Ամբողջատիրություն (տոտալիտարիզմ, լատ.՝ ամբողջ, լիակատար բառից) — Բռնապետական իշխանության ձև. բնորոշ կողմերն են սահմանադրական իրավունքների և ազատությունների փաստացի վերացումը, հասարակության լիակատար ենթարկումը իշխանության շահերին և համատարած (տոտալ) վերահսկողության հաստատումը բոլորի և ամեն ինչի նկատմամբ, քաղաքական ընդդիմության և այլախոհների հանդեպ բռնարարքների լայնածավալ կիրառումը:

Այլախոհ (դիսիդենտ, լատ.՝ չհամաձայնող) — Այստեղ՝ մարդ, որը համաձայն չէ և պայքարում է իր երկրում տիրապետող գաղափարախոսության դեմ: XX դ. 60–80–ական թթ. այդպես էին անվանում սոցիալիստական երկրների այն քաղաքացիներին, ովքեր բացեիբաց քննադատում էին պետական գաղափարախոսությունը:

Անձի պաշտամունք — Հասարակության, պետության մեջ մեկ մարդու դերի գերագնահատումը, փառաբանումը, կենդանության օրոք նրան պատմական զարգացման ընթացքի

91 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

վրա ուռճացված ազդեցություն վերագրելը: Երևույթը բնորոշ է ամբողջատիրական երկրներին: Հայտնի է Ստալինի, Հիտլերի, Մուսսոլինիի, Մաո Ցզեդունի և այլոց ա. պ.-ն:

Աշխարհաքաղաքացիություն (կոսմոպոլիտիզմ, հուն.՝ աշխարհ և քաղաքացի բառերից) — Գաղափարաքաղաքական հոսանք, որը քարոզում է անտարբեր վերաբերմունք հայրենիքի և իր ժողովրդի հանդեպ, հրաժարում ազգային ավանդույթներից, մշակույթից, ազգային պետությունից կամ ազգային ինքնիշխանության համար պայքարից՝ հանուն ինչ-որ «համաշխարհային պետության» ստեղծման և «համաշխարհային քաղաքացիության» հաստատման:

Արդիականացում (մոդեռնիզացիա, ֆրանս.՝ արդի, ժամանակակից բառից) — Հասարակական կյանքի բոլոր ոլորտների փոփոխություն, կատարելագործում, որը վերջնարդյունքում ապահովում է տվյալ ժամանակի պահանջներին և զարգացման մակարդակին համապատասխան հասարակության ստեղծում:

Արտագաղթ — Մշտական կամ ժամանակավոր բնակության նպատակով հայրենիքից հարկադիր կամ կամավոր հեռանալը մեկ այլ երկիր՝ քաղաքական, տնտեսական, ազգային և այլ պատճառներով:

Բարեփոխում (ռեֆորմ, լատ.՝ վերափոխել բառից) — Հասարակական կյանքի վերափոխություն, փոփոխություն, վերադասավորություն: Որպես կանոն՝ դրանք ունեն առաջադիմական բնույթ:

Բռնապետություն (դիկտատուրա) — Քաղաքական համակարգ, որին բնորոշ են կառավարման ոչ ժողովրդավարական (բռնի, ուժային) մեթոդները: Դրա մի տարատեսակն է պրոլետարիատի դիկտատուրան. ըստ մարքսիստական ուսմունքի՝ բանվոր դասակարգի քաղաքական իշխանությունը, որը հաստատվում է սոցիալիստական հեղափոխության հաղթանակի արդյունքում:

Գաղափարախոսություն — Գաղափարների և հայացքների համակարգ. արտացոլում է հասարակության տարբեր խավերի, խմբերի վերաբերմունքը իրականության հանդեպ, արտահայտում նրանց արմատական շահերը, մտայնությունը և պահանջները:

Գիտատեխնիկական հեղափոխություն (ԳՏՀ) —Գիտության և տեխնիկայի լայնածավալ, թռիչքաձև առաջընթացը, որի արդյունքում գիտությունը, արտադրությունը և հասարակության մյուս ոլորտները որակական մեծ զարգացում են ապրում: ԳՏՀ-ն սկսվել է 1940-ական թթ. և շարունակվում է մինչ օրս: Դրա շնորհիվ էականորեն փոխվեց և շարունակում է փոխվել նորագույն շրջանի հասարակությունը, գերզարգացած երկրները անցում կատարեցին դեպի հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակություն:

Դոմինիոն (անգլ.՝ տիրույթ) — Այդպես էին կոչվում «Ազգերի բրիտանական համագործակցության» անդամ երկրները մինչև 1947 թ.: Դոմինիոններ են եղել նախկին Բրիտանական տերության ինքնակառավարվող որոշ տարածքներ և նախկին գաղութներ: Օրինակ՝ Կանադան (1867 թ.), Ավստրալական Միությունը (1901 թ.), Իռլանդիան (1921 թ.) և այլն: Դրանցում պետության ղեկավար է համարվել Անգլիայի թագավորը: 1931 թ. հռչակվել է դոմինիոնների անկախությունը:

Զանգվածային լրատվության միջոցներ (ԶԼՄ) — Ազգաբնակչությանը ամենատարբեր բնույթի տեղեկատվության հաղորդման համակարգ: Տեղեկատվության հաղորդումն իրականացվում է տպագրական, էլեկտրոնային, տեսաձայնային և այլ միջոցներով (մամուլ, հեռուստատեսություն, ռադիո, համացանց, կինո և այլն):

Ինքնիշխանություն (սուվերենություն) — Պետության անկախ, ինքնուրույն լինելը արտաքին և ներքին գործերում: Ազգային ինքնիշխանություն նշանակում է սոցիալ-քաղաքական կարգի ազատ ընտրության իրավունք, տնտեսական անկախություն և այլն:

Խտրականություն — Քաղաքացիների իրավունքների սահմանափակում կամ զրկում՝ կախված ազգային, ռասայական, կրոնական կամ այլ հատկանիշներից:

Կենսամակարդակ — Երկրի բնակչության բարեկեցության աստիճանը: Դրա ցուցիչներն են աշխատավարձի, հարկերի չափը, նվազագույն սպառողական զամբյուղը, սոցիալական ապահովության ծախսերի չափը և այլն:

92 von 99 12.02.2021, 11:37

Կոալիցիոն կառավարություն (լատ.՝ միանալ, զոդել բառից) — Տարբեր կուսակցությունների միջև կայացած համաձայնության արդյունքում նրանց ներկայացուցիչներից կազմված միացյալ կառավարություն:

Համադաշնություն (կոնֆեդերացիա, լատ.՝ միություն, միավորում) — Համադաշնությունը, որպես կանոն, չի ունենում ընդհանուր սահմանադրություն և միասնական քաղաքացիություն: Քաղաքական, ռազմական և տնտեսական նպատակներին հասնելու համար անդամ պետությունների կողմից ստեղծվում են միացյալ համակարգող մարմիններ:

Համաշխարհայնացում, գլոբալացում (ֆր. գլոբալ՝ համընդհանուր բառից) — Արդի աշխարհի ամբողջական, համակարգված միասնացման գործընթացը: Դա պայմանավորված է համընդհանուր հիմնախնդիրների (բնապահպանական, ժողովրդագրական, տնտեսական, մշակութային և այլն) համատեղ լուծման անհրաժեշտությամբ:

Հեղափոխություն — Հասարակության քաղաքական, սոցիալ–տնտեսական կառուցվածքի և մշակութային կյանքի արմատական, որակական կտրուկ փոփոխություն (հեղաշրջում, բեկում): Որպես կանոն՝ հեղափոխություններն ուղեկցվում են փոփոխություններ իրականացնողների կողմից գործադրվող բռնությամբ և բնակչության զանգվածային ելույթներով:

Հետարդյունաբերական հասարակություն — Քաղաքակրթության արդի փուլին բնորոշ հասարակություն, որը հաջորդել է արդյունաբերական հասարակությանը: Հ. հ. տնտեսության մեջ գերակշռում է գիտելիքահենք և նորարարական հատվածը, իսկ արդյունաբերությունն ունի շատ բարձր արտադրողականություն: ՀՆԱ–ի մեջ գերակշռում է ծառայությունների ոլորտը, բնակչության մեծ մասը զբաղված է հենց այս ոլորտում: Բարձր տեխնոլոգիաների անընդհատ զարգացումը և ներդրումը պահանջում են բարձր որակավորում, պրոֆեսիոնալ կարողունակություններ ունեցող և ստեղծագործ մասնագետներ: Աշխարհում առաջինը ԱՄՆ–ն է անցում կատարել հ. հ.–ին՝ 1960–ական թթ. ավարտին, իսկ մյուս զարգացած երկրները՝ 1970–1980–ական թթ.:

Ձեռնարկատիրություն — Գործունեության տեսակ, որի դեպքում անհատը (ձեռնարկատերը) միջոցներ, կապիտալ է ներդնում որևէ գործի մեջ (արտադրություն, առևտուր և այլն) շահույթ ստանալու նպատակով:

«Ձնհալի շրջան» — Խորհրդային Միության պատմության կարճատև մի շրջան (1954–1964), որը սկսվեց Ի. Ստալինի մահվանից հետո: Տեղի ունեցավ կոմկուսի գաղափարական թելադրանքի թուլացում, քաղաքականության մեջ որոշակի ազատականացում: Անվանումն ստացել է 1954 թ. լույս տեսած Ի. Էրենբուրգի համանուն պատմվածքից:

Մանդատ (լատ.՝ հանձնարարություն) — Այստեղ՝ կառավարման ձև, գաղութային կախվածության տարատեսակ. առաջացել է Առաջին աշխարհամարտից հետո: Ազգերի լիգան մանդատ էր տալիս արևմտյան որևէ զարգացած երկրի՝ Գերմանիայի գաղութները և Օսմանյան կայսրության նախկին ենթակա երկրները կառավարելու համար:

Միասնացում (ինտեգրում, լատ.՝ համաբերում) — Ազգային տնտեսությունների միահյուսման և համաձայնեցված միջպետական սերտ հարաբերությունների հաստատման գործընթաց: Միասնացման օրինակ է նաև համագործակցության այլ ձևերի հաստատումը (ՆԱՏՕ, ԱՊՀ, Եվրամիություն և այլն):

Մշակութային (կուլտուրական) հեղափոխություն — Այս հասկացությունը ներմուծել է Վ. Լենինը՝ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Ռուսաստանի մշակույթի (կուլտուրայի) զարգացման նոր փուլը նշելու համար: Այն սոցիալիզմի կառուցման լենինյան ծրագրի բաղկացուցիչ մասերից էր: Իրականում ծառայեց ղեկավարող բոլշևիկյան կուսակցության շահերին, մշակույթը քաղաքականացվեց: Սակայն տվել է նաև ակնառու նվաճումներ:

Նախագահ (պրեզիդենտ, լատ.՝ առջևում նստողը) — Պետության ընտրովի ղեկավարը:

Նէպ (նոր տնտեսական քաղաքականության ռուսերեն հապավումը) — 1921 թ. Խորհրդային Ռուսաստանում ընդունված քաղաքականություն, որը փոխարինեց ռազմական կոմունիզմի քաղաքականությանը: Մտցվեց պարենային հարկ, թույլատրվեց ապրանքադրամական հարաբերությունների, շուկայի, սեփականության տարբեր ձևերի գոյությունը, օտարերկրյա կապիտալի մուտքը խորհրդային երկրների տնտեսության մեջ և այլն:

Շուկայական տնտեսություն — Տնտեսություն, որը զարգանում է ապրանքային տնտեսության, ապրանքների ու ծառայությունների հանդեպ պահանջարկի և առաջարկի օրենքների հիման վրա:

Չմիացած երկրների շարժում — Կազմակերպություն, որի անդամները իրենց արտաքին քաղաքականության գլխավոր սկզբունքներ են հռչակել պետությունների ռազմաքաղաքական որևէ խմբավորմանը անդամակցելուց հրաժարումը և հավասարության ու արդարության վրա հիմնված նոր աշխարհակարգի ստեղծումը: Ստեղծվել է 1961 թ., այժմ ունի 120 անդամ-պետություն:

Ռազմատուգանք (լատ.՝ կոնտրիբուցիա) — Պատերազմում պարտված երկրի կողմից հաղթող երկրին կատարվող դրամական վճարում: Այժմ միջազգային իրավունքով արգելված է:

Սեփականաշնորհում — Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների սեփականության (հողամասեր, արդյունաբերական ձեռնարկություններ, բանկեր, տրանսպորտի, կապի, զանգվածային լրատվության միջոցներ, շենքեր, բնակարաններ և այլն) վերածելը մասնավոր սեփականության՝ անհատույց կամ վճարի դիմաց:

Սովերային տնտեսություն — Տնտեսական գործունեության այն ոլորտը, որի մասնակիցները գործում են ընդհատակյա կարգով, հաշվառված չեն պաշտոնական վիճակագրության կողմից և խուսափում են հարկեր վճարելուց:

Վերակառուցում (ռուս.՝ պերեստրոյկա) — ԽՍՀՄ-ում 1985-1991 թթ. իրականացված վերափոխումների ընդհանրացված անվանումը: Վերակառուցման հիմնական ուղղություններն էին՝ խորհրդային հասարակության կյանքի համակողմանի ժողովրդավարացումը, արմատական տնտեսական վերափոխումը, արտաքին-քաղաքական ոլորտում՝ միջազգային անվտանգության համապարփակ համակարգի ստեղծումը:

«Տարօրինակ պատերազմ» — Այս տերմինով բնութագրվում է Երկրորդ աշխարհամարտի Արևմտյան ճակատում 1939 թ. սեպտեմբերի 3-ից մինչև 1940 թ. մայիսի 10-ը տիրող իրավիճակը: Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան, պատերազմ հայտարարելով Գերմանիային, ռազմական գործողություններ չմղեցին նրա դեմ, թեև ունեին թվային գերակշռություն:

Ցեղասպանություն (գենոցիդ) — Պետականորեն կազմակերպված, մի ազգի կողմից մեկ այլ ազգի, ընկերային կամ կրոնական խմբի լրիվ (կամ մասնակի) ֆիզիկական ոչնչացումը: Համաձայն ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի բանաձևի՝ ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն է: 1914-1916 թթ. երիտթուրքական կառավարության կազմակերպած հայերի զանգվածային կոտորածները գնահատվել են որպես XX դարի առաջին ցեղասպանություն (հայտնի է Մեծ եղեռն անունով):

Քաղաքակրթություն — 1. Հասարակության նյութական և հոգևոր մշակույթի զարգացման մակարդակ, աստիճան: 2. Մարդկության պատմության այն շրջանը, որը հաջորդել է նախնադարին և շարունակվում է մինչ օրս: Քաղաքակրթության պատմությունը ընդունված է բաժանել երեք փուլի՝ 1) մինչարդյունաբերական (ագրարային), 2) արդյունաբերական և 3) հետարդյունաբերական (տեղեկատվական):

Քաղաքացիական հասարակություն — Եզր, որով բնորոշվում է հասարակության զարգացման որոշակի մակարդակը: Բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առաջ, իրավունք ունեն անձնապես կամ հասարակական կազմակերպությունների միջոցով մասնակցելու պետության կառավարմանը: Բոլոր քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները ամրագրված են երկրի սահմանադրությամբ:

Քաղաքացիական պատերազմ — Երկրի ներսում տարբեր քաղաքական ուժերի, սոցիալական խմբերի միջև զինված պայքարը պետական իշխանության համար:

Քաղաքական վարկանիշ (ռեյտինգ) — Քաղաքական առաջնորդների և կուսակցությունների հեղինակության ու հանրահայտության, ինչպես նաև կոնկրետ քաղաքական իրավիճակում նրանց գործունեության գնահատման անհատական թվային ցուցանիշ:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

ԱՄՓՈՓԻՉ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1914 թ. օգոստոսի 1 – 1918 թ. նոյեմբերի 11 — Առաջին աշխարհամարտը

1939 թ. սեպտեմբերի 1 – 1945 թ. սեպտեմբերի 2 — Երկրորդ աշխարհամարտը

1945 թ. հոկտեմբերի 24 — Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) պաշտոնական գործունեության սկիզբը

1946 թ. մարտի 5 — Չերչիլի ճառն ԱՄՆ–ի Ֆուլտոն քաղաքում՝ սառը պատերազմի սկիզբը

1947 թ. հունիս — Մարշալի պլանի ընդունումը

1947–1964 — Ջ. Ներուն՝ Հնդկաստանի վարչապետ

1948 — Իսրայել պետության կազմավորումը

1949 — Տնտեսական փոխօգնության խորհրդի (ՏՓԽ) ստեղծումը

1949 — Հյուսիսատլանտյան դաշինքի՝ ՆԱՏՕ–ի ստեղծումը

1949 — ԳԴՀ–ի և ԳԺՀ–ի կազմավորումը

1949 — Չինական Ժողովրդական Հանրապետության հռչակումը

1950 — Հնդկաստանի լիակատար անկախության հռչակումը

1952 — Թուրքիայի անդամագրվելը ՆԱՏՕ–ին

1955 — Վարշավյան դաշինքի ստեղծումը

1957 թ. հոկտեմբեր — Խորհրդային Միության կողմից Երկրի առաջին արհեստական արբանյակի արձակումը

1958–1969 — Շ. դը Գոլը՝ Ֆրանսիայի նախագահ

1960 — Աֆրիկայի տարին. 17 երկրների անկախանալը Աֆրիկայում

1961 թ. ապրիլի 12 — Յուրի Գագարինի շուրջերկրյա թռիչքը. առաջին մարդը Տիեզերքում

1961 — «Զմիացած երկրների շարժում» կազմակերպության հիմնադրումը

1961 — Բեռլինի պատի՝ սառը պատերազմի խորհրդանիշի կառուցումը

1964–1973 — Վիետնամական պատերազմը ԱՄՆ–ի մասնակցությամբ

1967 — Եվրոպական համագործակցության կամ ընկերակցության ստեղծումը

1968 — «Պրահայի գարունը»

1975 թ. օգոստոսի 1 — Հելսինկիում 33 եվրոպական պետությունների, ԱՄՆ–ի ու Կանադայի ղեկավարների մասնակցությամբ կայացած՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության (ԵԱՀԽ) կողմից «Եզրափակիչ ակտ»–ի ստորագրումը

1979 — Իրանի Իսլամական Հանրապետության հռչակումը

1985 — Վերակառուցման քաղաքականության սկիզբը ԽՍՀՄ–ում

1988 — Արցախի (Ղարաբաղ) հիմնախնդրի լուծման նորագույն փուլի սկիզբը

1989–1990 — «Թավշյա հեղափոխությունները» Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրներում

1990 — Գերմանիայի վերամիավորումը

95 von 99 12.02.2021, 11:37

Firefox https://ebooks.bonee.net/fumf/cfug/

1990–1998 — Հ. Քոլը՝ միավորված Գերմանիայի առաջին վարչապետ

1991 թ. օգոստոսի 19–21 — Պահպանողական ուժերի խռովությունը Մոսկվայում

1991 — Սոցիալիզմի համաշխարհային համակարգի փլուզումը

1991 թ. դեկտեմբերի 21 — ԱՊՀ կազմավորումը. ԽՍՀՄ–ի փլուզումը

1993 — Եվրոպական Միության հիմնադրումը

2001 — Ռուսաստանի և Չինաստանի կողմից Համագործակցության Շանհայի կազմակերպության հիմնադրումը

2001 թ. սեպտեմբերի 11 — Իսլամական ծայրահեղականների կողմից ինքնաթիռային խոյահարումների իրականացումը Նյու Յորքում

2002 — Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) ստեղծումը

2003 — Իրաքի բռնազավթումը ԱՄՆ–ի և նրա դաշնակիցների կողմից

2003–2005 — «Գունավոր հեղափոխությունները» Վրաստանում, Ուկրաինայում և Ղրղզստանում

2005 — Ա. Մերքելը՝ Գերմանիայի առաջին կին վարչապետ (վերընտրվել է երեք անգամ, վերջինը՝ 2018 թ.)

2008 թ. սեպտեմբեր – 2015 թ. — Համաշխարհային տնտեսական նոր ճգնաժամը

2008 — Կոսովոյի անկախության ճանաչումը մի շարք երկրների կողմից

2009–2017 — Բ. Օբաման՝ առաջին աֆրոամերիկացին, ԱՄՆ–ի նախագահ

2010 թ. դեկտեմբեր – 2011 թ. — «Արաբական գարունը». հեղափոխական շարժումների ալիքը և երկարամյա վարչակարգերի տապալումը արաբական աշխարհում

2014 — Հեղափոխական «Մայդանը» Ուկրաինայում. Ղրիմի երկրորդ միացումը Ռուսաստանին

2015 — ԵԱՏՄ–ի ստեղծումը

2016 — Թ. Մեյը՝ Մեծ Բրիտանիայի երկրորդ կին վարչապետ

2016 — Դ. Թրամփի ընտրվելը ԱՄՆ–ի նախագահ

2017 — Է. Մակրոնը՝ Ֆրանսիայի նախագահ

2018 — Վ. Պուտինի՝ չորրորդ անգամ ընտրվելը Ռուսաստանի նախագահ

2018 թ. ապրիլ–մայիս — Հայաստանի «թավշյա հեղափոխությունը»

96 von 99 12.02.2021, 11:37

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՇԽԱՐՀԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

13. ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԸ 80
14. ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ 85
15. ԽՍՀՄ–Ը 1945–1985 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 90
16. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԻՑ ԴԵՊԻ ՓԼՈՒԶՈՒՄ 95
17. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 101
18. ԵՐՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԸ 107
19. ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ 112
20. ԱՐԴԻԱԿԱՆԱՑԱԾ ԱՐԵՎԵԼՔԸ 118
21. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1945–1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 123

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ 128

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ԱՇԽԱՐՀԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

22. ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ 132
23. ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԸ 138
24. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 144
25. ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 149
26. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 154
27. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ 159

ԵՐՐՈՐԴ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ 164

ԵՋՐԵՐԻ (ՏԵՐՄԻՆՆԵՐԻ) ԲԱՌԱՐԱՆ 166
ԱՄՓՈՓԻՉ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 170

9

ՀԱՄԱՀԱՐԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ԺՐԱՆ

Վաճառքի ենթակա չէ:

9 ՝ 789939 ՝ 687148 ՝

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

www.zangak.am
www.book.am